



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1472

902. № 999.

*

ԴԱՍԱԳԻՐԻՔ ԿՐՕՆԻ

ՔՐԻՍՏՈՆԵԼԿԱՆ ՈՒՂՂՓՐԸՐ ԳՆԻՆՈՒԹԵԼԸՆ ՀՈՅՆԱՏԱՆՆԵՑՑ
ԸՌԵՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

2876

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԵՐԿՐՈՐԴ ԳՐԳՈՅԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՄՍՍԸ

ՆՈՐ-ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Պեսական իգական գիմնագիտմների երկրորդ դասա-
րանի հայ առակերտուհիների համար:

Կ Ա Ջ Մ Ե Ց

ԵԶՆԻԿ ԱԻԱԳ ԳԱՀ. ԵՐԶՆԿԵԱՆՑ

Կրթնության և ուսուցիչ հայոց լեզուի Թիֆլիզի իգական ա. գիմ-
նագիտմի և Վարդուսակի Կորպուս» անուանուած գիմնագրական
դպրոցի:

Գրքն է 30 Կ.



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Վրաց. Հրատ. Բնկ. ||| Типография Груз. Изд. Т—ва.

Большая Ванкокая уа.

1902

2(075)

Ե-84

*

9 PM-X
2876
2(075)

03 AUG 2009
ВАНСКИЙ ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Ե-ՅԿ ԴԱՍԱԴԻՐՔ ԿՐՕՆԻ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌՂՂՔՓԸՌ ԴՅՒՆՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌՆՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵԼԵՑԻՈՑ

ԵՐԿՐՈՐԳ ԳՐՔՈՅԿԻ ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍԸ


ՆՈՐ-ՈՒԽՏԻ Ս. ՊԸՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԻԳԱԿԱՆ ԳԻՄՆԱԳԻՑՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԳ ՂԱՍԱ-
ՐԱՆԻ ԿԱՅ ԱՇԱԿԵՐՏՈՒԿԻՆԵՐԻ ԿԱՄԱՐ:

Կ Ա Ջ Մ Ե Ց

ԵԶՆԻԿ ԱԻԱԳ ԲԱՀ. ԵՐԶՆԿԵԱՆՑ

ԿՐՕՆՈՒՍՈՅԵ և ՈՒՍՈՒՆԵԼԻ ՀԱՅՈՅ ԼԵՂՈՒԻ ԹԻՖԼԻՂԻ ԻԳԱԿԱՆ Ա. ԳԻՄ-
ՆԱԳԻՑՆԻ և «ԿԱՂԵՍԱԿԻ ԿՕՐԱՊՈՒՍ» ԿՕՂՈՒՄԸ ՂԻՆՈՒՐԱԿԱՆ
ՂԱՎՐՈՅԻ:



Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպարան Վրաց. Հրատ. Հնկ. III Типография Груз. Изд. Т—ва.
Большая Ванская ул.

1902

10 APR 2013

1472

AMSTON 80
AMSTON 80
AMSTON 80
AMSTON 80
AMSTON 80

Дозволено цензурою. Тифлисъ, 5 июня 1902 года.



58383-6

№ 766.

Ըստ բարձու հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհա-
փառ Հայրապետի ազդիս Տ. Տ. Մկրտչի, Դիւանս թոյ-
լարէ տպագրութիւն դասագրոյս որ ընդ անուամբս
«Դասագիր Կրօնի» «Նոր ուխտի պատմութիւն» վաւերա-
ցուցանելով ստորագրութեամբ և դրոշմամբ կնքոյ Հայրա-
պետական Դիւանի:

յ30 Մայիսի 1902 ամի Է Ս. Էջմիածին:

Դիւանապետ Կորիւն վարդապետ:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ընդհանրապէս նկատուած է, որ պետական դպրոցներում ուսուցչի պաշտօն ստանձնող արժանապատիւ հայրերը մեծամեծ դժուարութիւնների են հանդիպում՝ չունենալով մի յարմար ձեռնարկ այդ դպրոցների համար: Թէպէտ և կրօնի դասատուութեան համար կան լոյս տեսած բաւակաւին լաւ դասագրքեր, բայց նրանք իրանց ընդարձակ նիւթով և լայն ծաւալով և ոմանք մինչև անգամ իրանց գրաբառախառն լեզուով ու դարձուածքներով, որոնցից միքանիսն ընդունուած են որպէս կրօնի ձեռնարկ պետական դպրոցներում, — անհամապատասխան են այդ դպրոցներին, ուր այդ կարևոր առարկայի աւանդման համար սուղ ժամանակ է տուած և ուր ուսանող սանիկների մի մասն էլ, դժբաղդաբար, շատ տկար է մայրենի լեզուի մէջ:

Նրկարամեայ իմ ուսուցչական փորձերը պետական դպրոցներում՝ բերել են ինձ այն հաստատ համոզման, որ այդ դպրոցների կրօնի դասաւանդութեան համար անհրաժեշտ է կազմել մի այնպիսի դասագիրք, որի մէջ նկատի առնուած լինէին այդ առարկայի աւանդման համար որոշած ժամանակի չափը, աւանդելի նիւթն ու նրա ծաւալը, և որի մէջ ամփոփ կերպով բովանդակուած լինէին ամենագլխաւոր կրօնական գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ամեն մի հայ աշակերտուհու և աշակերտի համար:

Ձեռք զարկելով այս կարևոր գործին՝ ես արդէն պատրաստել եմ պետական իդական միջնակարգ դպրոցների համար կրօնագիրտութեան մի ընդհանուր ձեռնարկ, որի մէջ բոլոր դասա-

րաններում աւանդելի կրօնի նիւթերը—գասընթացները՝ տեղի,
ժամանակի և սանիկների զիտակցութեան համաձայն, որոշուած—
գասաւորուած են և որոնք հետզհետէ պիտի լոյս տեսնեն աւան-
ձին գրքոյկներով:

Սոյն գրքոյկը յիշեալ դպրոցների երկրորդ դասարանների
կրօնի նիւթը—գասընթացն է և կրում է ճնոր ուխտի սուրբ
պատմութիւններ> խորագիրը: Սրա նիւթը բաժանուած է երկու
մասի՝ մինը (I) աշակերտի և միւսնը՝ (II, III) ուսուցչի համար:
Վերջինս (ուսուցիչ) կարող է իր մասն ընդարձակել—լրա-
ցնել՝ նայած ժամանակին և սաների զարգացման:

Այս գործը յաջողութեամբ զլուխ բերելու համար օգ-
տուել եմ առհասարակ առաջնակարգ նշանակութիւն ունեցող
կրօնի դասագրքերից՝ մերթ համառօտելով, մերթ ընդարձակելով
և տեղ-տեղ ևս միջանի կտորներ նոյնութեամբ կամ նմանողու-
թեամբ առաջ բերելով:

Սա՛ իբրև առաջին գործ, անշուշտ կ'ունենայ և իր պա-
կասաւոր կողմերը, որոնց ցոյց կը տայ հետզհետէ ժամանակը,
միայն վստահանում եմ կարծել, որ այսպիսի մի ձեռնարկի
տուած օգուտն անհամեմատ աւելի կը լինի. ուստի հրաւիրում եմ
պետական դպրոցների կրօնուսոյց՝ իմ պատօնակից արժանապա-
տիւ հայրերի ուշադրութիւնը սրա վրայ:

Եզնիկ աւագ Բահանայ Երզնկեանց:

20 դեկտ. 1901 թ.

Թիֆլիզ:

ԲՈՎ Ա Ն Դ Ա ԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ-ՈՒԽՏԻ ՍՈՒՐԲ ՊԱՍՄՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մարիամ սուրբ կոյսի Աւետումը:
2. Քրիստոսի ծնունդը: Բեթղեհէմի հովիւները: Մո-
գերի երկրպագութիւնը:
3. Քրիստոսի քառասնօրեայ տաճար տանելը: Յիսուս
12 տարեկան տաճարում:
4. Յովհաննէս Մկրտչի ծնունդը և քարոզութիւնը:
5. Քրիստոսի մկրտութիւնը:
6. Յիսուսի աշակերտները:
7. Յիսուսի վարդապետութիւնը (լերան քարոզից):
8. Յիսուսի վարդապետութիւնը (լերան քարոզից):
9. Յիսուսի վարդապետութիւնը (լերան քարոզից):
10. Յիսուսի վարդապետութիւնը (լերան քարոզից):
11. Յիսուսի վարդապետութիւնը (լերան քարոզից):
12. Յիսուսի հրաշքների, բժշկութիւնների և ուս-
ման մասին:
13. Ալլակերպութիւն Քրիստոսի:
14. Յիսուսի առակներից—Սերմնացանի առակը:
15. Ողորմած Սամարացու առակը:
16. Ողորմած թագաւորի և չար ծառայի առակը:
17. Անառակ որդու առակը:
18. Մեծատան և Ղազարոսի առակը:
19. Փարիսեցին և մաքսաւորը:
20. Քանքարների առակը:
21. Այգու մշակների առակը:

22. Ղազարոսի յարութիւնը:
23. Ծաղկազարդ—Յիսուս մտնում է Երուսաղէմ:
24. Քրիստոս արտաքսում է վաճառողներին տաճարէց:
25. Վերջին դատաստանի մասին:
26. Խորհրդաւոր ընթրիքը:
27. Յիսուսի աղօթքը Գեթսեմանի պարտէզում:
28. Յիսուսը Կայիափայի և Պիղատոսի առաջ:
29. Յիսուսի խաչելութիւնը:
30. Յիսուսի թաղումը:
31. Յիսուսի յարութիւնը:
32. Յիսուսի համբարձումը: Հոգեգալուստ:

ՆՈՐՈՒՄՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

№ 1.

ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻ ԱՒԵՏՈՒՄԸ

I. Փրկչի ծննդեան ժամանակը հասած լինելով, Քաբրիէլ հրեշտակապետը երևաց ս. կոյս Մարիամին՝ որ բնակվում էր Քալիլիայի Նազարէթ քաղաքում և ասաց. «Ուրախացիր, Մարիամ, Տէրը բեզ հեռ է: Օրհնուած ես Դու կանանց մէջ: Ս. Հոգին կ'իջնի Քո վրայ և Բարձրեալի զօրութիւնը հովանի կը լինի Քեզ: Դու Որդի կ'ունենաս և կ'անուանես Նրան Յիսուս: Նա կը լինի մեծ և Բարձրեալի Որդի կը կոչուի: Աստուած կը տայ Նրան Դաւթի աթոռը և Նրա թագաւորութիւնը վերջ չի ունենալ»: Սուրբ կոյս Մարիամը խոնարհութեամբ պատասխանեց. «Թող Սատու կամքը լինի:»

II. Ո՞վ աւետիք տուեց ս. կոյս Մարիամին: Ո՞ւր էր բնակվում ս. կոյս Մարիամը: Ի՞նչ սասց հրեշտակապետը ս. կոյսին և ի՞նչպէս ընդունուեց:

III. Այս պատմութիւնից մենք իմանում ենք.
1) Աստուած Իր ուխտը լիշում է, որ պէտք է աշխարհ ուղարկէ Իր Միածին Որդուն մարդկանց փրկութեան համար և ընտրում է Իր Որդու մայր աղքատ և համեստ ս. կոյս Մարիամին: 2) Տեսնում ենք ս. կոյս Մարիամի խոնարհութիւնն ու անսահման հաւատը: Նա հաւատում է հրեշտակապետի խօսքին, որ պէտք է մայր լինի Փրկչի: Այսպէս, երբ մարդս հաւատով և սրտով է վերաբերվում որևէ բանի, կարողանում է հեշտութեամբ ստանալ—ձեռք բերել և երբեմն էլ այնպիսի բաներ, որոնք անհնարին են համարվում ամեն մի թերահաւատ մարդու համար: 3) Մենք տեսնում ենք, որ ս. կոյս Մարիամը իր խոնարհութեամբ և երանելի է դառնում բոլոր ազգերի մէջ: Աստուած չէ արժանացնում մի այդպիսի մեծ շնորհքի մտքով ամբարտաւաններին, հզօրներին: Թողնում է անկատար մեծատունների յոյսերը, իսկ բարձրացնում է խոնարհներին և բարութեամբ լցնում քաղցածներին:

№ 2.

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԻԸ ԵՒ ԲԵԹԼԵՀԷՄԻ ՀՈՎԻՒՆԵՐԸ

I. Քրիստոսի ծննդեան ժամանակ Հռովմայեցոց Օգոստոս կայսրը կամեցաւ աշ-

խարհագիր անել: Նա հրամայեց, որ իւրաքանչիւր հրեայ գնայ իւր հայրենի քաղաք և այնտեղ գրել տայ իր ազգանունը:

Յովսէփը (Մարիամ ս. կոյսի նշանածը) և Մարիամը, որ Դաւիթ մարգարէի ցեղիցն էին, գնացին Նազարէթից Բեթղեհէմ: Նրանք քաղաքի մէջ իջևանելու տեղ չգտան և բնակուեցին մի այրի մէջ, որտեղ հովիւները պահում էին իրանց ոչխարները ցուրտ և անձրևային եղանակներին:

Այս այրի մէջ գիշերը ս. կոյս Մարիամը ծնաւ իր Միածին Որդուն: Նա փաթաթեց Նրան խանձարրում և դրաւ մսուրի մէջ:

Նոյն գիշեր Բեթղեհէմի հովիւները պահում էին իրանց ոչխարները դաշտում: Տիրոջ հրեշտակը երևաց նրանց և ասաց. «Մի վախենաք, ես ձեզ աւետում եմ մեծ ուրախութիւն: Դաւիթի քաղաքի մէջ ձեզ համար Փրկիչ ծնաւ: Եւ այս կը լինի ձեզ նշան: Դուք կը գտնէք Մանուկին խանձարրում փաթաթած և մսուրի մէջ դրած»: Այս միջոցին յանկարծ շատ հրեշտակներ

երևացին երկնքում և սկսեցին երգել. «Փառք Աստծուն երկնքում, երկրի վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն:

Երբ հրեշտակները վերացան երկինք, հովիւները գնացին Բեթղեհէմ և, ինչպէս հրեշտակն ասել էր, գտան Մանուկին փաթաթած խանձարրում և դրած մսուրի մէջ: Երկրպագութիւն տուին և յետ դարձան:

Աթ օրից յետոյ Մանուկին անուանեցին Յիսուս:

II. Ո՛րտեղ էին բնակվում Յովսէփը և ս. կոյս Մարիամը: Ի՞նչը ստիպեց նրանց գնալ Բեթղեհէմ, ո՞ւր իջան նրանք և ինչ ժամանակ ծնաւ Յիսուս: Ինչի՞ մէջ փաթաթեց Մանուկին ս. կոյս Մարիամը և ո՞ւր դրաւ, ո՞վքեր և ինչպէս իմացան առաջին անգամ Փրկչի ծնունդը: Ի՞նչ անուն տուին Մանուկին և քանի օրից յետոյ:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) Հռովմայեցոց Օգոստոս կայսրը աշխարհագիր է անում և թոյլ է տալիս, որ այդ կատարուի հրեաների սովորութեան համաձայն, այն է՝ դրուելու իրանց հայրենի քաղաքներում, որովհետեւ երկիւղ է կրում, մի՞ գուցէ ապստամբութիւն և խռովութիւն ծագի հրեաների մէջ: Յովսէփը և ս. կոյս Մարիամը գնում են Գալիլիայի՝ Նազարէթ քաղաքից Բեթղեհէմ—Գալթի քաղաքը, որ 140 վերստաչափ հեռաւորութիւն ունի և այնտեղ

գրվում: 2) Փրկիչը ծնվում է Բեթղեհէմի մի այրում՝ անյայտութեան մէջ, աշխարհի ստեղծագործութիւնից 5508 տարի անցած: Նա չէ ծնվում ո՛չ պալատում և ո՛չ փառաւոր տներում, ինչպէս հրեաներն էին սպասում: Աղքատիկ իջևանն աւելի հաճելի էր Նրան, որ եկել էր աւետարանելու, թէ Աստու առաջ մարդիկ—[Թէ հարուստ և թէ աղքատ հաւասար են: 3) Ծննդեան գիշերը Աստուած հրեշտակների երգով աւետում է, որ մարդկանց մէջ ուրախութիւն կը լինի: Հրեայ ժողովուրդին՝ փոխանակ երկիւղի միջոցով դարձնելու դէպի Աստուած և ճանաչել տալու Նրան, այսուհետեւ սիրով պէտք է լինի: Աստուած սիրով է կամենում վերականգնել ընկած մարդկութիւնը: Նորածին Փրկիչը պէտք է սիրով ներէր մարդկանց մեղքերը և սփոփէր թշուառութիւնները: Նա մարդկանց սրտերի տէրն է և Նրա իշխանութիւնը գերազանցում է բոլոր երկրային իշխանութիւններից: Նա մարդացաւ, որ մեզ աստուածացնէ և սովորեցնէ մեզ այն ճանապարհը, որ տանում է դէպի երկինք: Ո՛վ իր սրտի ղեկավարութիւնը կը յանձնէ Փրկչին, նա կըստանայ ներքին խաղաղութիւն, որ հալածում է սրտից խաւարը և հանում ապականուած կեանքից: Ծննդեան տօնը մեզ համար մեծ ուրախութիւն է, որովհետեւ դրանով մենք ստանում ենք մեծ պարգև— Փրկիչ: Բարի քրիստոնեան միայն այդ պէտք է նկատի ունենայ և ուրախանայ. բայց պէտք է նաև իմանայ, որ Աստուած հայրական սէրը և Փրկչի ծնունդը մեզ չի փրկիլ և երջանիկ դարձնիլ, եթէ ինքներս էլ մեր կողմից չաշխատենք մեզ փրկելու: Մենք պէտք է հաւատանք սրտով Փրկչին, սովորենք Նրանից խոնարհութիւն, ունենանք Նրան մեր մէջ և նմանեցնենք մեր սրտերը

Նրա մաքուր սրտին. ուրիշ խօսքով՝ պէտք է աշխատենք, որ Փրկիչը մեր մէջ էլ ծնուի, որին ապացոյց պէտք է լինին մեր մտածմունքներն ու գործերը:

№ 3.

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՌԱՍՆՈՐԵՍՅ ՏԱՃԱՐ ՏԱՆԵԼԸ

I. Մովսէս մարգարէի օրէնքով հրեաներն իրանց արդրանիկ արու զաւակներին՝ ծննդից քառասուն օր անցած, տանում էին Երուսաղէմի տաճարը՝ Տիրոջը ներկայացնելու: Այս պարտաւորութիւնը կատարելիս՝ նրանք տանում էին և զոհ՝ հարուստները արջառ կամ գառը, իսկ աղքատները—մի զոյգ տատրակ կամ աղանի:

Երբ Յիսուս քառասուն օրական դարձաւ, ս. կոյս Մարիամը և Յովսէփը Նրան տարան Երուսաղէմի տաճարը: Նրանք վերցրին զոհի համար մի զոյգ աղանի:

Այդ միջոցին Երուսաղէմում կենում էր մի ծերունի մարդ Սիմէօն անունով: Սուրբ Հոգին նրան յայտնել էր, որ չի մեռնիլ մինչև Օծեալին չտեսնի: Երբ Մանուկին բերին տաճար, Սիմէօն ս. Հոգւով իմացաւ:

Նա զուրս եկաւ Նրա առաջ, գիրկն առաւ, փառք տուեց Աստծուն և ասաց. «Տէր, այժմ Քո խօսքիդ համեմատ արձակիր Քո ծառայիդ, որովհետև իմ աչքերը տեսան Փրկչին, Որին պատրաստեցիր ժողովուրդի համար:» Յովսէփը և ս. կոյս Մարիամը զարմանում էին այդ խօսքերի վրայ: Տաճարում կար և մի մարգարէուհի՝ Աննա անունով: Սա էլ փառաբանում էր Աստծուն և ամենքին ասում, թէ այս Մանուկը խոստացեալ Մեսիան է:

II. Ի՞նչ օրէնք էր սահմանել Մովսէս մարգարէն անդրանիկ արու զաւակների համար: Ի՞նչ զոհ էին տանում: Ս. կոյս Մարիամը ի՞նչ զոհ տարաւ: Ո՞վ իմացաւ, թէ Յիսուսին տաճար են բերել: Ի՞նչ ասաց Սիմէօնն Աստծու Որդու մասին: Ի՞նչ էր խօսում Աննան:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Մովսէս մարգարէն իր ժողովուրդի համար մի ծէս է սահմանել, որ կատարելու համար ամեն արու անդրանիկ զաւակի մայր, ուր և լինէր՝ հեռու թէ մօտիկ, պէտք է գնար Երուսաղէմի տաճարը և զոհ մատուցանէր Աստծուն՝ հարուստը միամեայ գառը կամ արջառ, իսկ աղքատը՝ մի զոյգ տատրակ կամ աղանի: Այս ծէսը կատարող մայրը քառասուն օր տանից դուրս

չէր գալիս, իսկ քառասներորդ օրը գնալով Երուսաղէմի տաճար սրբվում էր և մանուկին նուիրում Աստուծո՛ւ՝ որոշեալ տուրքը տալով տաճարին: Այս ուխտագնացութիւնը խստիւ պահանջում էր իսրայէլացիներէն՝ թէ իբրև վկայութիւն նրանց հաւատի գէպի Աստուած և թէ իբրև յիշատակ իսրայէլացիների անդրանիկների ազատութեան՝ եգիպտացոց անդրանիկների սատակման ժամանակ: Ընծայելուց յետոյ մանուկները համարվում էին Աստուծու սեպհականութիւն, ուստի ծնողներն ըստ օրինի պարտաւոր էին լետ գնելու որոշեալ տուրքով և զոհով: 2) Մենք տեսնում ենք ծերունի Սիմէօնին իբրև ներկայացուցիչ իսրայէլեան ժողովուրդի և նրա հաստատ հաւատն ու սրտի ցանկութիւնը, որ իսրայէլացիներն ու հեթանոսները արդարև պէտք է փրկուեն: Նա Փրկչին՝ հեթանոսների լոյս, իսկ իսրայէլացիներին՝ փառք էր անուանում:

№ 4.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԷ, ԱՆԱՊԱՏՈՒՄ ԲՆԱԿՈՒԵԼԸ ԵՒ ՔԱՐՈՋՈՒԹԻՒՆԸ

I. Փրկչի ծննդեան ժամանակ Յուդայի մի փոքրիկ բաբարում բնակվում էին երկու բարեպաշտ ամուսիններ՝ Չաբարիա և Եղիսաբէթ: Նրանք հասել էին խորին ծերութեան և զաւակ չունէին: Չաբարիան բահանայ էր: Մի անգամ երբ Չաբարիան

խնկարկում էր տաճարում, երևաց նրան Գաբրիէլ հրեշտակապետը և յայտնեց, որ նրա աղօթքը լսելի եղաւ: Նա կ'ունենայ որդի, որին կ'անուանէ Յովհաննէս: Նա կրատանայ ս. Հոգու շնորհք և կը պատրաստէ մարդկանց սրտերը՝ Փրկչին ընդունելու. նա կըլինի Նրա կարապետ: Չաբարիան չհաւատաց հրեշտակապետի խօսքին և պատժուեց—նա դարձաւ համր:

Որոշեալ ժամանակին կատարուեց հրեշտակապետի խօսքը և Եղիսաբէթը որդի ունեցաւ, որին անուանեցին Յովհաննէս: Մանկութեան հասակից Յովհաննէսն ապրում էր անապատում: Նրա կերակուրը մարախ էր և վայրենի մեղր. ունէր հազին ուղտի բըրդից շորեր և մէջքին կաշէ գօտի:

Երեսուն տարեկան հասակից նա սկսեց բարոզել Յորդանանի կողմերում, թէ շուտով յայտնուելու է Քրիստոս: Ամեն կողմից ժողովրդի մեծ բազմութիւն էր գնում լսելու նրա բարոզը: Նա հրաւիրում էր գէպի ապաշխարովթիւն և տալիս էր ամենքին աւանձին խրատներ...: Նա ասում էր. «Ո՛վ

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

2339-6

ՄԵՏԼԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZSUQ-ADM GCP

երկու հանդերձ ունի, մէկը պէտք է տայ չունեցողին, ով երկու կերակուր ունի, թող նոյնպէս անէ»: Քալիս էին նրա մօտ մաքսաւորները և ասում. «Մենք ի՞նչ պէտք է անենք»: Յովհաննէսը պատասխանում էր. — Դուք օրէնքով հրամայածից աւելի չպահանջէք:— Հարցնում էին և զինուորները. «Մենք ի՞նչ պէտք է անենք»:— Դուք էլ ոչ ոքի չզգարտէք և ոչ ոքի չզգարտէք. բաւականացէք ձեր թոշակով—պատասխանում էր Յովհաննէսը: Իսկ որոնք խոստովանում և զղջում էին իրանց մեղքերը, Յովհաննէսը մկրտում էր նրանց Յորդանան գետի մէջ:

II. Ե՛րբ երևաց աշխարհում Յիսուսի կարապետը, Ռ՛վքեր էին նրա ծնողները և ո՛ւր էին բնակվում: Ի՞նչ պաշտօն ունէր Ջաքարիան: Ռ՛վ յայտնեց որդի ունենալու մասին և ի՞նչպէս ո՛ւր գնաց Յովհաննէսը բնակուելու և ի՞նչպիսի կեանք էր վարում: Ի՞նչ էր քարոզում նա: Ի՞նչ խրատներ էր տալիս ժողովրդին, մաքսաւորներին և զինուորներին: Ի՞նչ էր անում Յովհաննէսը նրանց, որոնք խոստովանում և զղջում էին իրանց մեղքերը:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ բարեպաշտ Ջաքարիան և Եղիսաբէթը, որոնք այլևս չէին սպասում իրանց սրտի ցանկութեան կա-

տարուելուն—որդի ունենալու, յանկարծ տաճարի մէջ աւետիք են ստանում հրեշտակապետի բերանով, թէ նրանք որդի կ'ունենան: Ջաքարիան իր թերահաւատութեան համար պատժվում է՝ պապանձուելով մինչև աւետման կատարուելը: Աստուած վերացնում է նրանցից անորդի լինելու նախատինքը: Կատարվում է և մարգարէների այն գուշակութիւնը, թէ Մեսիայից առաջ պէտք է գայ Նրա կարապետը, որ պարաստէ մարդկանց սրտերը՝ ընդունելու Նրան: 2) Մենք տեսնում ենք, որ Յովհաննէսը մանուկ հասակում հեռանում է աշխարհից և ապրում է անապատում՝ վարելով պարզ կեանք: Նա կամենում է հեռու լինել շուայ կեանքից և մեղաւոր մարդկանց գայթակղութիւններից և անվրդով աղօթել, մտածել, թէ ի՞նչ միջոցներով կարելի է Աստծու համար ժողովուրդ պատրաստել և թէ ի՞նչ ձևով՝ յանցաւորներին ճշմարտութեան ճանապարհին կանգնացնել: Նրա ճշմարտասիրութիւնն ու անձնուրացութիւնը ամենին զարմացրել էր: Յովհաննէսն անապատի քարոզիչ էր. նա իր յորդորներով, յանդիմանութիւններով և սուր նկատողութիւններով աշխատում էր բարելաւել աշխարհը և նրանով վերականգնել երկնից արքայութիւնը: Նա պարսաւում էր մարդկանց յանցանքները, յորդորում էր, որ ապաշխարութեամբ մաքրեն իրանց սրտերը—հոգիները և այդպիսով արժանի լինին՝ Քրիստոսին ընդունելու: Նա մարդկանց նմանեցնում էր պտղաւէտ ծառին, որ եթէ պտուղ չէ բերում, կտրում են: Այնպէս էլ, եթէ մարդ բարի գործ չանէ, կը պատժուի: Պատւիրում էր օգնել մերձաւորներին իրանց կարողութեան չափով: Նա զգուշացնում, կարգի էր հրաւիրում մաքսաւորներին ու զինուորներին, որ նրանք թողնեն իրանց պակասութիւն-

ները. նա քարոզում էր չափաւորութիւն: Վերջապէս Յովհաննէսը կամենում էր բարին — երկնքի արքայութիւնը — մարդկանց սրտերի մէջ սերմանել, որոնք լի էին չարութիւնով, նախանձով և կեղծ փառասիրութիւնով: Նա աշխատում էր այդ չարը հանել նրանց սրտերից խոստովանութեամբ, զղջումով և ապաշխարութեամբ:

№ 5.

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

I. Երբ Յիսուս երեսուն տարեկան դարձաւ, Քալիլիայից եկաւ Հրէաստան Յովհաննէսի մօտ՝ նրանից մկրտուելու Յորդանան գետում: Բայց Յովհաննէսն արգելեց Նրան և ասաց. «Ես պէտք է Քեզանից մկրտուեմ, Դու ինձ մօտ ես գալիս»: Յիսուս պատասխանեց. «Թո՛ղլ տուր, որովհետեւ այսպէս պէտք է կատարել ամեն արդարութիւն»: Այն ժամանակ Յովհաննէսը թո՛ղլ տուեց:

Երբ Յիսուս դուրս եկաւ ջրից, երկինքը բացուեց և ս. Հոգին աղանակերպ իջաւ Նրա վրայ: Երկնքից էլ ձայն լսուեց, թէ «Դա է իմ սիրելի Արդին, Արին Ես հաւանեցի:»

Մկրտութիւնից յետոյ Յիսուս զնաց անապատ տեղ և քառասուն օր ու քառասուն գիշեր անցկացրեց աղօթքով և պահքով: Այստեղ Նա պատրաստուեց սկսելու մարդկային ազգի փրկութեան մեծ գործը: Այս ժամանակ Նա փորձութիւնների հանդիպեց. բայց Աստծու խօսքով յաղթեց նրանց:

II. Յիսուս ինչո՞ւ եկաւ Յովհաննէսի մօտ. Ի՞նչ ասաց Յովհաննէսը և Յիսուս ի՞նչ պատասխանեց: Քանի տարեկան էր Յիսուս, երբ մկրտուեց: Մկրտութիւնից յետոյ ո՞ր զնաց Յիսուս: Քանի օր մնաց այնտեղ և ինչպէս դուրս եկաւ փորձութիւնից:

III. Այս պատմութիւնից մենք իմանում ենք. 1) որ Յիսուս Ինքն էլ կամենում է «բոլոր արդարութիւնները լրացնել», այն է՝ կամենում է կատարել այն ամենը, ինչ որ արդարացի է, ինչ որ կատարուելու է, և Քալիլիայից գալիս է Հրէաստան մարդարէի մօտ՝ մկրտուելու նրանից: Յովհաննէսը զգալով իր անարժան լինելը այդ բանին, հրաժարվում է. բայց Յիսուս պատասխանում է, որ նա ուղարկուած է Աստծուց և պէտք է բոլորին մկրտէ, և Ինքն էլ իբրև Աստծու հրամանին հնազանդ՝ նոյնպէս պէտք է մկրտուի նրանից: 2) Մենք տեսնում ենք, որ մկրտութիւնից յետոյ Յիսուս սկսում է Իր յայտնի ծառայութիւնը մարդկային ազգի փրկութեան համար: Թագաւորներն ու քահանայապետները կոչուելով պաշտօնի՝ նախապէս օժիվում էին իւզով, իսկ

Յիսուս՝ ինչպէս թագաւորների թագաւոր, ամենամեծ քահանայապետ և գերագոյն մարգարէ՝ օձվում է սուրբ Հոգևով: 3) Յիսուս մկրտվում է ինչպէս և ամեն մի խրայելացի, այդպէս էր Աստծու կամքը: Բայց Յիսուսի մկրտութիւնը ոչ ապաշխարութեան և ոչ մաքրութեան մկրտութիւն էր, այլ դրանով Նա կամենում էր լալտնել, որ Ինքը մաքուր է և կամենում է մաքուր մնալ: Յիսուս Իր մկրտութեամբ սրբում է ջուրը, որից յետոյ պիտի մաքրուէր մարդկային ապականեալ բնութիւնը հին մեղքերից: Մկրտութեամբ քրիստոնեան վերստին ծնվում, նորոգվում է ս. Հոգևով և դառնում է Յիսուսի զինուոր, իսկ երկնաւոր Հօր՝ որդեգիր: Նա ունի և այն խորհուրդը, որ քրիստոնեան հանդիսաւոր կերպով խոստանում է իր նոր կեանքի սկզբում՝ բարեպաշտ և վայելուչ կեանք վարել ապագայում: 4) Մենք տեսնում ենք, որ մկրտութիւնից յետոյ բացվում է փակուած երկինքը: Յիսուս պատառում է երկնքի ու երկրի մէջ եղած անջրպետը—մեղքը, յանցանքը, որ բաժանում էր մարդկանց երկնքից, ուր բնակվում են արդարները: Նա բաց է անում երկինքը նրանց համար, որոնք հաւատում են Իրան և սիրում: Նրա միակ ջանքն ու ցանկութիւնն այն էր, որ Աստուածանից հեռացած մարդիկ կրկին մօտենան Նրան: Նա դառնում է միջնորդ Աստծու և մարդկանց մէջ: Յիսուս մկրտվում է երեսուն տարեկան հասակում, որովհետև հրէից օրէնքով այդ հասակից յետոյ էր մարդ չափահաս համարվում: 5) Մենք տեսնում ենք, որ Յիսուսի մկրտութեան ժամանակ երևում է ամենասուրբ Երրորդութեան և մի Աստուածութեան սքանչելի խորհուրդը, որին ամեն մի քրիստոնեայ հաւատոյ հեղութեամբ պարտաւոր է ըն-

դունել: Միածին Որդին մկրտվում է, սուրբ Հոգին իջնում է, իսկ երկնաւոր Հայրը՝ վկայում, թէ Նա է Իր սիրելի Որդին:

№ 6.

ՅԻՍՈՒՍԻ ԱՇՍԿԵՐՏՆԵՐԸ

1. Յիսուս մկրտութիւնից յետոյ կրկին եկաւ Յորդանանի կողմերը: Յովհաննէսը տեսնելով Նրան՝ ասաց ժողովրդին. «Ահա Աստծու Քառը, Որ պէտք է զոհուի մարդկային ազգի փրկութեան համար: Ես տեսայ Աստծու Հոգին. թէ ինչպէս իջաւ երկնքից և բնակուեց Նրանում: Ես վկայում եմ, որ Սա է Աստծու Որդին»:

Յովհաննէսի երկու աշակերտները—Անդրէաս և Յովհաննէս՝ լսելով այս վկայութիւնը, իսկոյն հետևեցին Յիսուսին: Յետոյ Անդրէասը գտաւ իր եղբայր Սիմոնին և ասաց նրան. «Մենք գտանք Մեսիային», և բերաւ Յիսուսի մօտ: Յիսուս Սիմոնին անուանեց Պետրոս, որ նշանակում է քար:

Յիսուս Քալիլիա զնալիս ճանապարհին կանչեց Փիլիպոսին և ասաց. «Արի իմ յե-

տւելից:» Նա էլ բերաւ Յիսուսի մօտ Նաթանայէլին, որ Բարդուղիմէոս կոչուեց: Նաթանայէլը տեսաւ, որ Յիսուսը գիտէ իր ծածուկ մտածմունքները, հաւատաց և ընդունեց Նրան ինչպէս Ասածու Որդի և Իսրայէլի Թագաւոր:

Այսպէս Յիսուսի աշակերտների թիւը սկսեց օրէցօր աւելանալ: Նա մշտական Իրան լսող հաւատացեալներից ընտրեց 12 հոգի, որոնց և առաքեալներ անուանեց: Դրանց անուններն էին Սիմոն—Պետրոս, Սրա եղբայր Անդրէաս, Զեբեդիայի որդիք—Յակովբոս և Յովհաննէս, Փիլիպոս, Նաթանայէլ (Բարդուղիմէոս), Թովմաս, Մատթէոս մաքսաւոր, Յակովբոս Ալփեան և Յուդայ (Թադէոս), Սիմոն Կանանացի և Յուդայ Իսկարիովտացի:

Յիսուս բացի 12 առաքեալից ունէր և 72 աշակերտ, որոնց երկու-երկու ուղարկում էր քարոզելու այն քաղաքներում ու գիւղերում, ուր Ինքը գնալու էր:

II. Ո՞ւր եկաւ Յիսուս մկրտութիւնից յետոյ: Ո՞վ տեսաւ Նրան և ինչ վկայութիւն տուաւ Ո՞վքեր հետեւեցին Յիսուսին:

Ո՞րոնք էին Յիսուսի գլխաւոր աշակերտները և ինչ անուանեց նրանց: Բացի 12 առաքեալից էլի որքան աշակերտ ունէր Յիսուս:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ Յիսուս Յովհաննէսի նման չէ ընակվում անապատում, այլ շարունակ շրջում է ամեն տեղ և քարոզում է ապաշխարել և հաւատալ Աւետարանին: Նա Իրան գործակիցներ է ընտրում ոչ ուսեալ, գիտուն և հարուստ, այլ հասարակ մարդիկ—ձկնորսներ: Սրանք սիրով թողնում են ամեն ինչ—հայր, մայր, եղբայր, քույր, որդիք, կին, բարեկամներ և հետևում են Նրան: Այդ մարդիկ (աշակերտները) միշտ լինում են Նրա մօտ և Նրա փրկարար վարդապետութիւնը—ուսումը լսում, սովորում են, որ յետոյ իրանք էլ գնան և ուսուցանեն ուրիշներին—մարդիկ որսան արքայութեան համար: 2) Մենք տեսնում ենք, որ Քրիստոս ապրում էր մի որոշ երկրում—Հրէաստանում, մի որոշ ժողովրդի մէջ, բայց Նա պատկանում էր ամենին, ուստի և հարկաւոր էր համարում քարոզել և տարածել Աւետարանը հեռաւոր երկրներում, ուրիշ ազգերի—հեթանոսների մէջ: Սրա համար էլ Նա Իր աշակերտներին անուանում է առաքեալներ—ուղարկուածներ և ընտրում է ժողովրդի միջից, որոնց պաշտօնը պէտք է լինէր քարոզել և տարածել Նրա ուսումը ամեն տեղ: Նա Իր աշակերտներին սիրում է, եղբայր, բարեկամ, ընկեր է անուանում նրանց և ուղարկելով քարոզչութեան, խորհուրդներ է տալիս՝ լաւ ըմբռնել քարոզչական վսեմ կոչումը և իրանց ստանձնած պաշտօնի ծանրութիւնը: Ուսուցանում է, ցոյց է տալի օրինակով ժողովրդի հետ վարուելու չափն

ու կանոնները, որից երևում է, որ Նա ճանաչում է մարդկային սրտի խորքը: Եւ ինչին մարդիկ սովորաբար նշանակութիւն են տալիս, Յիսուս բոլորովին ուշք չէ դարձնում, այն է՝ հարստութեան, բարձր դիրքի վրայ և այլն: Այլ Նա իր աշակերտներից պահանջում է ունենալ մաքուր սիրտ և կտտարեալ վճռականութիւն՝ երկրիս վրայ Աստծու արքայութիւնը հիմնելու գործում: Նա իր աշակերտներին անուանում է երկրի աղ և աշխարհի լոյս, որոնք պէտք է կեանքի մէջ համեմեն ամեն ինչ և լուսաւորեն ժողովրդի խաւար մտքերը:

№ 7.

ՅԻՍՈՒՍԻ ՎՍՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԵՑ

ԼԵՐԱՆ ԲԱՐՈՂ

I. Մի անգամ Յիսուս տեսնելով իր շուրջը ժողովրդի մեծ բազմութիւն՝ բարձրացաւ լեռը և նստեց իր աշակերտներով: Ժողովուրդն էլ տեղաւորուեց Նրա շուրջը լեռան զառիվայրում և խորին լուսթեամբ սպասում էր Նրա քարոզին: Նա բացեց բերանը և սկսեց խօսել.

I. Երանի՛ հոգևով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը:

- II. Երանի՛ սգաւորներին, որովհետեւ նրանք կը մխիթարուեն:
- III. Երանի՛ հեզերին, որովհետեւ նրանք կը ժառանգեն երկիրը:
- IV. Երանի՛ նրանց, որոնք բաղցած և ծարաւ են արդարութեան համար, նրանք կը կշտանան:
- V. Երանի՛ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմութիւն կը գտնեն:
- VI. Երանի՛ նրանց, որոնք սրտով սուրբ են, որովհետեւ նրանք Աստուած կը տեսնեն:
- VII. Երանի՛ խաղաղութիւն անողներին, որովհետեւ Աստծու որդիք կը կոչուեն:
- VIII. Երանի՛ նրանց, որոնք հալածուած են արդարութեան համար, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը:
- IX. Երանի՛ է ձեզ, երբ կը նախատեն և կը հալածեն... ցնծացէք և ուրախացէք, որովհետեւ ձեր վարձը շատ է երկնքումը:

II. Ի՞նչպէս է կոչվում այս քարոզը և ինչո՞ւ: Ի՞նչ երանութիւններ տուեց Փրկիչ իր հաւատացողներին և քանի է նրանց թիւը:

III. Այս քարոզից մենք տեսնում ենք. 1) որ Փրկիչը համառօտ կերպով ներկայացնում է մեզ քրիստոնէական ուսման վարդապետութեան—բարոյական հիմունքները, աւելի ճիշտն ասած՝ Աստուարքայութեան հիմնական օրէնքները: Նա այս հիմնական օրէնքների խորհրդածութեան ժամանակ մեզ ներկայացնում է քրիստոնէութիւնը՝ որպէս հակապատկեր հրէութեան, իր աշակերտներին—փարիսեցուցութեան, իսկ իրան—Մովսէսին և նրա օրէնստուութեան: Մովսէս տալիս է երկիւղ, իսկ Քրիստոս՝ օրհնութիւն: Առաջինը՝ պատիժ, Երկրորդը՝ շնորհք: Մովսէս տալիս է օրէնքներ և նրանով սէր պահանջում, իսկ Քրիստոս՝ Աւետարանը, որ ինքն ըստ ինքեան սէր է: Նա արտաքին օրինապահութիւն է պահանջում, իսկ Սա՛ ներքին բարոյականութիւն: Մովսէս նզովքներ, անէծքներ է լայտնում, իսկ Քրիստոս՝ երանութիւններ, մէկը Սինայից, Միւսը՝ երանութեան սարից: 2) Հոգւով աղբաւ չէ նշանակում մտաւոր, հոգեկան պակասութիւն ունեցող, լիմար անձն, այլ այնպիսին, որի մէջ մեծամտութիւն, հպարտութիւն չկայ: Փարիսեցիք կարծում էին, թէ իրանք ամենից հարուստ են առաքինութեամբ: Նրանք իրանց հոգւով հարուստ էին կարծում, չիմանալով, որ հէնց իրանց հպարտութեան և մեծամտութեան մէջ է կայանում իրանց կործանումը: Հոգւով աղքատը նա է, ով զգում է, որ ինքն աղքատ է արդարութեամբ, առաքինութեամբ և փոքր—աղքատ ծառայութիւններ ու-

նի մատուցած Աստուծուն: Հէնց այսպիսի զգացմանց—խոստովանութեան և հեղուցեան մէջ է հանգչում մարդու փրկութիւնը: Եւ ո՞վ կամենում է երկնքի արքայութիւնը գնալ, նա պէտք է անցնի այն դռնից, որ կոչվում է հոգեկան աղքատութիւն: 3) Երանի՛ սգաւորներին՝ ասելով՝ Փրկիչը տալիս է երանութիւն այն քրիստոնեաներին, որոնք տրտմում, նեղանում և լաց են լինում իրանց մեղքերի համար: Սրանց վարձատրութիւնն այն միսիթարութիւնն է, որ Աստուած տալիս է՝ ներելով նրանց մեղքերը: 4) Երանի՛ հեղեթին, նրանք են, որոնք հեղութեամբ և առանց արտուշե են ընդունում Աստուածանից ուղարկած ամեն ինչ: Հեղութեամբ ամեն ինչ կարելի է ձեռք բերել: Հեղութիւնն ամենից հեշտ կարողանում է սանձահարել հակառակորդի բարկութիւնն ու կատաղութիւնը: Չճմարիտ հեղութիւնը ազնիւ մարդկանց հոգու վեհութեան և վստմութեան նշանն է: Նա հանգիստ, խաղաղ և անվրդով է, երբ ուրիշներն անհանգիստ են անում իրան, լուզում և խռովում: Նա վրէժխնդիր չէ լինում և երբէք չէ տրտնջում Աստուծո գործերի դէմ, այլ խոնարհ և հնազանդ սրտով ասում է. «Կամք Տեառն օրհնեալ եղիցի»: 5) Երանի՛, որովք քաղցած եւ ծարաւ են արդարութեան համար. դրանք այն մարդիկն են, որոնք ձգտում են և ջերմ ցանկութիւն ունին դէպի արդարութիւն, ինչպէս քաղցածը դէպի հացը և ծարաւը դէպի ջուրը, որ իրանց մտածածն ու գործածն ընդունելի լինի Աստուծուն: Այսպիսիների վարձատրութիւնն այն է, որ նրանք կը կշտանան—կը հասնեն իրանց նպատակին: 6) Երանի՛ ողորմածներին, նրանք են, որոնք գթասիրտ են դէպի թշուառները, աղքատները և կա-

րիք ունեցողները: Աստծու ողորմութիւնն զգալու և հասկանալու համար ամենագեղեցիկ միջոցն այն է, որ մենք սղորմած լինինք: 7) Վեցերորդ երանութիւնը Փրկիչը տալիս է նրանց, որոնք սրտով սուրբ են, մաքուր սիրտ ունին և սրանով տեսնում են Աստծուն: Ողորմած մարդու սիրտն ազատ է լինում անմաքուր ցանկութիւններից, նախանձից, չարախնդութիւնից, ատելութիւնից և մեծամտութիւնից: Ո՛վ մաքուր սիրտ ունի, նա երջանիկ է զգում իրան վշտերի և նեղութիւնների մէջ և հարուստ՝ աղքատութեան մէջ: Այգպիսիներին ուրիշ վարձատրութիւն չէր կարող տալ Փրկիչը, քան այն, ինչ որ խոստացել է: Ինչպէս աչքով ընդթեան իրերն ենք տեսնում, այնպէս էլ մաքուր սրտով Աստծուն ենք ճանաչում: Ո՛րքան մարդու սիրտը չար է, այնքան Աստուած հեռու է նրանից և ընդհակառակը՝ ո՛րքան մաքուր է սիրտը, այնքան էլ մօտիկ է Աստուած, որ ընակվում է միշտ մաքուր սրտերի մէջ: 8) Եօթներորդ երանութիւնը խաղաղաբարեբան է, որոնք ունին խաղաղասէր սիրտ: Այգպիսիները կոչվում են Աստծու որդիք: Ուր Աստուած է, այնտեղ խաղաղութիւն է. խաղաղութիւն սրտի մէջ, տան մէջ, ընկերութեան և երկրի մէջ: Ո՛վ Աստուածային խաղաղութիւն ունի սրտի մէջ, նշանակում է, նա հասել է երանութեան: 9) Ութերորդ երանութիւնը տալիս է նրանց, որոնք հալածուած են արդարութեան համար: Վշտի ձեռքով պէտք է ուրախութեան հասնել, ինչպէս գիշերուալ միջոցով հասնում ենք առաւօտեան: 10) Իններորդ երանութիւնը Փրկիչը տալիս է Իր աշակերտներին, երբ նրանց հալածեն ու նեղեն...: Սրտով էլ Փրկիչը վերջացնում է Իր երանիները, որոնք

ուղղուած են Իր աշակերտներին և նրանց միջոցով էլ բոլոր քրիստոնեաներին:

№ 8.

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Լեռան քարոզից

I. Փրկիչն ասում է. «Չկարծէք, թէ ես եկել եմ քանդելու օրէնքներն ու մարգարէների գրուածները. չեմ եկել քանդելու, այլ լրացնելու: Բայց ասում եմ ձեզ, եթէ ձեր արդարութիւնը դպիրների և փարիսեցիների արդարութիւնից աւելի չլինի, չէք կարող երկնքի արքայութիւնը մտնել:

Լսեցէք, առաջին մարդկանց ասուեց, թէ սուտ մի երդուիր, այլ Աստծուն տուած երդումը կատարիր: Բայց ես ասում եմ ձեզ. ամենևին չերդուէք՝ ո՛չ երկնքով, որովհետև Աստծու Աթոռն է, ո՛չ երկրով, որովհետև Նրա պատուանդանն է և ոչ Երուսաղէմով, որովհետև մեծ թագաւորի քաղաքն է. այլ ձեր խօսքը պէտք է լինի այոն՝ այո և ոչը՝ ո՛չ, որովհետև սրանից աւելին չարիցն է:

Դուք լսել էք, որ ասուեց, թէ աչքի տեղ՝ աչք և ատամի տեղ՝ ատամ: Բայց ես ասում եմ ձեզ. չարին հակառակ մի կենաք: Եթէ մէկը քո աջ ծնօտին ապտակ խփէ, դարձրու նրան միւսն էլ: Եթէ մէկը քեզ հետ կամենայ դատի մտնել և քո շապիկն առնել, տուր նրան և քո վերարկուդ:

Դուք լսել էք, որ ասուեց. Սիրիր քո ընկերին և ատիր քո թշնամուն: Բայց ես ասում եմ ձեզ. սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին, բարի արէք ձեզ ատողներին և աղօթեցէք նրանց համար, որոնք ձեզ չարչարում և հալածում են, որպէսզի կարող լինիր ձեր երկնաւոր Հօր որդիք դառնալ, որ Իր արեգակը ծագում է հաւասարապէս բարի և չար մարդկանց վրայ և թափում է անձրև թէ արդարների և թէ մեղաւորների վրայ: Եթէ դուք սիրէք միայն նրանց, որոնք ձեզ են սիրում, ի՞նչ վարձ պէտք է ստանաք. չէ՞ որ մաքսաւորներն ու մեղաւորներն էլ նոյնն են անում: Եթէ միայն ձեր բարեկամներին ողջունէք, ի՞նչ աւելի բան արած կը լինիր,

չէ՞ որ մաքսաւորներն ու մեղաւորներն էլ նոյնն են անում: Ուրեմն եղէք կատարեալ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

II. Ի՞նչ է ասում Յիսուս հին օրէնքների և մարգարէութիւնների մասին: Ի՞նչպէս պէտք է կատարել: Ի՞նչ է ասում Նա սուտ երգուելու մասին: Քրիստոնէի խօսքը ի՞նչ պէտք է լինի: Ի՞նչ է ասում Յիսուս վրէժխնդրութեան և հակառակութեան մասին և քրիստոնեան ինչպէս պէտք է վարուի: Ի՞նչ է ասում Փրկիչը ընկերսիրութեան մասին և ինչպէս պէտք է լինի քրիստոնէի ընկերսիրութիւնը:

III. Այս քարոզից մենք տեսնում ենք. 1) որ փառսեցիները կատարում էին օրէնքները ո՛չ այնպէս, ինչպէս հարկաւոր էր: Նրանք աւելի ուշադրութիւն էին դարձնում օրէնքի արտաքինի, քան թէ ներքինի վրայ: Բացի սրանից օրէնքի վրայ ընդունուած յաւելուածները նոյնքան կարևոր էին համարում, որքան օրէնքը: Ճշմարիտ գործի համար հերիք չէ միայն օրէնքի արտաքին լրացումը, այլ ամենից առաջ հարկաւոր է ճշմարիտ խորհուրդ, համոզումն, որովհետև օրէնքը ո՛չ թէ տառացի պէտք է կատարել, այլ ըստ մտաց, այն է՝ ըստ ներքին պահանջման: Քրիստոս չէր եկել օրէնքները քանդելու, եղծելու, այլ թերին լրացնելու—ամբողջացնելու: 2) Յիսուս արգելում է սուտ երգուելը: Սուտ երգումն յառաջանում է նրանից, որ մարդիկ կամենում են ստույգութիւնը ճշմարտութեան տեղ ընդունել տալ: Հրեաները կարծում էին, որ եթէ սխալ, կեղծ երգումից հեռու պահեն իրանց, երգման օրէնքը կատարած կը

լինին: Իրա հակառակ կարծում էին, թէ ճշմարիտ երգումը միշտ թույլատրելի է, թէկուզ ամենափոքր բանի համար: Նրանց անյայտ էր այն ճշմարտութիւնը, որ սովորական կեանքում յաճախակի և թեթեւամիտ երգումով Աստուծոյ անունը 'ի չարն են գործ դնում և երկնքի արքայութիւնից հեռանում: Սովորական կեանքի մէջ այս երգումը Փրկիչը կամենալով վերջացնել՝ արգելում է: 3) Յիսուս՝ վրէժխնդրութեան և հատուցման մասին բոլորովին ուրիշ հայեացք ունի, որ տարբերվում է հին ուխտի վարդապետութիւնից: Նա չարութիւնը չարութեամբ հատուցանելը՝ անիրաւացի է գտնում և քարոզում է չարութիւնը յաղթել բարութեամբ: Փարիսեցիներն այսպէս էին մտածում. ինչ որ դու ինձ կ'անես, ես էլ նոյնը իրաւունք ունիմ քեզ անելու: Մովսէս մարգարէն այդ օրէնքը միայն իշխանութեանն էր տուել և որոշել դատաստանի ժամանակ դրանով հատուցումն անել: Նա՝ որ ուրիշին խփել, հարուածել է, իբրև հատուցումն իր վարման պէտք է հարուած ստանար իշխանութեան ծառայից: Այդ օրէնքը գործ էր դնում իշխանութիւնը ըստ պահանջման հարկին և ո՛չ թէ սովորական կեանքի ամեն մի չնչին յարաբերութեան ժամանակ: Ակն ընդ ական՝ իրաւունք է տուած միայն դատաւորներին: Մարդիկ սովորական յարաբերութիւնների մէջ նոյնը չպէտք է պահանջեն և գործեն: Այն կէտը՝ «եթէ ծնօտիդ հարկանելու լինին, միւսն էլ թո՛ղ տուր» և թէ՛ «եթէ մէկը քեզանից շապիկդ ուզէ, բաճկոնդ էլ տո՛ւր», չպէտք է բառացի կերպով ընդունել, այլ փոխաբերական: Իսկապէս միտքն այս է. եթէ մինը քեզ վատութիւն է արել, կամ ցաւ, վիրաւորանք է պատճառել, դու նրա վատութեան փո-

խարէն աւելի բարութիւն արան, քան թէ նա կը սպասէր: Այս օրէնքները փարիսեցիների մեկնաբանութեան շնորհիւ՝ կեանքի մէջ սովորական երևոյթ էին դարձել, չարը չարով հատուցանել և ամեն մի վիրաւորանքի համար վրէժխնդիր լինել: Օրէնքի այսպիսի լեղաշրջման դէմ լինելով Փրկիչը՝ ասում էր Իր ունկնդիրներին, որ ո՛չ թէ չարը չարով, այլ բարի անելով պէտք է հատուցանել և այն աստիճան պէտք է բարիք անել, որ դիմացի վիրաւորողը երբէք չսպասէր: Այս տեսակ հանգամանքներում՝ համբերութիւն, զիջողութիւն, ներողամտութիւն և երկայնմտութիւն պէտք է ունենալ, որպէսզի խաղաղութիւն սերմանելով և յանցանքը ներելով՝ քո ոսոխին դէպի ուղղութիւն կարողանաս առաջնորդել: Սակայն տարաբաղդաբար այսօր էլ շատ քրիստոնէաներ փարիսեցիների նման են վարվում: 4) Փարիսեցիները՝ սիրելի մեքսալուքից, հասկանում էին միայն ընկերին և իրանց ազգին: Նրանք ընկեր ասելով ճանաչում էին միայն հրեային, իրանց հաւատակցին, իսկ ամեն մի ո՛չ հրեայի համարում էին իրանց թշնամի: Այստեղից էլ՝ ազգային հպարտութեամբ, ինքնասիրութեամբ, նեղ, սահմանափակ կրօնական հայեացքից դըրդուած՝ միանգամայն հակառակ էին հասկանում Աստուծոյ պատուիրանը: Նրանք իրանց սիրողին սիրել և ատողին ատել գիտէին: Սակայն քրիստոնէան պէտք է սիրէ անխտրաբար ամենքին: Սիրոյ օրէնքը չպէտք է ատելութեան փոխել: Փրկիչը սիրոյ օրէնքը հասկանում էր ներքին կերպով, իսկ նրանք՝ արտաքին—տառացի: Փարիսեցիներն ընդունում էին օրինականութիւնը արտաքին գործողութեամբ, իսկ Յիսուս՝ ներքին, բարոյական համոզմամբ: Յիսուս օրէնքը կատարում էր սրտով,

իսկ նրանք թիւրում, կերպարանափոխում, լեղաշրջում էին: Քրիստոսի օրէնքն է՝ սիրել թշնամուն և բարութիւն անել նրան:

№ 9.

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Լեւան Բարոզից

Լ. Փրկիչն ասում է. «Զգոյշ կացէք ողորմութիւն տալու ժամանակ, որ չանէք մարդկանց առաջ՝ ցոյց տալու համար, որովհետև վարձ չէք ստանալ ձեր երկնաւոր Հօրից: Եթէ կամենաս ողորմութիւն անել, փող մի փչիլ տալ քո առաջ ժողովրդի մէջ և հրապարակներում, ինչպէս կեղծաւորներն են անում, որպէսզի փառաւորուն մարդկանցից: **Ճշմարիտն եմ ասում ձեզ, հէնց այն է նրանց վարձը:** Եւ երբ դու ողորմութիւն անես, թող քո ձախ ձեռքը չիմանայ, թէ ինչ է գործում աջը, որպէսզի քո ողորմութիւնը ծածուկ լինի և քո Հայրը, որ ծածուկն էլ է տեսնում, յայտնապէս կը հատուցանէ քեզ:

Երբ դու աղօթելիս լինիս, կեղծաւորների պէս չանես, որոնք սիրում են ժողովրդի մէջ և հրապարակների անկիւնում կանգնել աղօթքի, որպէսզի երևան մարդկանց: **Ճշմարիտն եմ ասում ձեզ, հէնց այն է նրանց վարձը:** Իսկ դու երբ աղօթքի կանգնես, մտիր քո սենեակը, փակիր դուռը և ծածուկ աղօթիր քո Հօրը. իսկ քո Հայրը, որ ծածուկն էլ տեսնում է, կը հատուցանէ քեզ յայտնապէս: Եւ աղօթելիս շատախօս մի լինիք, ինչպէս հեթանոսները, որոնք կարծում են, թէ շատ խօսելով լսելի կը լինին:

Երբ դուք պահք պահէք, մի տրտմիք, ինչպէս կեղծաւորները, որոնք ապականում են իրանց երեսները, որպէսզի ցոյց տան մարդկանց, թէ պահում են: **Ճշմարիտն եմ ասում ձեզ, հէնց դրանով էլ ստանում են իրանց վարձը:** Իսկ դու, երբ պահես, օծիր քո գլուխը իւղով և լուսն երեսդ, որ շերեւատ մարդկանց, թէ պահում ես, այլ միայն քո Հօրը և քո Հայրը, որ տեսնում է ծածուկն էլ, յայտնապէս կը հատուցանէ քեզ»:

II. Ի՞նչ է պատուիրում Փրկիչը ողորմութիւն տալու համար: Ի՞նչպէս էին կատարում հրեաները և Յիսուս ի՞նչ նկատողութիւններ արաւ: Ի՞նչ ասաց Յիսուս աղօթելու մասին, ի՞նչպէս էին աղօթում հրեաները և Փրկիչն ի՞նչ պատուէր տուաւ Ի՞նչ ասաց Փրկիչը պահք պահելու մասին. ի՞նչպէս էին պահում հրեաները և ի՞նչ պատուէր տուաւ:

III. Այս քարոզից մենք տեսնում ենք. 1) որ Փրկիչը յանդիմանում է փարիսեցիներին և հրեաներին կեղծաւոր վարմունքի համար՝ ողորմութիւն տալու, աղօթելու և պահեցողութեան ժամանակ: Մարդկանց բարեպաշտ գործողութիւնը՝ որ արտայայտվում է ողորմութիւն տալիս, գեղեցիկ և համակրելի բան է, եթէ այդ կատարվում է Աստուծու անունով, սրտով, համոզմամբ, իսկապէս կարօտին, գործին օգնելու նպատակով և ո՛չ փառքի, պարծանքի, կամ աւելի լաւ ասած՝ ՚ի ցոյցս մարդկան: Բազմաթիւ մարդիկ կան, որոնք որեւէ աղէտի կամ հասարակական թշուառութիւնների ժամանակ, օրինակ՝ սովի, ժանտախտի, երկրաշարժի և այլն, ըստ երևոյթին մարդասիրաբար են վերաբերվում և հանելով քսակը՝ մի տուրք, ողորմութիւն են տալիս խեղճերի, չքաւորների, արկածեալների օգտին, որպէսզի ժլատ չերևան: Ստորագրում են որեւէ բարի նպատակի համար ստորագրութեան թերթին, որ իրանց հարեանից յետ չմնան, բարեգործ ճանաչուեն. կամ նրա համար, որ ակնկալութիւն ունին առաջարկողից. բայց իսկապէս նրանք դուռը բաղտողի երեսին կը խփէին, եթէ գիտե նային, որ իրանց արարքը տեսնող, հրատարակող չկայ: Ահա այդպիսիների համար է ասում Փրկիչը. «Զգո՛յձ լերուք ողորմութեան ձերում»: Նա զգուշացնում է՝

հեռու մնալ ցուցամուրացութիւնից և սնապարծութիւնից: Փարիսեցիական այդ ոգին մեր ժամանակներումն էլ մեռած չէ: Կան մարդիկ, որոնք իրանց արած բարեգործութիւնը հրատարակում են հազար և մի ձևով: Փրկիչը կամենում է, որ մենք ծածուկ կերպով անենք բարեգործութիւն և զգուշացնում է, որ մեր կատարած բարի գործերի համար փող չփչենք և կամ ուրիշների միջոցով փող փչել չտանք, այսինքն՝ մեր այդ արածը շարունակ մեր խօսակցութեան նիւթ չդարձնենք և մեր տուած ողորմութեամբ չպարծենանք՝ դատարկ բաւականութիւն զգալով: 2) Աղօթքը պէտք է լինի սրտով և ո՛չ կեղծաւորութեամբ: Երկար ու կարճ աղօթելու մէջ չէ խնդիրը, այլ ջերմեռանդ սրտի մէջ: Անմաքուր սրտով աղօթքը, եթէ նա երկար ևս լինի, չի օգնիլ, այն ինչ՝ մաքուր սրտով և այն էլ ճշմարիտ բարիքների համար, թէկուզ միքանի խօսքերով՝ լսելի կը լինի և մարդուն կ'օգնէ նեղութեան ժամանակ: Ամեն ինչ կախուած է սրտից: 3) Հրեաները միայն կերակրով չէին պահք պահում, այլ և չէին լուսավում, անուշահոտ իւղով չէին օծվում, ման էին գալիս բոկոտն, հազնում էին հին զգեստներ և պառկում էին կոշտ անկողիններում: Փրկիչը իսկապէս պահքի դէմ չէր, այլ նա պահանջում էր կատարել նրան անկեղծ և հեզ սրտով և ո՛չ ՚ի ցոյցս մարդկան: Փարիսեցիները պահեցողութեան օրերն առիթ վերցնելով՝ աշխատում էին դրանով ցոյց տալ ժողովրդին իրանց բարեպաշտութիւնը: Նրանց այդ վարմունքը ո՛չ թէ առաքինական, բարեպաշտական էր, այլ սնապարծութիւն, կեղծաւորութիւն: Նրանց սիրտը լի էր մեծամտութեամբ և չարութեամբ, սակայն աշխատում էին դէմքերի վրայ հեզութիւն, անմեղութիւն արտայայտել:

Փրկիչը պատուիրում էր տրամած երեսների փոխարէն
հեղ սիրտ ունենալ և խոնարհած գլուխների փոխարէն՝
բարձր և ազնիւ մտածողութիւն: Քրիստոնէութիւնը՝
կեանքի պահեցողութիւնը մեզ համար բեռը չպէտք է
լինի, այլ ուրախութիւն:

№ 10.

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Լեռան Բարոզից

I. Փրկիչն ասում է. «Երկրիս վրայ ձեզ
համար գանձ մի հաւաքէք, ուր ցեցը և
ուտիճը ապականում են և գողերը գողա-
նում: Այլ գանձեցէք ձեզ համար գանձ եր-
կնքումը, ուր ոչ ցեց կայ և ոչ գող, որով-
հետև ուր ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր
սիրտը կը լինի:

Ոչ որ չէ կարող երկու տէրերի ծա-
ռայել, կամ մէկին կ'ատէ և միւսին կը
սիրէ, կամ միսին կը պատուէ և միւսին
կ'արհամարհէ: Չէք կարող ծառայել Աստծուն
և մամոնային:

Ասում եմ ձեզ. հոգս մի անէք, թէ ինչ
պէտք է ուտէք, կամ ինչ հագնէք: Չէ որ

հոգին կերակրից և մարմինը հանդերձից ա-
ւելի է, բարձր է: Մտիկ տուէք երկնքի թրու-
շուններին, որ ոչ վարում են, ոչ հնձում և ոչ
ժողովում ամբարներում, բայց ձեր երկնա-
ւոր Հայրը կերակրում է նրանց: Չէ որ դուք
նրանցից աւելի էք: Մտիկ տուէք վայրի
շուշանին, նա ոչ աշխատում է և ոչ նիւ-
թում: Սողոմոնն էլ իր բոլոր փառքերի մէջ
նրանց մէկի նման չհագաւ: Եթէ վայրի
խոտը՝ որ այսօր կայ և վաղը պէտք է դէն
զցուի, Աստուած այնպէս է հագցնում, որ-
չափ աւելի ձեզ համար կը հոգայ, թերա-
հաւատներ: Եւ այսպէս հոգս մի անէք՝ ա-
սելով, թէ ինչ ուտենք, կամ ինչ հագնենք,
այդ մասին հեթանոսներն են հոգում: Չեր
երկնաւոր Հայրը գիտէ, թէ ինչ է ձեզ
հարկաւոր: Դուք ամեն բանից առաջ խընդ-
րեցէք Աստծու արքայութիւնը և Նրա
արդարութիւնը, իսկ մնացածը ինքն իրան
կը ստանաք:

II. Ի՞նչ է ասում Փրկիչը գանձ ժողովելու մասին. ո՞ր
պէտք է գանձ ժողովել, որ ապահով լինի: Ի՞նչու չէ կարելի
երկու տէրերի ծառայել: Ի՞նչ է ասում Յիսուս կերակրի և հա-

գուտի մասին և ինչպէս պէտք է վարուել Ի՞նչ օրինակներ է բերուած քարոզի մէջ: Քրիստոնեան աւելի ի՞նչ պէտք է խնդրէ իր կեանքի համար:

III. Լերան քարոզի այս մասից մենք սովորում ենք.

1) որ երկրաւոր բարիքները չեն կազմում մարդուս երջանկութիւնը, հետեւապէս և երկրաւոր բաներով— գանձ ժողովելով չպէտք է զբաղուել շատ: Մարդուս երջանկութիւնը ո՞չ թէ երկրաւոր հարստութեան և մեծութեան մէջ է, այլ երկնային և հոգեւոր: Փրկիչը՝ գանձը, հարստութիւնը բաժանում է երկուսի— երկնայինի և երկրայինի և առաւելութիւն է տալիս առաջինին, որովհետեւ նա անկորուստ է և յաւիտենական: Նրան ո՞չ ցեց, ո՞չ ուտիճ կ'ուտեն և ոչ գողերը կարող են յափշտակել ու գողանալ: Երկնային գանձեր են՝ սիրոյ, հաւատարմութեան և խղճողասիրութեան առաքինութիւնները և բարեգործութիւնները, որ ո՞չ ոք չէ կարող յափշտակել, մարդուց խել, նոյնիսկ մահուանից յետոյ: Այսպիսի մարդկանց յիշատակը՝ կեանքից հեռանալուց յետոյ էլ՝ օրհնութեամբ է յիշուում և յաւիտեան մնում: Փրկիչը գանձի մասին խօսելով՝ շատ գեզեցիկ է նկատում, թէ ուր մարդու գանձն է, այնտեղ և նրա սիրտն է: Եթէ սիրոյ, ձգտման առարկան երկրաւոր գանձն է, նշանակում է, նրա սիրտն էլ երկրիս վրայ է, երկրի ձևով է մտածում, կեանք վարում, երկրային բաների վրայ է սէր ունենում, առաւելութիւն տալիս, մոլորվում, գայթակղվում ուղիղ ճանապարհից և շատ անգամ էլ կործանվում իր հարստութեամբ: Իսկ եթէ երկնային է գանձը, սիրտն էլ այնտեղ է լինում, ձգտում է գէպի երկնայինը, հոգեկանը, անանցանելին

և փոքր առ փոքր մօտենում է Աստծու պատկերին և նմանութեան: 2) Փրկչի ուսումը՝ հոգս չբաշխու մասին վերաբերում է անմիտ և աննպատակ աշխարհային հոգսերին, որով քրիստոնեան չպէտք է շատ զբաղուի և ծանրաբեռնէ իրան, այլ նրա առաջին, ամենաբարձր և ամենահարկաւոր հոգսը պէտք է լինի խնդրել Աստծու արհայութիւնը եւ Նրա արդարութիւնը, որ նշանակում է՝ աշխատել ձեռք բերել Աստծու արհայութիւնը, այն է՝ ունենալ սրտի մէջ Աստծու իշխանութիւնը. իսկ Նրա արդարութիւնը, այն է՝ լինել ճշմարտախօս և ողորմած, այն ժամանակ Աստուած կը տայ մեզ ամենը, ինչ որ հարկաւոր է մեր կեանքի համար: Աստուած կամենում է մարդուս ամբողջ սիրտը և ոչ կտոր-կտոր արածը: Մարդս միաժամանակ չէ կարող ծառայել Աստծուն և մամոնային— երկնային և երկրաւոր գանձ ժողովելուն, որի համար նկատում է Փրկիչը: ձշմարիտ քրիստոնեան անմիտ և անօգուտ հոգսերով՝ կեանքի, կերակրի, մարմնի և հանդերձի համար շատ չպէտք է զբաղուի, նա իր յոյսը պէտք է դնէ Աստծու ողորմութեան վրայ և հաւատայ, որ Նա՝ որպէս երկնաւոր Հայր, կը հոգայ ամեն ինչ:

№ 11.

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԼԵՐԱՆ ԲԱՐՈՂԻՑ

I. Փրկիչն ասում է. Մի դատէք ուրիշներին, որ նրանք էլ ձեզ չդատեն, որով



Տետև ինչ դատաստանով ուրիշներին դատէք, նրանով էլ կը դատուէք դուք: Եւ ինչ չափով չափէք, նրանով էլ կը չափուէք:

Ինչո՞ւ եղբօրդ աչքի ծեղը տեսնում ես, իսկ քո աչքի գերանը՝ ոչ: Կամ ի՞նչպէս ես ասում եղբօրդ՝ թող հանեմ աչքիդ ծեղը, այն ինչ քո աչքումը գերան կայ: Կեղծաւոր, առաջ քո աչքի գերանը հանիր և յետոյ նայիր, որ հանես եղբօրդ աչքի ծեղը:

Ինչ որ կամենում էք, որ մարդիկ ձեզ անեն, այն էլ դո՞ւք արէք նրանց. հէնց սա է օրէնքը և մարգարէութիւնը:

Մտէք նեղ դռնով. որովհետև ընդարձակ է այն դուռը և համարձակ՝ այն ճանապարհը, որ տանում է դէպի կորուստ և շատերն են, որ մտնում են նրա միջով: Իսկ այն դուռը, որ տանում է դէպի կեանք, չափազանց նեղ է և անձուկ և քչերն են գտնում նրան:

Զգոյշ կացէք սուտ մարգարէներից, որոնք ոչխարի շորերով են գալիս ձեզ մօտ, իսկ ներսից յափշտակող գայլեր են. ուրեմն իրանց պտղիցը ճանաչեցէք նրանց: Մի թէ

կարելի է փշիցը խաղող՝ կամ տատասկից թուղ բաղել: Բարի ծառը բարի պտուղ կը բերէ, իսկ չար ծառը՝ չար պտուղ: Այն մարդը, որ ինձ կանչում է՝ Տէր, Տէր, չի մտնի երկնքի արքայութեան մէջ, այլ ով կատարում է Իմ երկնաւոր Հօր կամքը:

Դրա համար ով Իմ խօսքերը լսում, կատարում է, նման է այն մարդուն, որ իր տունը շինեց քարի վրայ: Եկան անձրևները, վարարեցին գետերը, փչեցին բամփները, խփեցին տանը, բայց նա չկործանուեց, որովհետև քարի վրայ էր հաստատուած: Իսկ ով Իմ խօսքերը լսում, բայց չէ կատարում, նման է այն անխելք մարդուն, որ իր տունը շինեց աւազի վրայ: Եկան անձրևները, վարարեցին գետերը, փչեցին բամփները, խփեցին տանը և նա ընկաւ. նրա կործանում մեծ էր:

II. Ի՞նչ է ասում Յիսուս ընկերոջը դատելու մասին և ինչ խրատ է տալիս Ի՞նչ է քարոզում Յիսուս նեղ և լայն դռան մասին և ո՞րն է նրանցից օգտաբեր մարդու համար: Ի՞նչ է պատուիրում Յիսուս սուտ մարգարէների մասին և ինչով պէտք է ճանաչել նրանց: Ո՞ւմ է նմանեցնում Փրկիչը նրանց, որոնք լսում և կատարում են Իր խօսքերը և ո՞ւմ է նմանեցնում նրանց, որոնք թէև լսում են, բայց չեն կատարում:

III. Փրկչի լերան քարոզի այս վերջին կտորից մենք տեսնում ենք. 1) որ Նա խօսելով դատաւորութեան մասին՝ պատուիրում է արդարադատ լինել: Մարդիկ առհասարակ սովորութիւն ունին, իրանց մեծ պակասութիւնները թողած՝ ուրիշների փոքր պակասութիւնների մասին խօսել, դատել և խրատներ տալ: Նրանք շատ անգամ դատում են արտաքուստ՝ առանց ներսը թափանցելու, և ուրիշներին դատելու վերաբերմամբ ևս խիստ են, իսկ դէպի իրանց՝ մեղմ: Ոմանք էլ՝ իրանց բարձրացնելու մտքով, վատաբանում են և դատափետում ուրիշներին: Փրկչի պատուէրը՝ «մի դատէք, որ չդատուէք», վերաբերում է ո՛չ թէ իշխանութեան օրինական դատաստանին, այլ սովորական կեանքի մէջ մարդկանց անգութ, թեթեամիտ, սիրուց զուրկ դատելուն, որ արտայայտվում է բամբասանքի, վատաբանութեան և չարախօսութեան ձևով: Այսպիսի սիրազուրկ դատելու վերաբերութեամբ է, որ Փրկիչը՝ ցոյց տալով հատուցման գաղափարը, զգուշացնում է. «Որով չափով չափէք, չափեսցի ձեզ»: Ապա մատանիշ է անում, որ մենք առաջ մեր սեպհական (մեծ) սխալները պէտք է նկատենք, նախքան ուրիշների (փոքր) սխալները տեսնելը, դատելն ու ուղղելը: Այս միտքը Նա գերանի և ծեղի օրինակներով է բացատրում: Մարդս պէտք է նախ իր մտքի կուրուծիւնը տեսնի, հանի իր հոգու միջից, մաքրի իր խիղճը, հեռացնի իր սխալները, դատի իրան խստութեամբ և ապա՝ երբ իր հոգեկան աչքը այլևս կուրացած չէ, երբ նա իրան առողջացած է գտնում, այն ժամանակ միայն կարող է ուղղել իր եղբօրը և այն՝ զգուշութեամբ, իմաստաբար: Ուրիշների հետ վարուելու օրէնքը Փրկիչը միքանի խօսքով պարզ

այսպէս է գծում. «Ի՛նչ որ կամենում էք, որ մարդիկ ձեզ անեն, այնպէս էլ դ՛ուք արէք նրանց»: Մենք, հարկաւ, կամենում ենք, որ մեզ սիրեն, նեղութեան ժամանակ օգնեն, չվնասեն, նոյնն էլ մենք պէտք է նրանց կամենաք և այնպէս անենք: 2) Փրկիչը՝ խօսելով փրկութեան նեղ դռան և ճանապարհի մասին, բացատրում է, որ նեղ դուռը՝ նեղ—սուր խղճմտանքն է, որ ամենափոքր անարդարութիւն գործելիս անհանգիստ է լինում, իսկ նաւապարհը՝ արդարութեան և ճշմարտութեան նեղ գիծն է, որից ո՛չ ոք իրաւունք չունի մազափ անգամ շեղուելու, եթէ չէ ուզում սայթաքել և խորխորատ ընկնել: Ընդարձակ դուռ եւ համարձակ նաւապարհ՝ անսանձ խիղճը և մոլորութեան ճանապարհն է, որով շատերն են մտնում: Այս ճանապարհի սկիզբն ուրախ, գրաւիչ է, բայց շարունակութիւնը տխուր և վտանգներով լի: Սրանով գնացողը շուտով պատահում է կեանքի բարձրացող փոթորիկներին, ուր տեղի են ունենում ցաւ, հիւանդութիւն, տրամուծիւն, աղքատութիւն և թշուառութիւն, որոնք հետզհետէ թունաւորում, ապականում են կեանքը և յառաջ բերում զարհուրելի վախճան—մահ: Բոլորովին ուրիշ ճանապարհ ունի առաքինութեան ուղին. նա սկզբում գրաւիչ չէ, նեղ է ճանապարհը, տաժանելի և փշալից, նրանով գնալը դժուար է և քչերն են գնում: Այստեղ բաւականութեան առիթը սակաւ է և յարմարութիւնը չնչին, բայց ամենուրեք աշխատանք, ջանք, խնայողութիւն և հետեւանքը՝ փրկարար: 3) Սուս մարգարէներ էր անուանում Փրկիչը փարիսեցիներին և դպիրներին, որոնք սիրոյ պատրուակի տակ ծածկում էին Աստուծոց իրանց հեռու լինելը և ինքրասիրութիւնը, ուստի և

նրանց ընտրած ճանապարհը պէպի կորուստ էր տանում: Այսօր էլ շատ սուտ մարգարէներ կան մեր մէջ, որոնք գայթակղեցնում են մարդկանց խօսքով և իրանց վարմունքով: Այսօր էլ փարիսեցի է նա, ով մէկին կեանքի նեղ ճանապարհից հանում է, կամ ընդարձակ ճանապարհն է ցոյց տալիս: Այդպիսիներին շորերից չէ կարելի ճանաչել, որովհետև նրանք հագած ունին անմեղ մարգարէի շորեր, նրանք ոչխարի զգեստով են շրջում, բայց ներքուստ գայլեր են: Նրանց լեզուի տակ մեղր կայ, իսկ սրտի մէջ՝ թոյն: Յիսուս՝ այդպիսիների Տէր, Տէր ասելուն նշանակութիւն չէ տալիս և պատուիրում է ճանաչել նրանց գործերից, ինչպէս ծառը՝ պտղից: 4) Չպէտք է կարծեն մարդիկ, թէ առանց գործի բաւական է ունենալ միայն բարի կամք և հաւատ՝ երկնքի արքայութիւնը մտնելու համար: Այն քրիստոնեան, որ իր կեանքը Յիսուսի սկզբունքներով է վարում, նշանակում է, նա իր տունը շինել է ժայռի վրայ: Այնպիսի անձին ոչ նեղութիւնը, ոչ կարիքը և ոչ փորձութիւնը կարող չեն դէպի կորուստ տանել: Իսկ սրա հակառակ՝ ով իր կեանքը սեփական ցանկութիւններով է առաջնորդում և վարում, նա բազմաթիւ նեղութիւնների, փորձութիւնների և սխալմունքների միջոցով էլ անդունդն է գլորվում: Աւելի պարզենք. գործին եռանդով վերաբերուող բարի մարդիկ, որոնք կեանքի վշտերի մէջ ևս ճշմարիտ ձևով են վարվում, չեն խորտակվում երբէք, երբ վշտերը (անձրև), մարդկանց պատճառած թշուառութիւնները (հողմը), և զրպարտութիւնները (գետերը) սաստկանում են: Կարիքը բարի մարդոց չէ կարողանում բարոյապէս փոխել. նրանք չեն տատանվում եղէգի նման, այլ վշտե-

րի ժամանակ ևս հաստատ կանգնած են և անյաջողութեան ու անբաղդութիւնների մէջ էլ անդրդուելի են մնում: Այդպիսին նման է այն քրիստոնէին, որ կեանքի հիմքը քրիստոնէական—բարոյական սկզբունքների վրայ է կառուցանում և հիմնաձգութիւնը զգուշութեամբ է կատարում: Բոլորովին այլ է այն անձի վիճակը, որ իր կեանքի հիմքը չէ հիմնում քրիստոնէական—բարոյականութեան սկզբունքների վրայ, այլ լոկ մարդկային ցանկութիւնները—փխրուն աւազի վրայ:

№ 12.

ՅԻՍՈՒՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԻ, ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ

I. Երևոյով սկսուեց տարածուել և խօսուել Յուդայի բոլոր երկրում Յիսուսի գործած հրաշքների մասին և ժողովուրդը խուռն բազմութեամբ գալիս էր Նրա մօտ: Նա Իր Աստուածային խօսքով ջուրը գինի էր դարձնում, ծովի մրրիկը հանդարտեցնում և նրա վրայից ուտքով բայլում, հինգ հացով և երկու ձկնով յագեցնում էր հինգ հազար հոգու և յարութիւն տալիս մեռածներին...: Նա տալիս էր կոյրերին աչք, խուլներին՝ լսողութիւն, անդամալոյճներին՝ զօրութիւն:

Սրբում էր բորոտներին, ազատում էր դի-
 ւահարներին չար ոգիներից: Նա ոչ ոքի չէր
 հեռացնում Իրանից և ամենքն ստանում
 էին Նրանից օգնութիւն: Նա Իրան գիմող-
 ներից պահանջում էր հաւատ և բժշկած-
 ներին արձակում էր այսպիսի խրատով.
 «Նայիր, որ այլևս չմեղանչես»:

Յիսուս ուսուցանում էր. «Ապաշխարեցէք,
 երկնքի արքայութիւնը մօտեցել է և հա-
 ւատացէք Աւետարանին», այն է՝ փրկու-
 թեան աւետիքին: Եւ քարոզում էր ամեն
 տեղ—լճի ափին, ծովի վրայ, դաշտում, լե-
 րան գլխին, մասնաւոր աներում, ժողովա-
 րաններում և նոյնիսկ տաճարում: Նա խօ-
 սում էր պարզ, հասկանալի լեզուով, երբեմն
 ուղղակի և երբեմն առակներով ու այլա-
 բանօրէն: Իսկ ժողովուրդը զարմանում էր
 Նրա վարդապետութեան վրայ և ասում.
 «Ոչ ոք այնպէս չէ խօսում, ինչպէս Սա»:

Յիսուսի վարդապետութեանը չէին հա-
 ւանում միայն հպարտ կարգացողները և կեղծ
 բարեպաշտութեամբ պարծեցող փարիսե-
 ցիները: Նրանք ատում էին Յիսուսին և

Նրան անուանում մեղաւորների բարեկամ:
 Նրան մեղադրում էին, թէ քանդում է
 օրէնքները և չէ պահպանում հայրենի ա-
 ւանդութիւնները: Իսկ հրաշքների մասին
 տարածում էին, թէ նա սատանայի զօ-
 րութեամբ է գործում:

II. Յիսուսի ո՞ր գործերի մասին սկսեց խօսել ժողո-
 վուրդը: Ի՞նչ հրաշքներ և բժշկութիւններ էր անում Նա: Ի՞նչ
 էր պահանջում Նա Իրան գիմողներից և ի՞նչ խրատ էր տալիս
 բժշկուածներին:

Ի՞նչ տեղերում և ի՞նչպէս էր քարոզում Յիսուս: Ի՞նչ էր
 խօսում Նրա մասին ժողովուրդը: Ի՞նչպէս էին վերաբերվում
 Նրա թշնամիները և ի՞նչ բանի մէջ էին մեղադրում:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ
 Յիսուս Իր առաքելական պաշտօնը կատարելիս հրաշքներ
 է գործում և այդ չէ անում՝ զարմանք պատճառելու
 կամ փառաւորութիւն համար, այլ սիրուց, մարդկային
 գթասրտութիւնից զրդուած. այլև հաստատելու, որ
 Ինքը Աստուծոց է ուղարկուած: Ամենամեծ հրաշքն Ինքն
 էր և Նրա վարդապետութեան շուտափոյթ տարածումը:
 Նա միլիօնաւոր չար մարդկանց անաստուած մտքերը
 դէպի Իրան դարձրեց և մարդկանց թշուառ վիճակը
 օրհնութեան և խնդութեան փոխարկեց: Այդ գթած,
 ողորմած և փրկող սէրն էր Նրա վարդապետութեան
 հիմքը և գործողութեան շարժառիթը: Սիրուց զրդուած՝
 Նա բժշկում, օգնում էր, նոյն սիրուց շարժուած՝ համբե-

րութեամբ տանում էր վշտերը: Նա սիրոյ համար էր ապրում և սիրոյ համար էլ մեռաւ: Նա Աստծու սէրն էր մարդկային կերպարանքով: 2) Քրիստոս Իր քարոզչական պաշտօնն սկսում է կատարել մկրտութիւնից անմիջապէս յետոյ և Նրա նպատակը չէր՝ յեղափոխութիւն ձգելու, այլ ժողովուրդը բարձրացնելու և սրբելու: Նա եկել էր բացատրելու, որ Աստուած մեզանից հեռացած չէ, այլ Նա մեր մէջն է բնակվում: Ինքը եկել էր ցոյց տալու, որ Աստուած մեր Հայրն է, Որի մէջ ապրում ենք և շարժվում և թէ Նրա սիրած գործն է ողորմութիւն և ճշմարտութիւն, խաղաղութիւն և սէր: Փրկիչն Իր քարոզներով մեծ ընդունելութիւն գտաւ. ամենքն ուշադրութեամբ լսում էին Նրան: Նա խօսում էր նրանց սրտի հետ սիրուն առակներով և բացատրում էր Աստծու արքայութեան էութիւնը հասկանալի ձևով: Նա խօսում էր սրտի կրօնից, Աստծու յաւիտենական օրէնքներից, որոնք մարդուս խղճի մէջ են դրուած: Նրա իմաստալի խօսքերը բոլորի վրայ լաւ տպաւորութիւն էին թողնում և այսպիսի հոգևոր կերակուրներով աճում, զօրանում էր նրանց հաւատը: 3) Յիսուսի թշնամիները—փարիսեցիներն ու սադուկեցիները՝ միշտ հակառակ էին Նրան, ատելութեամբ էին վերաբերվում դէպի Նրա անձնաւորութիւնը և արհամարհանքով դէպի Նրա գործունէութիւնը: Քահանաները երկիւղ էին կրում, թէ զոհաբերութեան և այլ աստուածապաշտական ծիսակատարութիւնների վերանալովը իրանց արդիւնքը կը պակասի և գուցէ իրանց գոյութիւնը վտանգի ենթարկուի: Գալիլոսներն ու օրինականները վիրաւորուած էին համարում իրանց, որովհետև Փրկիչը նրանց արտաքին օրի-

նակատարութեան և կեղծ սրբութեան դէմ բարոյական զէնքով պատերազմում էր և նրանցից ողորմած սէր պահանջում, որից բոլորովին զուրկ էին օրէնքի մեկնիչները:

№ 13.

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒՆ

I. Մի անգամ Յիսուս յայտնեց Իր աշակերտներին, թէ Ինքը պէտք է գնայ Երուրուսաղէմ ու շատ չարչարանքներ կրելով՝ ծերերից, քահանայապետներից և կարդացողներից պէտք է սպանուի և երրորդ օրը յարութիւն առնի:

Այս խօսակցութիւնից վեց օր յետոյ Նա վեր առաւ Իր աշակերտներից երեքին՝ Պետրոսին, Յակովբոսին և Յովհաննէսին և բարձրացաւ մի բարձր սարի գլուխ ու ըսկսեց աղօթել. իսկ աշակերտները յոգնածութիւնից բուն եղան և երբ աչքները բաց արին, տեսան, որ իրանց Վարդապետը կերպարանափոխուել է: Նրա երեսը փայլում էր ինչպէս արեգակ և շորերը սպիտակ էին ինչպէս ձիւն: Նրա հետ խօսում էին Մով-

սէսը և Եղիան այն անցքերի մասին, ինչ որ պէտք է կատարուէին Երուսաղէմում: Պետրոսը զարմացած ասաց. «Վարդապետ, լաւ կը լինի, որ այստեղ մնանք. թող շինենք երեք տաղաւար (վրան) — մինը Քեզ, մինը Մովսէսի և միւսը Եղիայի համար»:

Եւ մինչդեռ Յիսուս խօսում էր, մի լուսաւոր ամպ հովանի եղաւ նրանց: Չայն եկաւ ամպից, որ ասում էր. «Ռա է Իմ սիրելի Որդին, Դրան լսեցէք»: Աշակերտները սաստիկ վախեցան և ընկան երեսների վրայ: Քրիստոս մօտեցաւ, բռնեց նրանց ձեռքից և ասաց. «Վանգնեցէք և մի վախենաք»: Նրանք բարձրացրին իրանց աչքերը և տեսան միայն Յիսուսին Իր սովորական կերպարանքով: Սարից իջնելիս Յիսուս պատուիրեց, որ ոչ ոքի չպատմեն այդ տեսիլը՝ մինչև Իր յարութիւն առնելը:

II. Յիսուս ինչ յայտնեց Իր չարչարանքների մասին, որ պէտք է կրէր Երուսաղէմում: Ո՞րտեղ Նա ցոյց տուեց Իր Աստուածային փառքը և աշակերտներից սրտնց: Ո՞ւմ հետ զբոսեց Իր այլակերպութեան ժամանակ և ինչի մասին: Ի՞նչ պատուիրեց Յիսուս աշակերտներին սարից իջնելիս:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ Յիսուս ստիպմամբ չէ պահանջում ոչ ոքից, նոյնիսկ Իր աշակերտներից՝ հաւատալ Իրան, այլ ամեն ինչ խօսքով և օրինակով ցոյց տալուց յետոյ՝ թողնում էր ազատ, որ իրանք անձամբ գային այն համոզման, թէ Նա սովորական մահկանացու չէ, այլ Աստուծու Որդի: Ընդհանուր կարծիքը Նրա մասին այն էր, որ Նա արտաքոյ կարգի է, մի ուրիշ աշխարհից է եկել, բոլոր մարգարէներից մեծ է և գուցէ այն կարապետն է, որ անմիջապէս պէտք է գայ Մեսիայից առաջ, բայց Մեսիան չէ: Նոյնիսկ Նրա աշակերտների կասկածը՝ որ առաջ էր եկել Յիսուսի այն խօսակցութիւնից նրանց հետ, թէ պէտք է չարչարուի, սպանուի, պարզ ապացոյց էր, որ նրանք ևս չէին հասկացել և ճանաչել Նրան: Այս պատճառով Նա հարկաւոր է համարում՝ այդ կասկածը փարատելու և թերահաւատ ու տատանուող զրութիւնից հանելու համար ցոյց տալ նրանց Իր Աստուածային փառքը, այն է՝ Աստուածութեամբ ծածկել Իր ծառայական կերպարանքը, որով և զգուշացնել՝ հեռու մնալու գայթակղութիւնից: 2) Մենք տեսնում ենք, որ Յիսուս Իր այս փառքի ժամանակ Աստուածաբար կանչում է Մովսէսին և Եղիային՝ Իրան ներկայանալու, որով և հաստատում է, թէ Տէր է կենդանիների և մեռելների և թէ Ինքն է մարգարէների զուշակած Մեսիան: Նրա երեսի՝ արեգակի նման լուսաւորութիւնը նշանակ էին Նրա արգարութեան արեգակ լինելուն և սրտի անչափ մաքրութեան: Այստեղ դարձեալ նկատվում է Սուրբ Երրորդութեան սքանչելի խորհուրդը, ուր ս. Հոգին յայտնվում է ո՛չ աղաւնակերպ, այլ լուսափայլ ամպի նման: Այն սարը՝ ուր Փրկիչը ցոյց տուեց

Իր Աստուածային փառքը, ըստ աւանդութեան, համարվում է Թափօրը, որ գտնվում է Գալիլիայի Նազարէթ քաղաքից փոքր ինչ հեռու: Յ) Ամեն մի ճշմարիտ քրիստոնէի պարտականութիւնն է՝ պատրաստել և դարձնել իր սիրտը Երրորդութեան տաճար—տաղաւար և բնակեցնել նրա մէջ մարդասէր Փրկչին, և որի միակ փափագը պէտք է լինի՝ աշխատել արժանանալու նրա Աստուածային տեսութեանը Պետրոսի և Ջեբէթիայի որդոց հետ և լսել հայրական ձայնը, թէ «Դա է Որդի Իմ սիրելի»:

№ 14.

ՅԻՍՈՒՈՒ ԱՌԱՎՆԵՐԻՅ

ա. Սերմանացանի առակը

1. Մի անգամ Յիսուս ասաց ժողովրդին հետևեալ առակը.

«Մի սերմանացան զուրս գնաց սերմանելու: Սերմերից միքանիսն ընկան ճանապարհի վրայ և թռչունները կերան: Միքանիսն ընկան քարքարոտ տեղ, արմատ ձգեցին և բողբոջ—ծիլ տուին, բայց որովհետև շատ հոգ չկար, արմատը չկարողացաւ ամրանալ և բողբոջը չորացաւ: Միքանիսն ընկան փշերի մէջ և զուրս եկան,

բայց փշերը խեղդեցին նրանց: Իսկ միքանիսն էլ ընկան լաւ հողի մէջ և պտուղ տուին՝ որը հարիւր, որը վաթսուն և որը երեսուն»:

Երբ աշակերտները խնդրեցին Յիսուսին մեկնել այս առակը և Նա ասաց, որ սերմանացանը Ինքը՝ Քրիստոսն է, սերմը Աստուծո խօսքն է, իսկ երկիրը՝ մարդկանց սրտերը: Կո՛ս երկիրը հանապարհի վրայ—անհոգ և անուշադիր մարդկանց սրտերն են, որ չեն պահում Աստուծու սերմանած խօսքերը իրանց սրտում և չարը գալիս է ու յափշտակում: Քարքարոտ հողը՝ այն փոփոխական մարդկանց սրտերն են, որոնք թէև ուրախութեամբ են ընդունում Աստուծու խօսքերը և հաւատում են, բայց պատահած առաջին նեղութեան ժամանակ՝ թողնում են նրանց: Փո՛ս երկիրը՝ այն սրտերն են, որոնք զբաղուած են աշխարհի հոգսերով, հարստութեամբ, զուարճութիւններով և խեղդում են իրանց մէջ բարի խօսքերը և պտուղ չեն տալիս: Քարի երկիրը՝ ուշադիր և ունայնութիւնից ազատ սրտերն են, որոնք լսում են Աստուծու

խօսքերը, պահում են և պտուղ—բարի գործեր են տալիս:

II. Ո՛ւր գնաց սերմանացանը և ինչո՞ւ համար: Ո՛ւր ընկան սերմերը: Ո՛րոնք պտուղ տուին և ո՞րոնք ոչ: Ի՞նչպէս մեկնեց Յիսուս այս առակը: Ո՞վ է սերմանացանը, սերմը և ագարակը: Ի՞նչ տեսակ սրտերի է նմանեցնում Յիսուս ձանապարհի վրայ, քարքարոտ տեղ, փշերի և բարի հողի մէջ ընկած սերմերը:

III. Յիսուս այս առակով ուսուցանում է. 1) որ բոլոր քրիստոնեաները կազմում են Աստծու արքայութիւն—եկեղեցի և այդ արքայութեան մէջ կարող են լինել միայն նրանք, որոնք հաւատով ընդունում են Նրա օրէնքները: Նա այս առակով պատմում է, թէ ինչպէս հետզհետէ աճում, զարգանում է այդ արքայութիւնը, մանանեխի հատիկից ծառ դառնում: Քրիստոս առաջինը յայտնեց այն գաղափարը, թէ Աստուած ոչ թէ ժողովրդի մօտ, այլ ժողովրդի մէջ պէտք է լինի: Նրա բնակարանը ժողովրդի սրտերը պէտք է լինին, որտեղից Նա ղեկավարելու է իւրաքանչիւր մարդու մտքերը, զգացմունքները և կամքը, ուրիշ խօսքով՝ Աստուած մարդկանց մէջ և մարդիկ Աստծու մէջ պէտք է բնակուեն: Քրիստոսի արխայութիւն ասելով պէտք է հասկանալ Աստծու իշխանութիւնը որոշ մարդկանց սրտերում, որով կազմվում է փրկութեան մի հասարակութիւն, ճշմարիտ հաւատացեալների մի ժողով: Սրանից պարզ երևում է, որ Աստծու արքայութիւնը նիւթական վայելք չէ, այլ արդարութիւն և

խաղաղութիւն: Այդ թագաւորութեան իւրաքանչիւր անդամի մէջ Նրա հոգին է բնակվում անխորաբար՝ թէ աղքատի, թէ հարստի, թէ հզօրի և թէ տկարի մէջ և ամենին սրբում, երանելի է դարձնում, ինչպէս նաև մի սիրտ, մի հոգի տալով՝ Աստծու ընտանիք կազմում, որ ապրում է Աստծու յաւիտենական սիրով: Այստեղից յառաջ է գալիս Աստծու արքայութեան կրկին նշանակութիւնը—Աստծու արքայութիւնը անհատի մէջ և Աստծու արքայութիւնը ընդհանրութեան—հասարակութեան մէջ: Ահա թէ Փրկիչն այս աշխարհում ինչ թագաւորութիւն էր ուզում հիմնել, որ այս աշխարհից չէր, այլ երկնքից էր բերել և դարձեալ երկինք պէտք է տանէր և մեզ երկրայիններիս երկնային դարձնէր: Եւ այն երանութիւնը, երջանկութիւնը, որ մենք սպասում ենք սովորաբար այն աշխարհից, իրանց սկիզբն առնում են այստեղից. ուստի և մեր երկրային կեանքը մեզ համար մի տեսակ երկինք պէտք է դարձնենք: Սրա համար էլ Փրկիչը քարոզում էր, թէ «Արքայութիւնը ձեր մէջ, ձեր սրտերումն է»: Քրիստոս Իր ամբողջ կեանքի ընթացքում Իր վարդապետութեամբ աշխատում էր հիմնել այդ թագաւորութիւնը, որի համար հալածուեց, չարչարուեց և գողգոթայ բարձրացաւ: 2) Այս առակից դուք էլ, սիրելի աշակերտներ, պէտք է խրատ առնէք: Ձեր սրտերն այժմ նմանվում են ագարակին: Ուսումնարանն ազարակ է, իսկ ձեր ուսուցիչները՝ սերմանացան: Աշխատեցէք լցնել ձեր սիրտն ու միտքը Աստծու խօսքերով, որ կեանքի մէջ մտնելով՝ աճեցնէք, զօրացնէք նրանց և բարի պտուղ տաք:

բ. Ողորմած Սամարացիք

I. Մի օրինական հարցրեց Յիսուսին. «Ես ի՞նչ պէտք է անեմ, որ յաւիտենական կեանք ստանամ»: Յեսուս պատասխանեց. — Ի՞նչ է գրուած օրէնքի մէջ և ի՞նչպէս ես կարդում:— Օրինականն ասաց. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտով, քո բոլոր հոգու զօրութեամբ, քո բոլոր մտքով և քո մերձաւորին՝ ինչպէս քեզ»: Յիսուս պատասխանեց. — Ուղիղ ասացիր. գնահ, այդպէս արա և կըստանաս: «Իսկ ո՞վ է իմ ընկերը», հարցրեց օրինականը: Յիսուս այս խօսքին պատասխանեց առակով.

— Մի մարդ Երուսաղէմից գնում էր Երիքով: Ճանապարհին յարձակուեցին նրա վրայ աւազակներ, վիրաւորեցին նրան, թողին կիսամեռ և գնացին: Անցաւ այս ճանապարհով մի քահանայ. նա տեսաւ վիրաւորուածին և ուշադրութիւն չդարձրեց: Անցաւ նոյն տեղով մի դեւտացի. նա էլ տեսաւ վիրաւորուածին և ուշադրութիւն չդարձրեց: Յետոյ անցաւ մի Սամարացի. սա

տեսնելով վիրաւորուածին՝ մօտեցաւ. նրան, լուաց նրա վէրքերը, իւղ և գինի թափեց վրան, փաթաթեց և նստեցնելով իր գրաստի վրայ, տարաւ հիւրանոց: Կանչեց հիւրանոցի տիրոջը, փող տուաւ և խնդրեց հոգալ հիւանդի մասին, աւելացնելով և այն, որ եթէ աւելի ծախսէ, իր վերադարձին կըհատուցանէ: Ինչ ես կարծում այս երեքից ո՞վ էր մօտ վիրաւորուածին, հարցրեց Յիսուս: Օրինականը պատասխանեց. «Նա, որ ցոյց տուաւ օգնութիւն»:— Գնահ և զու այդպէս արա, ասաց Փրկիչը, և յաւիտենական կեանք կը ստանաս:

II. Ի՞նչ գլխաւոր պատուիրաններ կան օրէնքում: Ի՞նչ առիթով ասաց Յիսուս այս առակը Ի՞նչպէս բացատրեց նա, թէ ո՞վ է մեր ընկերը—մերձաւորը: Ինչի՞ մէջ է կայանում ողորմած Սամարացու առակի միտքը: Բ՞ով է մեր ընկերը:

III. Այս առակից մենք տեսնում ենք. 1) Յիսուս Բրիտոս հրաւիրում է մեր ուշադրութիւնը, թէ երկնային արքայութիւն գնալու համար բաւական չէ, որ մարդ գիտենայ այս կամ այն, այլ հարկաւոր է, որ նոյնը և գործէ: Նա այս առակը պատմելով՝ կամենում էր ցոյց տալ, թէ ո՞վ որ նեղութեան մէջ է, նա ամեն

մարդու ընկերը—մերձաւորն է և մարդու բարոյական պարտքն է կարեկցել նեղեալին՝ լինի նա բարեկամ, ծանօթ, թշնամի թէ ապերախտ...: Ձեռք մեկնել անկեալին, օգնել, մխիթարել, արտասուէք սրբել՝ նա կարող է, ով ճշմարիտ սէր ունի իր մէջ: Սամարացու առակի մէջ հանդէս են բերուած սէր, գուժ, կարեկցութիւն և դրանց հակառակ՝ անտարբերութիւն, անգթութիւն և անկարեկցութիւն: Այդպիսի սէրը՝ դէպի մերձաւորը Փրկիչը բերաւ աշխարհ և դա անուանվում է քրիստոնէական սէր: Սկզբում ընկերական սէրն ընդարձակ մտքով չէր հասկացվում, այլ սահմանափակ: Ընկերական սէր ասելով՝ մարդիկ ընդունում էին, որ պէտք է սիրել միայն իրանց՝ ազգականներին, բարեկամներին, պաշտօնակցին, իրանց ազգին... և ատեն օտարներին, թշնամիներին...: Հրեաների մեծագոյն մասն էլ ընկերական սէրն այդպէս էր ընդունում, որովհետև այդ էին քարոզում փարիսեցիներն ու օրինականները (օրէնքի մեկնիչները): Նկատելի է, որ շատերը, նոյնիսկ ներկայ ժամանակներում, ընկերական սէր են ցոյց տալի դէպի մերձաւորը՝ սրա-նրա խնդրելովը, խաթեր, պատուի, դիրքի կամ որևէ ակնկալութեան համար: Թէև դա էլ օգնութիւն է, բայց ո՛չ սրտով: Այդպիսիները իրանց սրտով չեն զգում կարեկցութիւն: 2) Մենք տեսնում ենք այս առակի մէջ, որ չար մարդիկ—աւազակները յափշտակում են մի մարդու ունեցածը, անգուժ կերպով վիրաւորում, խոցոտում են նրան և թողնում կիսամեռ ճանապարհի վրայ անապատի մէջ: Քահանան և ղևտացին (վերջինը նոյնպէս տաճարում սպասաւորողներին էր),—որոնք Աստծու պաշտօնեաներ էին, դիտէին Նրա պատուիրանները և հրաւիրուած էին իրանց կեանքով ու վարքով օրինակ լինել ժողովրդին, մանաւանդ քահանան, որ պարտականութիւն ունէր ուսուցանելու և ուրիշներին,—տեսնում են վիրաւորուածին նեղութեան մէջ, մերձ ՚ի մահ, բայց անտարբեր սրտով վերաբերուելով և անխնամ թողնելով՝ անցնում են: Աստուածային սիրոյ այս օրէնքը, որ գրուած էր Ս. Գրքի մէջ, նրանք միմիայն կարգում էին, իսկ սրտները դատարկ էին: Երևում է նրանց վարմունքից, որ չէին ծառայում իրանց կոչմանը. նրանք նուիրուած չէին ժողովրդի ծառայութեանը, այլ վարձկաններ էին և մտածում էին միմիայն իրանց օգտի, իրանց ապրուստի ու բարեկեցութեան մասին. իսկ կարեկցել օտարի վշտերին, նեղութեան ժամանակ օգնել, մխիթարել, անսովոր բաներ էին նրանց սառը սրտին: Հարկաւ նրանք ուրիշ կերպ կը վարուէին, եթէ այդ վիրաւորուածը ո՛չ թէ անմարդաբնակ անապատում, այլ Երուսաղէմի փողոցներից մէկում լինէր, որպէսզի տեսնէին և գովէին նրանց արածը: Ներկայ ժամանակներում ևս նկատելի կարող են լինել Աստծու և ժողովրդի ծառայութեանը նուիրուած անձանց մէջ նոյնպիսի անտարբեր վարմունք դէպի իրանց կոչումը:

3) Սամարացու վարմունքի վրայ մարդ հիանում է. նրա արածը գովելի և օրինակելի է: Հէնց որ տեսնում է վիրաւորուածին, զգում է նրա ցաւը և խճալով, կարեկցելով՝ թողնում է ամեն ինչ և իջնելով զբաստից, մօտենում է նրան և շուտով օգնութիւն հասցնում: Նա չէ բաւականանում ցաւակցելով, մխիթարական խօսքեր ասելով, այլև գործով ցոյց է տալիս իր բարեսրտութիւնը: Չէ սպասում, որ վիրաւորեալը խնդրէ, աղաչէ, այլ օգնում է ազատ կամքով. չէ սպասում ոչ ոքից գովասանութիւն լսելու, չէ մտածում իր կրեւիք նե-

ղութիւնների և ժամանակի կորստեան վրայ, այլ ինքն իր ձեռքով հողում է, լուանում է վերքերը, ձէթ է քսում, փաթաթում է և ցաւը մեղմացնում, գինի է տալիս՝ սպառուած ոյժերը կազդուրելու համար և իր գրաստի վրայ նստեցնելով տանում, հասցնում է պանդոկ— իջևանը: Յանձնում է պանդոկապետին՝ երկու դահեկան տալով (դահեկանը մօտաւորապէս 40 կոպ. է), որ հող տանի հիւանդի վրայ, իսկ ինքը գնում է, խոստանալով վերադարձին վճարել՝ եթէ աւելի ծախսի: Նա այս անում է առանց ակնկալութեան, առանց սպասելու ապագայում նրանից վարձատրութեան, շնորհակալութեան: Չէ հարցնում, թէ ինչ աղբից է, ինչ դաւանութեան է պատկանում, ինչ վիճակի տէր է, հարուստ է, աղքատ է, բարեկամ է թէ թշնամի: Նա այդ անում է լիկ մարդասիրական զգացմունքից դրդուած: Ահա թէ ճշմարիտ քրիստոնեան ինչպէս պէտք է վերաբերուի դէպի ընկերը—մերձաւորը: 4) Այս առակն ունի և խորհրդաւոր բացատրութիւն: Մեր սուրբ հայրապետների մեկնութեամբ Սամարացիին ճշմարիտ օրինակ է Յիսուսի, որ անխորաքար ամենին սիրում, օգնում էր: Վիրաւորեալը եւ վերքերը՝ մարդկային անկեալ բնութիւնը—հողւոր վերքերն են, որ մարդու ապականեալ գրութեան էին հասցրել, որ բուժեց Քրիստոս իր Աւետարանով: Քահանան եւ դէսացիին՝ հին ուխտի մարգարէներն են, որոնք տեսան վիրաւորուածին և անցան: Իջեաւը—եկեղեցին է, որ հաստատեց Յիսուս՝ մարդկանց սրտի վերքերը բժշկելու համար: Երկու դահեկանը՝ հին և նոր Կտակարանն է, որ է փրկութեան ճանապարհը—միջոցը, իսկ վերադարձը՝ Փրկչի երկրորդ գալուստն է և վարձատրութիւնը:

№ 16.

գ. Ողորմած Թագաւորի եւ չար ծարայի առակը

I. Յիսուս ասաց հետեւեալ առակը. «Մի թագաւոր իր ծառաներից հաշիւ պահանջեց: Նրա մօտ բերին մի մարդ, որ պարտ էր նրան տասը հազար քանքար (մի քանքարը 2400 ու. է): Նա տեսաւ, որ հատուցանելու բան չունի, հրամայեց ծախել նրա բոլոր ունեցածը՝ իրան, կնոջն ու որդոցը և պարտքը հատուցանել: Պարտապանը լսելով այս՝ ընկաւ նրա ոտքերը և ասաց. «Տէր, համբերիր, ես բոլոր կը հատուցանեմ քեզ»: Թագաւորը խղճաց ծառային, արձակեց և պարտքն էլ ներեց:

Այդ ծառան զուրս գալով թագաւորի մօտից, տեսում է իր ընկերներից մէկին, որ պարտ էր իրան հարիւր ղենար (ղենարը 20 կոպ. է). բռնում է նրան, խեղդում և ասում. «Վճարիր՝ ինչ որ պարտ ես»: Ընկերն ընկում է նրա ոտքերը, աղաչում է և ասում. «Համբերիր, ժամանակ տուր, ես բոլոր կը հատուցանեմ»: Բայց նա չկամեցաւ սպա-

սել և բանտարկել տուաւ՝ մինչև վճարէ պարտքը:

Նրա ընկերները տեսնելով այս՝ շատ արամեցին և գնացին պատմեցին թագաւորին: Թագաւորը կանչեց նրան և ասաց. «Չար ծառայ, դու ինձ խնդրեցիր և ես քո բոլոր պարտքը ներեցի, մի թէ դու էլ պարտական չէիր քո ընկերին ներել»: Այս ասելով՝ բարկացաւ և յաճնեց նրան դահիճներին, որ չարչարեն, մինչև բոլոր պարտքը վճարէ:

Այսպէս և Իմ երկնաւոր Հայրը կը վարուի ձեզ հետ, եթէ դուք էլ չէք ներիլ ձեր եղբոր—ընկերի յանցանքները»:

II. Քանի քանքար էր պարտ ծառան թագաւորին, Ի՞նչ հրամայեց թագաւորը և ծառան ի՞նչ խնդրեց: Ընդունեց արգեօք թագաւորը ծառայի խնդիրը և ինչպէս վարուեց: Ի՞նչպէս վերաբերուեց այդ ծառան դէպի իր ընկերը, որ նրան փող էր պարտ: Ի՞նչպէս վարուեց նրա հետ: Իմացաւ արդեօք թագաւորն այդ ծառայի տգեղ վարմունքը և ի՞նչ հրամայեց: Ի՞նչ է այս առակի միտքը:

III. Այս առակով Փրկիչը կամենում է հասկացնել ժողովրդին. 1) որ Աստուած ներում է այն մարդկանց մեղքերը, որոնք իրանք էլ ներում են իրանց ընկերի—

մերձաւորի վիրաւորանքներն ու մեղքերը: Սրանով Փրկիչը խոնարհութեան և ներողամտութեան ոգի է ներշնչում և պատուիրում է ներել ոչ թէ մի անգամ, այլ եօթանասուն և եօթն անգամ: Իսկ ով այստեղ՝ երկրիս վրայ չի ներիլ իր ընկերին, նա ինքն էլ ներումն չի ստանալ երկնքում: 2) Մենք տեսնում ենք առակի մէջ թագաւորի ողորմութիւնը և ծառայի անխղճութիւնը: Թագաւորը՝ կարեկցութիւնից, բարեսրտութիւնից և ողորմածութիւնից զթաշարժուած, ներում է իր ծառայի բոլոր պարտքը, այն ինչ այդ ծառան՝ իբրև անխիղճ և անպարտաճանաչ, որի վրայ տիրոջ վարմունքը ոչինչ պարտաւորութիւն չէ թողնում, փոխանակ երախտագէտ լինելու և ներողամիտ գտնուելու դէպի իր ընկերը, անխիղճ կերպով է վարվում նրա հետ և բանտի մէջ գցելով՝ պահանջում է իր պարտքը վճարել: Ընկերոջ արցունքները, աղաչանքն ու խնդիրը, որ համբերէ, ժամանակ տայ վճարելու համար, ոչինչ ներգործութիւն չէ անում նրա սրտի վրայ: Նա անգութ և վաշխառուի մէկն է երևում և միայն իր վրայ է մտածում: Նա մոռանում է, որ ինքն էլ մի փոքր առաջ նոյն վիճակի մէջն էր, մոռանում է իր տիրոջ բարեսրտութիւնը, որից ողորմութիւն և համբերութիւն էր խնդրել և ներումն ստացել: Ծառայի այս զգուելի վարմունքը և չլուած անգթութիւնը թագաւորի ականջին է հասնում: Նա արդար բարկութեամբ լցուած՝ երեսովն է տալիս անխիղճ ծառայի տգեղ վարմունքը և յիշեցնելով իր արած ողորմածութիւնը՝ նորից պահանջում է իր պարտքը նոյնպիսի անդրուելի կերպով: Չար ծառան արժանի էր այդ պատժին, տէրն արդարութեամբ վարուեց: 3) Առակի մէջ յիշուած թա-

գաւորը Աստուած է, ծառաները՝ մարդիկ: Հաշիւ տեսնելը միշտ պատահում է մեր և Աստուծո մէջ ամեն ըստ է, երբ դիմում ենք Նրան մեր աղօթքով, կատարած գործերով և սրտով ու մտքով, ասել է՝ հաշիւ ենք տալիս, իսկ վերջին հաշիւը լինում է մեր մահուան անկողնում: Բիւր քանքարը նշանակում է երկրային և երկնային, հոգեւոր և մարմնաւոր բարիքները, որ Աստուած տալիս է մարդուն ամեն օր, ամեն ըստ է: Այդ բարիքների փոխարէն մենք ոչ մի բանով պարտավճար չենք կարող լինել և նա չի էլ պահանջում: Նա ուրիշ փոխարինութիւն է պահանջում իր տուած բարիքների համար. Նա պահանջում է մեր սիրտը, սէր և հնազանդութիւն: 4) Մենք տեսնում ենք, տարաբաղաբար, որ շատ պարտատէրեր կան, որոնք չար ծառայի նման են վարվում: նրանք վիրաւորանք են պատճառում և ներողութիւն ասածը մոռանալով՝ վրէժխնդիր են լինում, որով և կրկին ցաւ պատճառում: Այդպիսիներին Աստուած անպատիժ չէ թողնում: Նրա բարութիւնը՝ այդպիսիների վերաբերութեամբ խտուրտեան է փոխարկվում, իսկ ողորմածութիւնը՝ արդարութեան: Մեր ժամանակում ևս՝ չնայելով, որ Աւետարանը ամեն տեղ տարածուած է, կան մարդիկ — քրիստոնէսներ, որոնք իրանց եղբօր սխալանքը չեն ներում, այլ վատութիւնը վատութեամբ են հատուցանում: Յիսուս այս առակով կամենում է այդ քարասիրտների ներողամտութիւնը շարժել դէպի իրանց նմանները: Փրկիչն իր ամբողջ երկրաւոր կեանքի ընթացքում խօսքով, մանաւանդ գործով ներողամիտ է եղել և ներողամիտ է դէպի թշնամիներն ու ատուները, Նա՝ քրիստոնէական ներողամտութեան այս Աստուածային

օրէնքը միշտ լիշեցնելու համար, զետեղել է իր սովորեցրած աղօթքի մէջ. «Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»:

№ 17.

դ. Անառակ որդու առակը

I. Փրկիչն ասաց հետեւեալ առակը. «Մի մարդ երկու որդի ունէր: Փոքր որդին խընդրեց հօրից՝ տալ իր ժառանգութեան մասը: Հայրը բաժանեց և տուաւ: Միքանի օրից յետոյ փոքր որդին ժողովեց իր ունեցածը և վնասց հեռու երկիր: Այնտեղ նա սկսեց անառակ կեանք վարել և վատնեց իր կարողութիւնը: Երբ բոլորն արդէն սպառել էր, սաստիկ սով ընկաւ այն երկրում և ինքն էլ աղքատացաւ: Կարօտութիւնից ստիպուած նա ծառայ մտաւ և տէրը հանդն ուղարկեց՝ արածացնելու իր խոզերը: Նա հաց չգտնելով, ցանկանում էր իր փոքր լցնել նրանով, ինչ որ խոզերն էին ուտում, բայց այն էլ չէր գտնում: Այս նեղութեան մէջ նա յիշեց իր հայրենի տունը և ասաց, «Ի՛նչքան ծառաներ կան իմ հօր տանը՝ հացով կուշտ, իսկ ես

այստեղ սովից մեռնում եմ. կ'երթամ հօրս մօտ և կ'ասեմ նրան. «Հայր, մեղաւոր եմ Աստծու և քո առաջ, արժանի չեմ այլևս քո որդի կոչուելու. ընդունիր ինձ ինչպէս քո ծառաներից մինը»։ Այս ասելով նա եկաւ հօր մօտ։ Հայր հեռուից տեսաւ որդուն, խղճաց, դուրս գնաց նրա առաջ, փաթաթուեց և համբուրեց։ Որդին ասաց. «Հայր, մեղաւոր եմ Աստծու և քո առաջ, արժանի չեմ, որ ինձ որդի անուանես»։ Հայրը հրամայեց ծառաներին հազցնել նրան նոր պատմուճան և կօշիկներ և մատանին գնել մատը, մորթել պարարակ եզր, ուտել և ուրախանալ, «որովհետեւ, ասում էր, իմ այս որդին մեռած էր և կենդանացաւ, կորած էր և գտնուեց»։ Եւ սկսեցին ուրախութիւն անել։

Մեծ որդին՝—հանդից տուն վերադառնալիս լսում է երգի և պարի ձայներ և հարցնելով ծառաններից մէկին, երբ իմանում է իր եղբօր գալը, ուրախութեամբ ընդունուելը հօրից և պարարակեզան մորթուելը, — ասատիկ բարկանում է և չէ կամենում ներս

մտնել տուն։ Հայրը դուրս գալով խնդրում է մասնակից լինել ուրախութեան, բայց որդին նեղացած պատասխանում է։ «Հայր, ես այսքան տարի բեղ ծառայում եմ, երբ բէք քո խօսքից չեմ անցել, մի ուլ չմորթեցիր, որ ուրախանամ իմ բարեկամներին հետ, իսկ երբ եկաւ քո անառակ որդին, դրա համար մորթեցիր պարարակ եզր»։ Հայրը ասաց. «Որդեակ, դու միշտ ինձ մօտ ես և բոլոր ունեցածս քոնն է, բայց հարկաւոր է ուրախանալ, որովհետեւ քո եղբայրը մեռած էր և կենդանացաւ, կորած էր և գտնուեց»։

II. Քանի որդի ունէր հայրը։ Ի՞նչ խնդրեց փոքր որդին և հայրն ինչպէս վարուեց։ Ո՞ւր գնաց փոքր որդին և ինչպիսի կեանք էր վարում։ Ի՞նչ պատահեց այն երկրում, ուր ապրում էր փոքր որդին։ Ի՞նչ պաշտօնի մտաւ նա, երբ ազբատացաւ։ Ի՞նչը ստիպեց նրան յիշել իր հայրենի տունը և ինչ մտածեց։ Ի՞նչ ասաց հօրը, երբ տեսաւ նրան։ Ի՞նչպէս ընդունեց հայրը և ինչ կարգադրութիւն արաւ։ Ո՞վ չուրախացաւ նրա վերադարձով։ Ի՞նչ ասաց նա և հայրն ինչ պատասխանեց։

III. Այս առակից մենք տեսնում ենք. 1) որ Աստուած ինչպէս ողորմած Հայր՝ ուրախութեամբ է ընդունում ապաշխարող մեղաւորին։ Ո՞վ այս առակի նշա-

նակութիւնն ըմբռնել է՝ նա հասկացել է քրիստոնէութեան ամբողջ էութիւնը: Այս առակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր սրտի և մեր կեանքի պատմութիւնը, որից երևում է, թէ ինչպէս մարդ անմեղութիւնից ընկնում է յանցանքի մէջ և վերջապէս զգալով իր սխալը, ապաշխարում է և սրտանց զղջալով՝ կրկին վերականգնում, հասնում է իր նախկին վիճակին—անմեղութեանը:

2) Մեր առաջ պատկերանում է մի անհնազանդ և ապերախտ որդի, որ մոռանալով հօր արած բարիքը, ծանր է թվում լսել նրան և նրա պատուէրների համաձայն սպրել: Նա մեծամտութեամբ կարծում է, թէ ինքը միայնակ, առանց հօր օգնութեան՝ կարող է ազատ լինել և իր սրտի ուզածին պէս սպրել և այդ ազատութիւնը կարող է շատ քաղցրութիւններ պատճառել իրան: Հայրն՝ էլ չկամենալով ստիպմամբ հնազանդութեան մէջ պահել իր որդուն, չէ արգելում և թօյլ է տալիս նրան անել, ինչ որ ցանկանում է, համոզուած լինելով, որ ապերախտ որդին իր սեփական փորձերով աւելի կը խրատուի և միայն աշխարհիս դառնութիւնները կը խելօքացնեն նրան: Արդարև, նա առաջին անգամ օտարութեան մէջ գտնում է զուարճութիւն և ազատութիւն, որովհետև ինքն էր իր գլխի տէրը, ազատ էր հօր հսկողութիւնից և ինչ որ ցանկանում էր, գործում էր, ժամանակն ուրախ էր անցկացնում իր նման ընկերների հետ: Ո՛չ մի յորդորող ձայն չէր դիպչում նրա ականջին. ազատ ուտում, խմում, կեանք էր վարում, ինչպէս կամենում էր: Ոչ ոք էլ չէր վտահանում նկատել, զգուշացնել, քաշուելով նրա յանդիմանութիւնից, թէ ինչ նրա բանն է խառնուել իր գործերի մէջ, ինքը գիտէ, թէ ինչպիսի կեանք պէտք է

վարէ: Եւ այդպէս շուտ կեանք վարելով՝ նա վտանում է իր բոլոր հարստութիւնը, կորցնում է իր առողջութիւնը և օրէցօր վատթարանալով, ընկնում է ամենաթշուառ վիճակի մէջ: Հոգով, մտքով աղքատ, մարմնով տկար, օտարութեան մէջ մեծակ, հեռու հայրենական տանից, ամենի աչքից ընկած, նոյնիսկ իր ընկերների, օրական հացի կարօտ, բոբիկ, ցնցոտիների մէջ փաթաթուած, ահա, նրա վիճակը: Արդէն հասել է մտածելու ժամանակը՝ վերադառնալու մասին. բայց ո՞վ այդպիսի վիճակի մէջ է եղել, ո՞վ այդպիսի յանցանքի մէջ է ընկել՝ նա կը լիշէ, որ յանցանքի հետ կապուած է և աղքատ հպարտութիւնը: «Աւելի լաւ է կորչեմ, քան թէ հօրս մօտ վերադառնամ. ես առանց նրան էլ կարող եմ ապրել»: Եւ նա որոնում է ապրելու միջոցներ, դիմում է իր ընկերներին, որոնց հետ ուրախ օրեր էր անցկացրել, բայց ոչ ոք նրան չէ ուզում ճանաչել. մինը ցաւում է նրա վիճակի վրայ, միւսը բաց է ասում, երրորդը տանը չէ, չորրորդը լոկ խօսքերով է մխիթարում... ոչ ոք չէ կամենում օգնութեան ձեռք կառկառել: Նա ստիպուած դիմում է անծանօթ մարդկանց և ծառայութեան տեղ խնդրում: Այդտեղ էլ է անաջողութիւն ունենում, և ո՞վ կարող էր ընդունել այնպիսի մի փչացած մարդու, որ իր բոլոր կարողութիւնը կերել, վատնել էր անառակ կեանք վարելով: Սովը սաստկանում է և նրա վիճակն օրէցօր վատթարանում. թնջ անէր. մտածում էր՝ վերադառնալ թէ ոչ... — Ո՛չ, դարձեալ կրկնում է աղքատ հպարտութիւնը: Եւ նա զնում է նոյն երկրի մի հեթանոս քաղաքացու մօտ և սկսում է նրա խոզերն արածացնել: Նա կարօտում է խոզերի կերած կերակուրին, բայց այն էլ չէ

գտնում: Թշուառութեան բաժակը լցվում է, էլ աւելի տանել չէ կարողանում. մնում էր նրան՝ կամ վերջ տալ իր կեանքին, կամ վերադառնալ: Վերջապէս այնքան երկար և դառն փորձերից յետոյ կարիքն ստիպում է նրան մի հայեացք գցել իր ներքին աշխարհի՝ սրտի վրայ: Նա լիշում է իր հայրենի երկիրը, հօր տունը, շատ հաց, կուշտ մարդիկ, մշակների լաւ վիճակը, այն ինչ ինքը սովամահ է լինում: Նա համեմատում է իր նախկին կեանքը ներկայի հետ և գալիս է այն եզրակացութեան, որ ինքն է եղել այդ բոլոր թշուառութիւնների պատճառը, որ ազատութիւն և ուրախութիւն փնտրելով՝ ընկել է թշուառութեան մէջ: Նրա այս մտածմունքը դառնում է կամք և ծագում է նրա մէջ այն հաւատը, թէ հայրը կը խղճայ և կը ներէ, դուրս չի անիլ տանից, և հաւատարմով հօր անփոփոխ սիրոյն և ողորմածութեան՝ վերադառնում է: 3) Մենք տեսնում ենք, որ հայրը սիրով է ընդունում զզջացող որդուն. նա չէ ասում ո՛չ մի նախատական խօսք, չէ լիշում անցեալը և ոչ մի յանդիմանութիւն չէ անում, այլ կարեկցաբար նայում է նրա վրայ և լի ուրախութեամբ ընդունում. այն ինչ մեծ որդին իր սրտի դժգոհութիւնն է յայտնում հօրը, որ նա ընդունել է և տանից դուրս չէ արել իր մեղաւոր եղբօրը: Հօր իմաստալից պատասխանը մեզմացնում է եղբօր բարկութիւնը և նա հաշտվում է: Աստուած յանցաւորին չէ արգելում իրանից հեռանալու, որովհետեւ նա բռնի հնազանդութիւն չէ սիրում. նա կամենում է, որ յանցաւորը իր անձնական փորձով համոզուի: Թէև առաջին անգամ վայելք և բաւականութիւն է ստանում, բայց յետոյ այդ բոլորին հետևում է երկարատեւ և խորին վիշտ, որ խիստ ներ-

գործութիւն է ունենում յանցաւորի վրայ. դրանից յետոյ նա սկսում է ինքն իրան հաշիւ տալ, մտածել: Սրան հետևում է դառն զղջում, այն է՝ վերադառնալ: 4) Այս առակի մէջ հայրն՝ Աստուած է, անդրանիկ որդին՝ հրեշտակներն են, իսկ փոքր որդին՝ մարդկութիւնը: Փոքր որդու հեռանալը օտար երկիր, Ադամի՝ դրախտից դուրս անուելը— հեռանալն է: Սով ընկնելը՝ նշանակում է Աստուածային շնորհքի վերանալը ժողովրդի միջից և հոգևոր կեանքից զրկուելը: Պարարակ եզր՝ Գրիստոսն է, Որ զօհուեց մեր փրկութեան համար: Առաջին պասմունիանը, մասանին և խնջոյք՝ նշանակում է այն ուրախութիւնը, որով Աստուած ընդունում է մեղաւորին և իր Հայրական օռատ ողորմութեամբ վերադարձնում է նրա կորցրած շնորհքը:

№ 18.

Ե. Մեծասան եւ Ղազարոսի առակը

I. Փրկիչն ասաց հետևեալ առակը. «Մի հարուստ մարդ կար. նա հագնում էր բեհեզ և ծիրանի և շարունակ ուրախութիւններ էր անում: Միւկնոյն բաղաքում կար և մի աղքատ մարդ, Ղազարոս անունով, որ ծածկուած էր վերքերով և հարստի դռանն ընկած՝ կերակրվում էր այն փշրանքներով, ինչ որ թափվում էին նրա սեղանից, իսկ

շներն էլ գալիս և լիզում էին նրա վեր-
քերը:

Մեռաւ աղքատը և հրեշտակները տա-
րան նրա հոգին Աբրահամի գոգը (այն է՝
նախահայր Աբրահամի հետ արժանացաւ
երանութեան): Հարուստն էլ մեռաւ և
թաղուեց. նա դժոխքի տանջանքների մէջ
բարձրացնելով իր աչքերը և տեսնելով հե-
ռուից Աբրահամին ու Ղազարոսին նրա գո-
գում հանգստացած՝ աղաղակեց. «Հայր Աբ-
րահամ, ողորմիր ինձ և ուղարկիր Ղազա-
րոսին, որ իր մատի ծայրը ջրի մէջ թաց
անէ և զովացնէ լեզուս, ես պապակում եմ
այստեղ տաքութիւնից»: Աբրահամը պա-
տասխանեց. «Յիշիր, որդեակ, որ դու կեն-
դանութեանդ ժամանակ ստացար բո բա-
րիքները, իսկ Ղազարոսը՝ իր տանջանքները:
Այժմ սա այստեղ պէտք է մսխթարուի,
իսկ դու այդտեղ տանջուես: Բացի սրանից
մեր և ձեր մէջ մեծ անդունդ (վիճ) կայ,
որի պատճառով այստեղից ձեզ մօտ և այդ-
տեղից մեզ մօտ անցնել անկարելի է»: Այն
ժամանակ հարուստն ասաց. «Աւրեմն աղա-

չում եմ, հայր, որ ուղարկես Ղազարոսին այն
աշխարհը՝ իմ եղբայրների մօտ: Թող նա պատ-
մէ իմ գրութիւնը, որ նրանք էլ չգան այս
տանջանքի տեղը»: Աբրահամը պատասխա-
նեց. «Թող նրանք լսեն Մովսէսին և մար-
գարէներին (այսինքն՝ կատարեն Աստու-
օրէնքները, որոնք գտնվում են Ս.-Գրքի
մէջ): Եթէ նրանց չեն լսում, մեռելներից
յարութիւն առնողին էլ չեն հաւատալ»:

II. Ի՞նչպէս է նկարագրուած առակի մէջ հարստի և Ղա-
զարոսի կեանքը: Ի՞նչպէս է պատկերացրած նրանց կեանքը մահ-
ուանից յետոյ: Ի՞նչ էր խնդրում հարուստը Աբրահամից և սա
ինչո՞ւ չկատարեց նրա խնդիրը: Ի՞նչ խնդրեց հարուստն իր
եղբայրների համար և ի՞նչ պատասխանեց Աբրահամը:

III. Այս առակից մենք իմանում ենք. 1) որ եր-
կրային բարիքները չեն կազմում մարդուս երջանկու-
թիւնը և թէ աշխարհային հոգսերը, շուայութիւնը, ան-
կանոն ու չափազանց վայելքները արգելք են լինում
երկնքի արքայութիւնը մտնելուն: Թէ ինչ վիճակ է
սպասում մահուանից յետոյ այն մարդուն, որ սիրում
է միայն իր անձը, մտածում է միմիայն իր վրայ և
ինքն է միայն օգտվում իր հարստութիւնից, Փրկիչը
բաց է անում այս առակով վարագույրը և զգուշացնելու
համար մի բոպէ ցոյց է տալիս հանդերձեալ կեանքը,
որ մարդիկ տեսնեն, թէ որոնք այս աշխարհում հա-

րուստ և բազմաւոր են, այնտեղ՝ հանդերձեալում աղ-
քատ և թշուառ: Եւ ընդհակառակը՝ որոնք այստեղ
թշուառ և աղքատ են, այնտեղ՝ հարուստ և բազմաւոր:
Չափազանց մեծ է երևում այստեղի և հանդերձեալ
կեանքի տարբերութիւնը: Այստեղ ըստ մեծի մասին
շուայլ կեանք, անմիտ զուարճութիւն, իսկ այնտեղ
ոչ մէկը սրանցից, այլ յաւիտենական կեանք և ուրա-
խութիւն: Երկու տեսակ հաբստութիւն կայ՝ երկնային
և երկրային, առաջինը կոչվում է նիւթական, իսկ եր-
կրորդը՝ քրիստոնէական—բարոյական: Նիւթականը՝
անցաւոր, ժամանակաւոր է, իսկ բարոյականը՝ մշտա-
կան, անանց: Փրկիչը պատուիրում է՝ աւելի երկնային
գանձ ժողովել, որ ոչ ցեց, ոչ ուտիճ կուտեն ու կ'ա-
պականեն և ոչ գողերը կը յափշտակեն ու կը գողանան
և ուր գանձն է, այնտեղ են և մարդկանց սրտերը:
Երկնային գանձ են համարվում այն բոլոր բարի գոր-
ծերը, որոնք հետեանք են կենդանի հաւատի և յոյսի
առ Աստուած և անեղծ սիրոյ դէպի ընկերը—մերձա-
ւորը: Մարդու բարի անունը և նրա առաքինասէր
կեանքը և կատարած աստուածահաճոյ ու հասարակաց
օգտին բարեգործութիւնների հռչակը, փառքը այն գանձն
է, որ ոչ ոք չէ կարող նրանից յափշտակել, խլել, այլ նա
յաւիտեան կը մնայ: Այս փառքին կարող է հասնել
ամեն մէկը իր չափով, իր մտածողութեան եղանակով
ու գործով: Հարուստը՝ իր հարստութեամբ, եթէ նա
սխալ ճանապարհով չէ գործադրում, գիտնականը՝ իր
ուսմամբ, եթէ նա քանքարաթափոյց չէ և առաջնոր-
դում է մարդկանց ուղիղ ճանապարհով, աղքատը՝ իր
աղքատութեամբ և թշուառութեամբ, եթէ ունի մե-
ծահոգութիւն և համբերութիւն: Սրանցից ամեն մէկը

վարձատրվում է իր արածի համեմատ—յաւիտենական
երանութեամբ: 2) Մենք տեսնում ենք, որ այս առակի
մէջ բերուած հարուստը ապրում էր միայն իր համար և
շուայլութիւնն ու վայելք կոչուած աշխարհային ցան-
կութիւնները նրա սիրտն այնպէս էին գրաւել, որ ու-
րիշ ոչնչի վրայ չէր մտածում, բացի անմիտ զուարճու-
թիւններ անելուց, ուտելուց, խմելուց և ճոխ հագնե-
լուց: Նա անտես առնելով Աստծու պատուիրանները՝
երբէք չէ մտածել մի բան անել Աստծու համար, Որ
տուել էր նրան այդ ամենը: Թէև աղքատին նա իր տա-
նից դուրս չէ արել, թողել է, որ իր սեղանից թափ-
ուած փշրանքներով կերակրուի, բայց նրա այդ արածը
շատ չնչին է: Նա սրտի կատարեալ սառնութեամբ
վերաբերուեց դէպի ընկերը և առանց կերակրելու թո-
ղեց ոչ թէ մի անգամ, այլ երկար ժամանակ: Այսպէս կը-
վարուի միայն նա, ով քարասիրտ է: Եւ շատ բնական
է, որովհետև որկրամոլութիւնն անզգայ էր դարձրել
նրա սիրտը, նա չէր կարող մտածել Ղազարոսի մասին,
այն է՝ քաղցրացնել նրա դառը վիճակը, թէև նրա մի օրուայ
շուայլութեան ծախքը բաւական էր՝ այդ աղքատի ծանր
վիճակը թեթեացնելու և ապահովելու: Հարսի սիրտն ինք-
նասէր էր, այնտեղ Աստուած չէր բնակվում, դրա համար
էլ զուրկ էր սիրուց և նա անզգայ էր դէպի մերձաւորը:
3) Մենք տեսնում ենք, որ աղքատ Ղազարոսը տկար
լինելով չէ կարողանում աշխատութեամբ ձեռք բերել
իր օրական հացը. նա անտէր, անտուն է, ոչ ոք չունի
և բարեկամներից զուրկ, ցաւերով լիքը՝ նա թափա-
ռում էր մի տանից միւսը: Նա ուրիշների համար ոչինչ
չէր կարող անել, նրան շատ քիչ էր տուած. բայց կեանքի
մէջ՝ իր վերաբերմամբ նա հաւատարմութեամբ

և ժրութեամբ է աշխատել, նա շատ փորձու թիւններին
 համբերութեամբ է տարել: Նրա մերկութիւնը, տկա-
 րութիւնը, հացի կարօտ լինելը հեշտութեամբ կարող
 էին զարթեցնել նրա մէջ նախանձ, թէ ինչո՞ւ ուրիշներն
 ապրում են լաւ, իսկ ինքը՝ աղքատ: Բաղբաւոր մարդ-
 կանց վիճակը ատելութիւն կարող էր յառաջացնել, իսկ
 ցաւը, կսկիծը հեշտութեամբ կարող էին նրա մէջ զար-
 թեցնել տրտունջ դէպի Աստծու արդարութիւնը. բայց
 ոչ մինը տեղի չունեցաւ: Նա իր դառն վիճակի մէջ ան-
 դամ իր յոյսը չկտրեց Աստծուց և համբերութեամբ
 տարաւ իր վշտերը, ոչ ոքի հարստութեանը չնախան-
 ձեց: Որքան նրա ցաւերը բազմանում էին, այնքան էլ
 նրա յոյսը աւելանում էր՝ շուտով փրկութիւն գտնելու:
 Նա Աստծու տուած վշտերը համարում էր նախա-
 պատրաստութիւն՝ երկնային արդարութիւն ձեռք բե-
 րելու համար: Փրկութեան ժամը հասնում է, մահը
 վերջ է դնում ամեն նեղութեան: 4) Հարուստի
 համար, հարկաւ, ծանր կը լինէր մահը, որովհետեւ
 պէտք է բաժանուէր այն ամենից, ինչ որ սրտով սիրել
 է: Նա երկինք ու երկիր օգնութեան կը կանչէր հի-
 ւանդ ժամանակ, որ դարձեալ ապրէր, բայց իզուր.
 հարստութիւնը նրան չօգնեց, նա մեռաւ, միայն վատ-
 անուն թողնելով աշխարհի մէջ և թաղուեց, թէև
 փառաւորապէս: Մահուան հետ անհետացաւ և նրա
 անունը: Նրա հարստութիւնը, ոսկիները ժառանգեցին
 ուրիշները, որոնք մի կաթիլ արցունք անգամ զլացան
 թափել նրա դագաղի վրայ: Այսպէս երկուսն էլ՝ թէ
 հարուստ և թէ աղքատ, միատեսակ են մեռնում. նրանք
 այժմ հաւասար են, աղքատն այլ ևս աղքատ չէ, հա-
 րուստը՝ այլ ևս հարուստ, երկուսն էլ պառկած են

ցուրտ գերեզմանի մէջ, երկուսի դիակներն էլ դարձել
 են հող. մինի գերեզմանի վրայ կանգնած է արձան,
 իսկ միւսինը ծածկուած է փոքրիկ հողաբլրով: Նրանք
 իսկապէս հաւասարուած կը լինէին, եթէ մահուան հետ
 ամեն ինչ վերջանար. սակայն մահուանը հետևում է
 մի ուրիշ կեանք—յաւիտենական կեանք: Այնտեղ նրանց
 վիճակը դարձեալ տարբեր է լինում. մինն ստանում է
 կեանք, ուրախութիւն, միւսը՝ դժոխք, պատիժ, չար-
 չարանք: Հանդերձեալում Ղազարոսի ուրախութիւնը
 չէր կայանում ուտելու, խմելու և հագնելու մէջ, այլ
 նա վարում էր հոգեկան կեանք: Նրա ուրախութիւնը
 կայանում էր խղճի անդորրութեան մէջ, իսկ հարստի
 տանջանքը—ներքին անհանգստութեան՝ խղճի խայթի
 մէջ: Չպէտք է կարծել, թէ Ղազարոսը նրա համար
 եղաւ երջանիկ, որ այս կեանքում աղքատ ու ամբողջ
 էր, և հարուստը ստացաւ տանջանք, որովհետեւ այս-
 տեղ հարուստ և բաղբաւոր էր. ոչ մէկը և ոչ միւսը
 չէ կարելի պատիժ կամ վարձատրութիւն համարել, այլ
 աղքատը նրա համար եղաւ բաղբաւոր, որ իր կեան-
 քում իր աղքատութիւնն ու թշուառութիւնը առանց
 տրտնջալու տարաւ, երբէք չգանգատուեց, թէ ինչո՞ւ
 այս դառն օրերը իրան են վիճակուել. նա իր յոյսը
 միշտ դրել էր Աստծու վրայ: Այն ինչ՝ հարուստը իր
 ունեցածը սխալ ճանապարհով գործ դրեց. նա Աստծուն
 հաճելի գործեր չկատարեց, սէր չունեցաւ դէպի
 Աստուած և ընկերը—մերձաւորը: Սրանից կարող ենք
 հետևացնել, որ ո՞վ ճշմարիտ կերպով և համբերու-
 թեամբ է տանում Աստծու ուղարկած վշտերը և դրանց
 հետ գործ է դնում հեղութիւն, համբերութիւն, հա-
 ւատ՝ երանութիւն ձեռք բերելու համար, այդպիսին

ժառանգում է երկնքի արքայութիւնը. իսկ ով էր յոյսը երկնային բարիքների և մարմնական վայելքների վրայ է դնում, նրանց ապաւինում և նրանցից բազմաւորութիւն սպասում և նրանց յետեից ընկած՝ բարեպաշտական գործերն ու սէրը մոռանում, այդպիսին էր կեանքում ցանած սերմից միայն ապականութիւն կարող է ստանալ: 5) Մեր ժամանակն էլ հարուստ է այդ տեսակ մարդկանցով, որոնք երկրային հարստութիւններ ձեռք բերելով՝ իրանց կեանքն անց են կացնում միանգամայն աշխարհային վայելքների, զուարճութիւնների, շուտութիւնների և որկրամոլութեան յետեից ընկած, կարծես աշխարհ են եկել միայն դրա համար և թէ՛ պարտաւոր են այդ հարստութիւնը միայն իրանց վրայ գործադրելու: Այդպիսիները Աստուծո՞ւ տուած բարիքները սխալ ճանապարհով են գործ դնում և մոռանում են իրանց աղքատ մերձաւորին: Այդպիսիների կարելի է անուանել գրպանով հարուստ, բայց սրտով աղքատ: Կարելի ներկայումս էլ գտնել աղքատ Ղազարոսներ, որոնք կեանքի մէջ աղքատութիւն և ամեն տեսակ վշտեր ու զրկանքներ համբերութեամբ են տանում:

№ 19.

գ. Փարիսեցիքն և մաքսաւորը

I. Այն մարդկանց համար՝—որոնք իրանց համարում են արդար և պարծենում են

իրանց բարեպաշտութեամբ, իսկ ուրիշներին արհամարհում,—Յիսուս այս առակն ասաց.

«Մի անգամ մի փարիսեցի և մի մաքսաւոր մտան տաճար՝ աղօթելու: Փարիսեցին առանձին կանգնած՝ հպարտութեամբ ասում էր. «Շնորհակալ եմ Քեզանից, Աստուած, որ ես այնպէս չեմ, ինչպէս ուրիշ մարդիկ—յափշտակող, անիրաւ... և կամ ինչպէս այս մաքսաւորը: Շաբաթուայ մէջ երկու անգամ պահում եմ, տասանորդ եմ տալիս ամեն բանից, ինչ որ աշխատում եմ»: Իսկ մաքսաւորը հեռու կանգնած՝ նոյնիսկ չէր համարձակում աչքերը դէպի երկինք բարձրացնել, այլ բաղխելով իր կուրծքը՝ ասում էր. «Աստուած, բաւիր ինձ մեղաւորիս»: Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ վերջինս արդարացած գնաց իր տուն, բան թէ փարիսեցին: Որովհետեւ ո՞վ կը բարձրացնի իր անձը, նա կը ցածրանայ, իսկ ո՞վ կը ցածրացնի, նա կը բարձրանայ»:

II. Ի՞նչ առակ ասաց Յիսուս այն մարդկանց համար, որոնք իրանց արդար են համարում, պարծենում են, իսկ

ուրիշներին արհամարհումս ինչի մէջ է կայանում փարիսեցու և մաքսաւորի առակի միտքը: Ո՞վ էր փարիսեցին և ո՞վ մաքսաւորը: Աստուած նրանցից ո՞րի սղօթքը լսեց:

III. Այս առակից մենք տեսնում ենք. 1) Եթէ արտաքին բարեպաշտութիւնը կապուած չէ ներքին հոգեկան զգացմունքների հետ, նա կեղծիք է և անընդունելի է Աստծուն: Ով իր արժանիքն ինքն է չափում, նա սխալվում է, որովհետեւ կարող է սխալ չափով չափել: Այն ընդհանուր չափը՝ որով մարդիկ պէտք է չափուեն, Աստուած ինքն է: Կատարեալ լինելու համար՝ եթէ մէկը այդ չափով չափէ իրան, կը գտնէ, որ գեռ շատ հեռու է կեանքի նպատակից, որին՝ իր չափով չափելիս, հասած է համարում: Եւ ով իր այդ սխալ չափովը յանցաւոր է ճանաչում մարդկանց, այնպիսին հեռացնում է իրանից ամեն միջոց, որ կարող էր առաջնորդել նրան դէպի երկնքի արքայութիւնը: Յիսուս՝ պարծենկոտ մարդկանց այս ճշմարտութիւնը ցոյց տալու համար, պատմում է այս առակը: 2) Տեսնում ենք, որ փարիսեցին ինքն իրան արգար համարելով՝ կանգնում է համարձակ Աստծու սեղանի առաջ և հըպարտ աչքերը դէպի երկինք դարձրած՝ վստահ կերպով աղօթում է: Նրա աղօթքն իսկապէս շնորհակալութիւն է իրանից, որ այնպիսի անձն է դարձել: Նա գովում է իրան, պարծենում է, որ ինքը յափշտակող, անիրաւ չէ, և որպէս ապացոյց՝ իրան համեմատում է ամենավատ մարդկանց հետ: Զգուելի է փարիսեցիական այդ մեծամտութիւնը, զգուելի է և այն, երբ մարդ սխալ չափով է չափում և իրան մեծ տեսնում, իսկ իր մերձաւորին անարդար և պակասաւոր գտնում: Փարիսեցին արգա-

րանում է Աստծու առաջ նրանով, ինչ որ չէ արել: Նա առանց ամաչելու՝ ինքնադովութեամբ պատմում է այն ամենը, ինչ որ, որպէս թէ, Աստծու համար է գործել. շաբաթը երկու օր հոմ է պահել, ամեն տարի տասանորդ է տուել, մինչև անգամ չնչին բաներից: Նրա աղօթքից երևում է, որպէս թէ ինքն արգար է, Աստուած պարտաւոր է տալ նրան ամեն ինչ այս աշխարհում, իսկ հաղերձեալում էլ երկնքի արքայութիւնը նրանն է: 3) Մաքսաւորին տեսնում ենք, հեռու մի անկիւնում կանգնած. նա ամօթից աչքերը չէ կարողանում բարձրացնել դէպի երկինք, այլ զոջացած սրտով վայր է նայում, թակում է կուրծքը, ուր բնակվում է յանցաւոր սիրտը և միայն ասում. «Աստուած, քաւիր ինձ մեղաւորիս»: Այս համառօտ խօսքերի մէջ շատ միտք կայ թագնուած, որոնցով հասկացվում է թէ՛ Տէր, ես իմ գործերով իմ անձը Քեզանից շատ եմ հեռացրել, ես արժանի չեմ Քո առաջը կանգնելու: Ես մեղաւոր եմ, ես չեմ հետևել Քո պատուիրաններին, այլ իմ ցանկութեան, իմ ձգտումներին—փող ժողովելու, հարստանալու և բաւականութիւն ստանալու: Ես արժանի եմ պատժի. արգարադատ Աստուած, արժանի եմ որ մերժես ինձ Քո արքայութիւնից, որ մոռանաս ինձ, ինչպէս ես Քեզ մոռացայ: Ես խոստանում եմ այսօրուանից նոր կեանք վարել, լաւ ճանապարհով գնալ. ես յոյս ունիմ Քո անսահման սիրոյ և ողորմութեան վրայ: Աղաչում եմ, ներիր իմ մեղքերը և օգնիր ինձ իմ նոր ընտրած ճանապարհովս յաջող հետևանքի հասնելու: 4) Մենք տեսնում ենք երկու հակապատկեր—փարիսեցին իրան գովում է, մաքսաւորը՝ իրանից գանգատվում, փարիսեցին գերադասում է իրան միւսներին, մաքսաւորը՝ հեղ ու խո-

նարհ կերպով է կանգնած Աստծու առաջ. փարիսեցիներն պարծենում է իր առաքինութիւնների համար, մաքսաւորը աղաչում է ներել իր յանցանքները: 5) Այսօր էլ մեր մէջ կան և պտրտում են շատ փարիսեցիներ: Մի՞թէ փարիսեցիութիւն չէ, որ պարծենում են, թէ ամեն կիրակի եկեղեցի են գնում, աղքատներին փող են տալիս, Աստծու խօսքը սուրբ են պահում, ոչ ոքի չեն վիրաւորում, որ իրանք արբեցող, շռայլ, անիրաւ չեն: Ուրեմն զգուշանանք մենք ևս սխալ չափով չափելուց, հեռու լինինք ինքնագովութիւնից, ամբարտաւանութիւնից: Փարիսեցիներն ամբարտաւան էր, իսկ մաքսաւորը՝ խոնարհ: Մենք ամենքս էլ լաւ պէտք է ըմբռնենք, որ ինքնագովութիւնը փակում է մեր առաջ արքայութեան դուռը: Նա բաց կըլինի մեր առաջ, եթէ մեր մեղքերը խոստովանենք և Աստծու ողորմութեանը յանձնենք մեզ:

№ 20.

Է. Քանգարների առակը

I. Յիսուս ճետեալ առակը պատմեց. «Մարդու Որդին (Յիսուս) կը վարուի այն մարդու նման, որ հեռու երկիր գնալիս՝ կանչեց իր ծառաներին և իր կարողութիւնը նրանց յանձնեց: Մէկին տուաւ հինգ քանքար, միւսին երկու և երրորդին մէկ՝ իւ-

րաքանչիւրին իր ընդունակութեան համեմատ, և գնաց:

Այն ծառան՝ որ հինգ քանքար էր ստացել, գնաց, գործադրեց և աշխատեց նրա վրայ էլի հինգ քանքար: Նոյնպէս նա՝ որ երկու քանքար էր ստացել, գնաց և աշխատեց նրա վրայ էլի երկու քանքար: Մի քանքար ստացողը գնաց և թաղեց նրան հողի մէջ:

Երկար ժամանակից յետոյ վերադարձաւ տէրը և իր ծառաներից հաշիւ պահանջեց: Այն ծառան՝ որ ստացել էր հինգ քանքար, տուաւ տիրոջը էլի հինգ քանքար նրա վրայ շահած: «Լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, ասում է նրան տէրը, որովհետեւ փոքրի մէջ դու հաւատարիմ եղար, շատի վրայ կը կանգնեցնեմ քեզ. մտիր բո տիրոջ ուրախութեան մէջ»: Նոյնն ասաց և այն ծառային, որ վերադարձնելով երկու քանքարը՝ յանձրեց նրան էլի նոյնքան փող, որ ձեռք էր բերել իր աշխատութեամբ: Մօտեցաւ և նա, որ ստացել էր մէկ քանքար ու ասաց. «Տէր, ես գիտէի, որ դու խիստ

մարդ ես, հնձում ես, ինչ որ չես ցանել և ժողովում ես, որտեղ չես սփռել վախեցայ և թագցրի հողի մէջ քո քանքարը, ահա քոնը՝ բեզ: Տէրը պատասխանեց. «Չար և ծոյլ ծառայ. եթէ գիտէիր, որ ես խիստ մարդ եմ՝ հնձում եմ, ինչ որ չեմ ցանել և ժողովում եմ, ուր չեմ սփռել, այն ժամանակ դու պէտք է տայիր իմ արծաթը սեղանաւորներին, որ ես իմ վերադարձին պահանջէի նրանցից իմն: Այժմ առէք դրանից այդ քանքարը և տարէք տուէք նրան, ով ունի տասն քանքար: Իսկ այդ անպիտան ծառային դուրս հանեցէք արտաքին խաւարը, այնտեղ կը լինի լաց և ատամների կրճտոց:

II. Փրկչի ուսման համաձայն՝ ինչ է սպասում այն մարդկանց, որոնք անհոգ և անօգուտ կեանք են վարում: Ինչպէս արտայայտեց այդ ուսումը՝ Ո՛վ է հակացվում սուսկի մէջ տէր անունով, որ ծառաներին քանքարներ է տալիս: Ինչ է նշանակում քանքարներ և ինչ՝ նրա տոկոսը: Ո՛վ է իմացվում այն ծառայի անունով, որ քանքարը թաղել էր հողում:

III. Այս առակից մենք սովորում ենք. 1) որ Փրկչի երկրորդ գալստեան ժամանակ այն անձինք միայն վարձատրութեան կ'արժանանան, որոնք իրանց աստուածա-

տուր ձիրքերն արժանապէս կը գործադրեն այս աշխարհում և բարի պտուղ կը բերեն: 2) Մենք տեսնում ենք, որ Աստուած զանազան տեսակ պարգևներ—ոյժ, զօրութիւն, շնորհ և բարիքներ է բաժանել մարդկանց. մինին տուել է դրամ, միւսին՝ խելք, երրորդին՝ ֆիզիքական ոյժ և այլն: Ինչպէս պարգևները զանազան են, այնպէս էլ ստացողներն են զանազան տեսակ գործ դնում: Շատ քչերն են միայն Աստուած տուած պարգևները վայելուչ ձևով գործադրում՝ վարժեցնելով իրանց բարիք գործելու մէջ և հաւատարիմ մնալու իրանց կոչմանը: Իւրաքանչիւր մարդ պարտաւոր է Աստուած տուած կարողութիւնը, ընդունակուածութիւնը գործադրել ընդհանուրի օգտին՝ համաձայն Աստուած կամաց. դրա հակառակ՝ ամեն մէկը իր անհոգ, անօգտակար կեանքի համար պատասխանատու է Աստուած ահեղ դատաստանի առաջ: 3) Տէրը բաժանում է իր կարողութիւնը, հարստութիւնը, որովհետեւ չէ կամենում թողնել անգործ և առանց շահեցնելու. միւս կողմից կամենում էր ծառաների գործունէութիւնը փորձել, ուստի և զանազան քանակութեամբ գումարներ է բաժանում նրանց՝ համաձայն իրանց կարողութեան և աշխատասիրութեան: Երկու առաջին ծառաները այդ գումարներով գործ են սկսում և որովհետեւ հաւատարիմ և ժիր գործակատարներ են, նոյնքան էլ շահում են: Նրանք սիրում են իրանց տիրոջը և մտածում են նրա օգտի մասին, նոյնիսկ նրա բացակայութեան ժամանակ հաւատարիմ են: Երրորդ ծառան՝ տիրոջ դրամը թաղում է երկրի մէջ. նա ծոյլ է և աշխատելու ցանկութիւն չունի: Նա իր ծուրութիւնը ծածկելու համար յայտնում է տիրոջը, որ-

պէս թէ նրա բարկութիւնը, խստութիւնն է պատճառը
 դրամն առանց շահեցնելու թողնելը: Նա այն աստի-
 ճան ծոյլ է և տգեղ մտածողութեան տէր, որ սեղա-
 նաւորներին անգամ չէ տալիս դրամը շահեցողութեան:
 Եւ այդ ամենը նրանից է, որ չէ սիրում իր տիրոջը, նրա
 օգտի մասին չէ մտածում, դանդաղում է փոքրիկ գործ
 անգամ սկսել: Տէրը վերադառնալով գովում է ա-
 ռաջին և երկրորդ ծառաներին և որպէս վարձատրու-
 թիւն խոստանում է աւելի մեծ գործեր յանձնելու և
 իր ուրախութեան մասնակից անելու: Երրորդին յան-
 դիմանում է նրա ծուլութեան և չարութեան համար,
 որ իր ծուլութիւնը ստույգ վերարկուով է ծածկում,
 յանցանքը տիրոջ վրայ ձգում և յանդունդն կերպով
 դատում, որի յամար և պատժվում է: Տէրը երկուսին էլ
 հաւասար չափով է վարձատրում, չնայելով որ մէկը
 աւելի և միւսը պակաս էր ստացել: Եւ այս նրա հա-
 մար, որ ո՛վ ինչքան ստացել է, համեմատաբար նրա
 չափով էլ աշխատել է: Երկրորդն իր ժուլութեամբ, ջա-
 նասիրութեամբ և հաւատարմութեամբ հաւասար է ա-
 ռաջինին, ուրեմն և արժանի նոյն վարձատրութեան:
 4) Աստուած Իր ծառաներին—մարդկանց տուել է ան-
 թիւ, անհամար հոգևոր, մարմնաւոր և երկնային բա-
 րիքներ: Ո՛չ մի բարիք չկայ, որ մարդիկ Նրանից ստա-
 ցած չլինէին: Այս բարիքներին մարդիկ զանազան կեր-
 պով են մասնակցում և այնքան զանազան, որքան մար-
 դիկ կան երկրագնդի երեսին: Այս զանազանութիւնը
 անվերջ է. ո՛չ ոք չէ կարող մարդկանց իրար հետ հա-
 լասարացնել: Աստուած այս բարիքները, հարստութիւն-
 ները հաւատացել է մարդկանց, որպէսզի նրանք դրա-
 նով գործ սկսեն, բայց ո՛չ միայն իրանց համար, այլև

Աստուած: Աստուած արքայութեան մէջ աշխատող հաւա-
 տարիւմ մշակները նման են առաջին երկու ծառանե-
 րին, այսինքն՝ նրանք հաւատարմութեամբ աշխատում
 են իրանց տիրոջ համար, չեն մտածում անձնական
 օգտի, այլ յօգուտ մերձաւորի, համաձայն խղճի, որ-
 պէսզի ամենուրեք բարիք լինի: Այդպիսիներն իրանց
 ունեցած քանքարների վրայ նոր քանքարներ են աւե-
 լացնում, նրանք աշխատանքի միջոցով իրանց և
 ուրիշներին աւելի բարեպաշտ, աւելի հաւատարիմ,
 գթոտ, բարի կամեցող և բաղդաւոր են դարձնում և
 այդպիսով Աստուած բարիքները մարդկանց ձեռքում և
 սրտերում շահեցնում: Եթէ մէկն իր կոչումով, կարո-
 դութիւնով, ոյժով և շրջանով աւելի հաւատարմու-
 թեամբ և ջանասիրութեամբ է գործում, քան թէ միւսը,
 որ իրանից աւելի մեծ կոչում, կարողութիւն, ոյժ և
 գործելու շրջան ունի, առաջինը ևս արժանի է նոյն
 վարձատրութեան և գովասանքի, ինչ որ երկրորդը,
 որովհետև սա ևս իր սրտով նոյնքան հաւատարիմ է,
 ինչքան նա: Աստուած դատում է Իր ծառաներին ո՛չ
 թէ նրանց կատարած գործի քանակն 'ի նկատի ունե-
 նալով, այլ որակը, այսինքն թէ ինչ ոյժ ունին և ինչպիսի
 հաւատարմութեամբ են գործ դրել ստացած բարիքները:
 Նա հաւասար հաւատարմութեամբ գործողներին երբէք
 չէ զանազանում իրարից, չնայելով որ նրանք անհա-
 լասար քանակութեամբ են շահեցրել: Աստուած առաջ
 հաւասար արժէք ունին երկուսն էլ: 5) Աշխարհիս
 երեսին կան նաև անհաւատարիմ ծառաներ, որոնք ծու-
 լութեան պատճառով Աստուած հաւատացած բարիքները
 չեն շահեցնում, չեն գործ դնում: Այդպիսիներից շա-
 տերն էլ նոյն ծառայի նման զանազան պատճառաբա-

նութեամբ լանցանքն Աստու վրայ են ձգում: Այդպիսիները, եթէ երբեմն էլ փոքր ինչ գեղեցիկ բան են անում, այդ էլ նրա համար է, որպէսզի կարողանան Աստու, Քրիստոսի և քրիստոնէական դաստիարակութեան միջոցով ստացած երկնաւոր բարեքները փոխարէն հատուցանել, բայց շատ սխալվում են. վասնզի ով իր սրտում եղած փոքրիկ հաւատը, սէրը, հաւատարմութիւնը... ամեն մի լաջող հանգամանքում ցոյց չէ տալիս, նա այդ փոքրիկ հաւատը, սէրն էլ հետզհետէ նուազեցնում է և վերջապէս մեռցնում: Իսկ ով Աստու պարգևած բարեքները գործ չէ դնում, չէ շահեցնում, այնպիսին մեղանչում է Աստու և իր մերձաւորի դէմ, հետեաբար՝ արժանի է խիստ պատժի, ինչպէս քանքարաթափոց ծառան:

№ 21.

ը. Այգու մեակների առակը

1. Փրկիչն ասում է. «Երկնքի արքայութիւնը նման է մի տանուտէր մարդու, որ առաւօտեան վաղ դուրս գնաց մշակներ վարձելու իր այգու համար: Մշակներին՝ օրական մի դահեկան վարձ խոստանալով, ուղարկեց այգի: Ժամը երեքին (9-ին ըստ մեր) տեսաւ ուրիշ մշակներ, որոնք հրապարակում անգործ կանգնել էին և ասաց

նրանց. «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կըտամ»: Դարձեալ հրապարակ դուրս եկաւ ժամը վեցին (12-ին), իննին (3-ին) և նոյնպէս արաւ: Ժամը տասն և մէկին (5-ին) դուրս եկաւ հրապարակ, գտաւ ուրիշ մշակներ պարապ կանգնած և ասաց. «Դուք ևս գնացէք իմ այգին և ինչ որ արժանի է, կը ստանաք»:

Երեկոյեան այգու տէրը տան վերակացուին ասաց. «Վանչիր մշակներին և վարձ տուր նրանց՝ յետիններից սկսած մինչև առաջինները: Ժամը տասն և մէկին եկողները մօտեցան և ստացան մի-մի դահեկան: Առաջին մշակներն եկան և կարծում էին, թէ աւելի կըստանան, բայց նրանք էլ մի-մի դահեկան ստանալով սկսեցին տրանջալ և ասել. «Այդ յետինները մի ժամ միայն աշխատեցին և դրանց էլ մեզ հետ հաւասար վարձատրեցիր»: Տէրը նրանցից մէկին պատասխանեց և ասաց. «Ընկեր, ես քեզ չեմ զրկում. չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանով համաձայնեցիր. առ քո վարձը և գնա. ես կամենում եմ այս յետին-

ներին էլ քո չափ վարձ տալ. միթէ ես իրաւունք չունիմ իմ ստացուածքի հետ այնպէս վարուել, ինչպէս ցանկանում եմ. ինչո՞ւ ես դու նախաձուլ իմ առատաձեռնութեան վրայ»: Այսպէս յետինները կը վնին առաջին, իսկ առաջինները՝ յետին»:

II. Ինչին է նմանեցնում Յիսուս երկնքի արքայութիւնը: Ո՞րքան մշակներ ուղարկեց այգին և ինչ ժամանակներում: Ի՞նչքան էր վարձատրութիւնը վարձուած մշակների, Երեկոյեան ինչպէս վարձատրեց մշակներին և որոնք տրտնջացին: Ինչի՞ մէջ է կայանում այս առակի միտքը:

III. Այս առակով Փրկիչը կամենում է հասկացնել. 1) թէ այն քրիստոնեաները՝ որոնք իրանց կեանքի սկզբից են սկսել մշակել, աշխատել տիրոջ այգում՝ բարի գործել, որով և միշտ պարծենում են ու յանդիմանում ուշ եկողներին, այն է՝ կեանքի զանազան, նոյնիսկ ծերութեան ժամանակամիջոցում, — Տեսնեն, թէ ինչպէս և ինչ կարճ ժամանակամիջոցում այդ ուշ եկողները — վերջինները՝ առանձին ջերմեռանդութեամբ աշխատելով տիրոջ այգում՝ վրանց բարեգործական կեանքով՝ կարողանում են արժանանալ Աստուծոյ ողորմութեան և ստանալ առաջինների հետ հաւասար վարձատրութիւն: 2) Առաջին մշակներին տէրը տալիս է այն վարձը, ինչ որ սպասում էին, որ շատ իրաւացի է. որովհետեւ նրանք իրանց տգեղ մտածողութեան եղանակով՝ դրանից բարձր վարձատրութեան արժանի չէին, չնայե-

լով, որ աւելի գործ էին կատարել, քան թէ յետինները, որոնք սպասածից աւելի վարձ են ստանում: Սա մի տեսակ ողորմութիւն է և Աստուած այդ նրա համար է անում, որովհետեւ նրանց մտածողութեան եղանակն Իրան հաճելի է: Ուրեմն առաջին տեսակ մշակները վարձկաններ են, իսկ երկրորդները՝ ճշմարիտ և հաւատարիմ աշխատաւորներ: 3) Տանուտէրը՝ Աստուած է, այգին՝ եկեղեցին. տասներկու ժամը՝ նշանակում է ժամանակի զանազան փոփոխութիւնները, որոնց մէջ զանազան մարդիկ — հրեաներ, հեթանոսներ կոչուած էին եկեղեցի. նաև նշանակում է մարդկանց կեանքի զանազան հասակը, որի մէջ Աստուածային շնորհքը կանչում է իւրաքանչիւր մարդու դէպի փրկութիւն: Գահեկանը՝ յաւիտենական կեանքն է, երեկոն՝ աշխարհիս վերջը: 4) Աստուած միշտ դէպի Իր եկեղեցին է հրաւիրում ամենքին՝ հոգևորականների, քարոզիչների, դպրոցի, ընտանիքի և բարի մարդկանց... միջոցով: Եւ կանչում է մարդուս կեանքի ամեն հասակում՝ մանկութեան, երիտասարդութեան, ծերութեան, մկրտութեան, հաղորդութեան, երջանկութեան և ամբողջութեան ժամանակ, տխուր և ուրախ ընդհանրում և վերջապէս մահուան անկողնում: Նա կանչում է, ինչպէս անհատներին, այնպէս էլ ազգերին: Նրանցից ոմանք ծառայում են մի մանկութիւնից սկսած, բայց պայմանաւորվում են մի դահեկանով, այն է՝ կամենում են միայն իրանց բարեպաշտութեամբ և արդարութեամբ ունենալ բաղաւորութիւն ու պատիւ երկրիս վրայ՝ մարդկանց մէջ: Այգալիսիները միայն իրանց համար են աշխատում և աշխատութիւնն այգալիսիներին բաւականութիւն չէ պատճառում, այլ մի բեռն է: Նրանք ո՞չ թէ սիրուց, այլ

երկիւղից ստիպուած են տանուժ ալդ և կամ որեէ ակնկալութիւն ունին: Այդպիսիները մեծամիտ փարիսեցու նման մեծ կարծիք ունին իրանց վրայ և դեռ Աստուածանից էլ պահանջում են շնորհակալութիւն: Ոմանք էլ կարճ կամ երկար ժամանակ անգործ մնալուց յետոյ հետևում են Աստծու, կամ Նրա ծառաների հրաւերին և սիրով դիմում են դէպի աշխատանք՝ առանց վարձի մասին խօսք լիշեւու, այլ իրանց յոյսը դրնելով Աստծու ողորմութեան և բարութեան վրայ:

№ 22.

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

I. Զատիկի տօնից փոքր ինչ առաջ Յիսուս եկաւ Բեթանիա գիւղը, որ գտնվում է Երուսաղէմի մօտ: Այդտեղ բնակվում էր Նրա բարեկամ Ղազարոսը՝ իր երկու քոյրերի՝ Մարիամի և Մարթայի հետ:

Անցաւ չորս օր. Ղազարոսը մեռաւ և թաղուեց: Յիսուս լսելով նրա մահը՝ կրկին եկաւ Բեթանիա և գնաց նրա գերեզմանի մօտ: Քոյրերի վիշտն ու լացը շարժեցին Փրկչի սիրտը և Նա արտասուեց: Նա հրամայեց վեր առնել գերեզմանի վրայի բարը և աղօթելուց յետոյ՝ բարձրաձայն կանչեց.

«Ղազարոս, դուրս եկ»: Ղազարոսը դուրս եկաւ գերեզմանից, յարութիւն առաւ (կենդանացաւ): Այս հրաշքը սարսափեցրեց ներկայ եղողներին և շատերը հաւատացին Յիսուսին:

Հէնց որ իմացան այս մասին Երուսաղէմում, իսկոյն ժողովեցան ձերակոյտի անդամները և խորհուրդ արին, թէ ինչ անեն Յիսուսին: «Այդ մարդը, ասում էին, շատ հրաշքներ է գործում. եթէ թողնենք Նրան այսպէս, բոլոր ժողովուրդը կը հաւատայ Նրան և Հռովմայեցիք կըզան և կը տիրեն մեր երկրին»: Ծերակոյտի նախագահը, որ բահանայապետն էր, այս խորհուրդը սուտաւ. «Լաւ է որ մի մարդ մեռնի, բայց թէ բոլոր ժողովուրդը ոչնչանայ»: Բոլորը հաւանութիւն սուին բահանայապետի այս խորհրդին և վճռեցին սպանել Յիսուսին:

II. Ո՛ւր էր ապրում Յիսուսի բարեկամ Ղազարոսը: Յիսուս ինչպէս յարութիւն առաւ Նրան: Ի՞նչ արին Յիսուսի թշնամիները, երբ լսեցին Ղազարոսի յարութիւնը: Ի՞նչ վճիռ կայացաւ ձերակոյտի ժողովում:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ Յիսուս բարեկամ է անուանում Ղազարոսին, երևի, նրա համար, որ նա էլ սրտով նման է եղել Իրան, ապա թէ ոչ՝ Յիսուս նրան չէր սիրել: Թէ ո՞ր անտիճան էր սիրում Յիսուս Ղազարոսին, այդ երևում է նրանից, որ երբ լսում է նրա մահը, շտապում է դէպի Բեթանիա, որ $3\frac{1}{2}$ վերստ հեռու է Երուսաղէմից և անմիջապէս գնում է գերեզմանի մօտ, ուր սգաւոր քոյրերի վիշտն ու արցունքները տեսնելով՝ ինքն էլ սրտաշարժվում, արտասվում է: 2) Ղազարոսի մահը դժբաղդութիւն չէր քոյրերի և աշակերտների համար, որովհետև նրանք շուտով իրանց կորցրածը պէտք է գտնէին, այլ ուրախութիւն և աշակերտների հաւատը դէպի Փրկիչն աւելի ևս ամրապնդող մի միջոց: Մարթան առաջինն է խօսում եղբօր մահուան մասին Յիսուսի հետ և նրա խօսքերի մէջ մի տեսակ փափուկ դժգոհութիւն է նկատվում, թէ ինչո՞ւ առաջին իմաց տալուն պէս նա իսկոյն չէ եկել ու բժշկել: Յիսուս խոստանում է Ղազարոսին յարութիւն տալ: Մարթան կասկածում է և վերջին յարութիւնն է հասկանում: Յիսուս նրա տատանուող հաւատը զօրացնում է, ասելով՝ «Ես իսկ եմ յարութիւն և կեանք»: Այսինքն՝ Իմ մէջ կայ զօրութիւն և որին կամենամ, կարող եմ շունչ և հոգի տալ, մահը ևս նրան չի կարող յաղթել, բաւական է, որ Ինձ հաւատայ: Ղազարոսը Ինձ հաւատացել է, ուրեմն նա մեռած չէ, այլ կենդանի: 3) Մենք տեսնում ենք Աստծու ամենակարողութիւնը, որ Յիսուսի հետ էր. անկարելին հնարաւոր է գարձնում, մեռածին կենդանացնում, որով ընդմիշտ հաստատում է մեր յարութեան յոյսը: Ղազարոսի յարութիւնը, որ առհասարակ է մեր յարու-

թեան, սգաւոր քոյրերի և աշակերտների հաւատը դէպի Յիսուս մեծացնում է և զօրացնում: Միայն սէրն ու հաւատը՝ որ ունէր Ղազարոսը դէպի Յիսուս, առաջնորդեցին նրան դէպի յաւիտենական կեանք: Սընով նա կամեցաւ հասկացնել, թէ ո՞վ դէպի Յիսուս հաւատ ունի, նա կ'ալրի, թէկուզ մեռած էլ լինի և դէպի Յիսուս հաւատ ունենայն ու սրտանց նրան նուիրուելը՝ հէնց կեանք է, որ այստեղից (երկրում) սկսվում է, իսկ այնտեղ (երկնքում) չէ վերջանում, վասնզի այդ կեանքը յաւիտենական է: Մահը կարող է յաղթուել միայն ճշմարիտ հաւատացեալներից, որոնց զէնքը հաւատն է: Ուր հաւատ չկայ, ուր մարդիկ իրանց սիրտը փոխաւոր հաւատ չկայ, ուր մարդիկ իրանց սիրտը փոխաւոր նակ Յիսուսին՝ մեղքին են յանձնում, այնտեղ մահատիրոջ է և սարսափ է ձգում, այնտեղ մարդիկ նալուց առաջ՝ հոգին է մահանում. այնտեղ մարդիկ կենդանի մեռած են: Այն կեանքն է միայն ճշմարիտ, որ Յիսուսի և Աստծու համար է գործում. այսպիսի զօրանալու: Միայն ճշմարիտ հետևողներն են այդպիսի կեանք վարում, հաւատով համոզուած լինելով՝ որ ոչ հոգեկան և ոչ մարմնական մահը իշխանութիւն չունի իրանց վրայ և երկրում էլ ոչինչ չէ կարող նրանց՝ դէպի Յիսուս և Աստուած ունեցած կեանքին վտանգ սպառնալ: Նրանք երկրից հրաժարուելիս՝ հաւատացած են, թէ Փրկիչն աւելի են մօտենում: Այդպիսիների երկբաւոր երջանկութիւնը երկնային երանութեան է փոխվում՝ համաձայն Փրկչի խոստման, թէ «Ես իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւատայ լիս, թէպէտ և մեռանիցի, կեցցէ»:

№ 23.

ՅԻՍՈՒՍ ՄՏՆՈՒՄ Է ԵՐՈՒՍՍԱԿԵՄ

I. Չատկից վեց օր առաջ Յիսուս դարձեալ եկաւ Բեթանիա և այնտեղից Ձիթենեաց սարի վրայով գնաց Նրուսաղէմ: Սարը պատած էր ձիթենի ծառերով: Նրա յեռակից գնում էր ժողովրդի մեծ բազմութիւն: Յիսուս՝ մօտենալով Ձիթենեաց սարին, իր աշակերտներին երկուսին հրամայեց մօտակայ գիւղից մի աւանակ բերել: Աշակերտները բերին աւանակը, որի վրայ ոչ ոք չէր նստել, մէջըր ծածկեցին իրանց հանդերձով և նստացրին նրա վրայ Յիսուսին: Այժմ բոլոր ժողովուրդը կարող էր տեսնել Աստուածային Ուսուցչին, որ յարութիւն էր տուել Ղազարոսին: Ետերը հաւատացին, որ Նա Քրիստոսն է—խոստացեալ Մեսիան և ըսկսեցին յարգանք ու պատիւներ տալ: Ոմանք կարատում էին արմաւենու ոստերը և ձրգում Նրա ոտքերի տակ և երգում. «Ով սաննան Գաւթի Արդուն, օրհնուած է, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնութիւն բարձրումը»:

Քաղաք մտնելու ժամանակ ժողովրդի նոր բազմութիւն շրջապատեց Յիսուսին: «Ո՞վ է Սա», հարցնում էին չճանաչողները»: «Յիսուսն է Սա, Նազարէթի Մարգարէն», պատասխանում էր ժողովուրդը և պատմում Ղազարոսի յարութիւնը:

II. Չատկից քանի օր առաջ եկաւ Յիսուս Բեթանիա և այնտեղից ուր գնաց: Նրբ Ձիթենեաց սարին մօտեցաւ, ինչ հրամայեց իր աշակերտներին և նրանք ինչ պրին: Յիսուս միայն էր գնում Նրուսաղէմ: Ինչպէս էր նայում Նրա վրայ ժողովուրդը և ինչով էր արտայայտում Նրան իր հաւատն ու յարգանքը:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ ժողովուրդը Յիսուսին արքայական յարգանք է մատուցանում՝ համարելով Նրան Իսրայէլի թագաւոր, Իօրայէլի, որի համար գործել էր այնքան հրաշքներ: ժողովուրդը փառաբանական երգեր է երգում, որ գիւր չգալով Նրա թշնամիներին՝ խնդրում են լռեցնել, բայց Նա կարճ պատասխանում է. «Եթէ դրանք լռեն, քարերը կ'աղաղակեն»: Նա գիտէր, որ այդ ովսանաները շուտով կը մոռացուեն և «ի խաչ հան գրա» կը դառնան: Այդ մասին երբէք չէր էլ մտածում. Նրա տիրութեան պատճառն այն էր, որ ժողովուրդը պէտք է մերժէ իր Տիրոջը. ուրիշ խօսքով՝ չճանաչեց, չհաս-

կացաւ այն ժամանակը, երբ Տէրը այցելեց նրան, ուստի և Երուսաղէմը պիտի կործանուէր: 2) Յիսուս գնում է Երուսաղէմ, գիտենալով այն վճիռը, որի գորութեամբ պէտք է Իրան սպանեն: Նա Իր յոյսը Աստծու վրայ դրած՝ կամովին զիմում է կատարելու այն գործը, որի համար ուղարկուած էր: Նա հաւատացած էր, որ անհետ չի կորչիլ այն ամենը, ինչ որ Աստծու արքայութեան մասին Ինքը խօսել, քարոզել է երկրում և գիտէր, որ շատերի սրբտերի մէջ չի մարիլ այն սէրը, որ Ինքն է վառել, որովհետեւ ճշմարտութիւնն ու սէրը անմահ են, նրանց չի կարելի մահացնել: Նա ասում էր՝ այն գործերը, որ Ես գործել եմ Իմ Հօր անունով, Աստուածային են, նրանք վիպ կը մնան և յաղթող կը հանդիսանան, եթէ մինչև անգամ Ես մեռնելու լինիմ: 3) Անհասկանալի է թվում մեզ համար Յիսուսի վարմունքը: Նա՝ Որ միշտ ոտով էր գնացել Երուսաղէմ և առհասարակ շրջել, չէ թոյլ տուել ծառայել Իրան, թագաւոր անուանել, պատուել ու մեծ ցոյցեր անել, այլ միշտ խոնարհ, հեզ է եղել, սիրել է խաղաղութիւն, հանդարտութիւն և ոչ մի անգամ ակնարկութիւն չէ արել, թէ Ինքն է խոստացեալ Փրկիչը և մինչև անգամ արգելել է Պետրոս առաքեալին Աստծու Որդի անուանել Իրան, — այժմ ասնում ենք, որ հարիւրաւոր մարդկանց, նոյնիսկ մանուկներին՝ թոյլ է տալիս հռչակելու, թէ՛ Ինքը Մեսիան է: Փրկչի այս վարմունքը բացատրվում է նրանով, որ Նա Իր երկրաւոր կեանքի վերջին օրերում կամենում էր բոլոր իսրայէլացիներին յայտնել, թէ Աստուածանից ուղարկուած և մարգարէների գուշակած Մեսիան է Ինքը: Այս քայլը Նա նպատաւոր է գտնում, որովհետեւ փարիսեցիներն ու բարձրագոյն ատենի ան-

դամները սխալ լուրեր էին տարածում ժողովրդի մէջ Նրա մեսիական կոչման վերաբերմամբ: Նա կամենում էր դրանով թէ հերքել Իր մասին տարածուած սխալ լուրերը և թէ յայտնել ժողովրդին, որ Երուսաղէմում իշխելու իրաւունքն այսուհետեւ Իրանն է, ինչպէս ճշմարիտ Մեսիայի, և ոչ թէ ծերակոյտինը: Եւ այսուհետեւ պէտք է Իրան ճանաչեն, մօտենան և յարին, ինչպէս հարազատ Տիրոջ, և ծառայեն՝ թէ խօսքով և թէ սրտով: 4) Յիսուս մի անգամ յայտնի կերպով մտաւ Երուսաղէմ, իսկ մեր սրտի մէջ ամեն բոլոր անտեսանելի կերպով է մտնում՝ թէ տանը, թէ ուսումնարանում և թէ եկեղեցում: Նրա յորդորը և մեզ մօտ վերջին գալը (մահուան անկողնում) կարող է լինել, երբ մենք բոլորովին չենք սպասում. այդ պատճառով պէտք է միշտ պատրաստ լինինք, մտածենք, թէ որն է մեր փրկութիւնը և որը մեզ համար խաղաղութիւն բերող: Մենք արմաւենու ոստերի տեղ մեր սրտերը պէտք է նուիրենք Նրան, ովսաննայի տեղ՝ Նրա պատուիրաններն ու սաղմոսները երգենք և հանդերձների ու ծաղիկների տեղ՝ մեր բարի գործերը փռենք Նրա ոտքի տակ: Յիսուսին այժմ էլ հաճելի է՝ թէ արտաքին Աստուածապաշտական ծէսերով և թէ ներքին — հաւատով և սիրով ճանաչելն ու փառաբանելը, ինչպէս այն ժամանակ: Նա ներքին — հոգով ճանաչողների սրտի թագաւորն է և այդ աւելի հաճելի է Նրան. ուրեմն աշխատենք թագաւորացնել Նրան մեր սրտերի վրայ:

№ 24.

ՔՐԻՍՏՈՍ ԱՐՏԱՔՍՈՒՄ Է ՎՍՃԱՌՈՂՆԵՐԻՆ ՏՍՃԱՐԻՑ

I. Յիսուս՝ ժողովրդի ցնծութեան աղազակներով մանելով տաճար, տեսաւ այնտեղ մեծ անկարգութիւն: Տաճարի գլխաւորները թոյլ էին տուել վաճառել անասուններ, որոնց կարելի էր զոհ բերել, և կանգնել հատավաճառներին իրանց ապրանքներով այն գաւթում, ուր ժողովուրդը աղօթում էր: Յիսուս՝ զայրանալով, դուրս արաւ բոլոր վաճառողներին և գնողներին, իսկ աղանեկավաճառներին սասաց. «Վերցրէք այս տեղից և իմ Հօր տունը մի դարձնէք վաճառատուն»:

Այդ ժամանակ տաճարի գլխաւորները մտացան Յիսուսին և ասացին. «Դու ի՞նչ նշանով կարող ես ասացուցանել մեզ, որ իշխանութիւն ունիս այդ անելու»: Յիսուս գիտէր, որ Յուդայի երկրի գլխաւորները ասում են Իրան և պիտի սպանեն, ուստի պատասխանեց. «Քանզեցէք այս տաճարը և ես երեք օրում կը շինեմ նրան»: Այս նշանակում է, երբ դուք Ինձ կը սպանէք, կը բանդէք

Իմ մարմինը, որ Աստու տաճար է, ես երեք օրից յետոյ յարութիւն կ'առնեմ և այն ժամանակ կը տեսնէք, որ ես իշխանութիւն ունիմ այսպէս վարուելու»: Նրանք այնպէս ձեւացան, իբր թէ չհասկացան նրա գուշակութիւնը և պատասխանեցին. «Այս տաճարը բառասուն և վեց տարում շինուեց, իսկ դու երեք օրումն ես կանգնեցնում»: Այդ ասելով հեռացան:

II. Գնում էր արդեօք Յիսուս Զատիկի տօներին Երուսաղէմ: Ամենից առաջ ուր էր գնում քաղաք մտնելիս: Ի՞նչ տեսաւ Յիսուս տաճարում: Ո՞վ էր թոյլ տուել անել այդ անկարգութիւնը տաճարում: Ի՞նչպէս վարուեց Յիսուս վաճառողների հետ և ի՞նչ ասաց աղանեկավաճառներին: Ի՞նչ ասացին տաճարի գլխաւորները և Յիսուս ի՞նչ պատասխանեց: Տաճար ասելով՝ նա ի՞նչ էր ուզում հասկացնել, որ երեք օրում պէտք է շինէր: Ի՞նչ պատասխանեցին նրան տաճարի գլխաւորները:

III. Այս պատմութիւնից մենք իմանում ենք. 1) որ տաճարը — ուր Բարձրեփլի անունը պէտք է փառաբանուի և մարդիկ իրանց ներքին աշխարհի՝ սրտի և հոգու հետ գործ ունենան, ուր պէտք է խորհրդաւոր լուծութիւն լինի և ամեն ոք յարգանքով վերաբերուի, — դարձել էր անպատիւ: Այն սրահը՝ — որ կոչւում էր հեթանոսների դուռը և որի հէնց անունը վկայում էր, թէ ամեն ազգերի համար աղօթքի տուն

պէտք է լինի, — անմաքրութիւնից դարձել էր անասունների բակ, իսկ առևտրի՝ կողմից մի տօնավաճառ: Յիսուս տեսնում է, որ ներս էին բերել եգիպտացիների և աղաւնիների ամբողջ հօտեր, դրել էին սեղաններ՝ հատավաճառների և փողերի մանրացնելու համար: Ծախում էին հոտաւէտ խնկեր, իւղեր և փողերը փոխում էին դրամների հետ, որովհետև ուխտաւորները ոչ թէ Հռովմայեցոց փողերով, այլ տաճարի անունով կտրած դրամով պէտք է վճարէին հասանելի հարկը — տուրքը: Յիսուս տեսնելով այս անկարգութիւնները, արդար բարկութեամբ լցուած՝ չուանից շինեց խարազան և գաւիթն ազատեց սրբապղծութիւնից: Ամենքը հպատակուեցին և տաճարը մաքրուեց: Ոչ ոք չէր կարողանում ասել ոչինչ, որովհետև տեսնում էին, որ իրաւացի էին Նրա արածները: Տաճարի գլխաւորները վերաւորվում են, որովհետև այդ լայտնի յանդիմանութիւն էր իրանց անհոգութեան համար: 2) Մենք տեսնում ենք, որ այս անկարգութիւնների պատճառը քահանաներն են, որովհետև նրանք թող էին տուել այդ գործելու իրանց շահի համար: Հարկաւ այնտեղ սեղաններ կանգնելու և վաճառելու իրաւունքի համար տուրք կը լինէին որոշած, իսկ ժողովրդին էլ Սուրբ-Գրքից մի կտոր կարդալիս, կամ մեկնելիս, այնպէս ցոյց կը տալին, թէ այդ ներելի է, որովհետև զոհի համար են այդպէս արել: 3) Մարդու սիրտը կենդանի Աստուծո՞ւ տաճար է, ինչ սրտի մէջ էլ մտնի Յիսուս, այնտեղից կը հալածէ անարդարութիւնը և տգեղը. ուստի մեր սիրտը պէտք է աղօթաւմն դարձնենք, որից բխած ամեն մի բարի մտածողութիւն, բարի խօսք և գործ՝ աղօթք է և ոչ աւազակների այլ, որ միայն զբաղ-

վում է իր կողմէկներով, իր շահով, նախանձով, բարկութեամբ, ատելութեամբ և չարութեամբ: Այն սիրտը որ Յիսուս է մաքրում և այն կեանքը՝ որ Յիսուսով է ղեկավարվում, ամենազեղեցիկ ովսաննան և կեցցէն է, որ մարդիկ կարող են երգել Յիսուսի համար:

№ 25.

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

I. Փրկիչը՝ վերջին դատաստանի մասին խօսելով, ասում է. «Կը գայ ժամանակ, երբ գերեզմանների մէջ բոլոր գանուածները — մեռածները կը լսեն Աստուծու Որդու ձայնը և դուրս կը գան, և որոնք բարի են գործել, կ'երթան դէպի կեանք, իսկ որոնք չար՝ դէպի դատաստան:

Եւ երբ Մարդու Որդին կը գայ Իր փառքով և բոլոր հրեշտակները Նրա հետ, այն ժամանակ կը նստի Իր փառքի Աթոռի վրայ և բոլոր ազգերը կը հաւաքուեն Նրա առաջ: Եւ ինչպէս հովիւը ջոկում է ոչխարներին այծերից, այնպէս էլ Նա կը ջոկէ արդարներին մեղաւորներից: Արդարներին կը կանգնացնի Իր աջ կողմը, իսկ մեղաւոր-

ներին՝ ձախ կողմը: Այն ժամանակ Թագաւորը կ'ասէ նրանց, որոնք աջ կողմը կը լինին. «Եկէք, Իմ Հօր օրհնուածներ, ժաւանդեցէք արքայութիւնը, որ պատրաստուած է ձեզ համար աշխարհի սկզբից: Որովհետեւ Ես քաղցած եւ ծարաւ էի եւ դուք Ինձ կերակրեցիք ու ջուր տուիք, օտար էի եւ դուք ընդունեցիք, մերկ էի եւ հագցրիք, հիւանդ էի եւ այցելեցիք, բանտումն էի եւ եկար Ինձ մօտ»: Այն ժամանակ արդարները պատասխան կը տան եւ կ'ասեն. «Տէր, երբ տեսանք Քեզ քաղցած եւ կերակրեցինք, կամ ծարաւ եւ խմացրինք: Երբ տեսանք Քեզ օտար եւ ընդունեցինք, կամ մերկ եւ հագցրինք: Երբ տեսանք Քեզ հիւանդ, բանտի մէջ եւ եկանք Քեզ մօտ»: Այն ժամանակ Թագաւորը կ'ասէ. «Չմարտիտ եմ ասում ձեզ, որովհետեւ այդպիսի բան արիք Իմ փոքր եղբայրներից մէկին, նշանակում է Ինձ արիք»: Յետոյ կ'ասէ եւ նրանց, որոնք կանգնած կը լինին Նրա ձախ կողմում. «Հեռացէք ինձանից, անիծուածներ, զէպի յաւիտենական կրակը, որ պատրաստուած է

ձեզ համար: Որովհետեւ Ես քաղցած էի եւ դուք չկերակրեցիք Ինձ, ծարաւ էի եւ ջուր չտուիք, օտար էի եւ չընդունեցիք, մերկ էի եւ չհագցրիք, հիւանդ էի եւ բանտում եւ չայցելեցիք»: Այն ժամանակ նրանք պատասխան կը տան եւ կ'ասեն. «Տէր, երբ տեսանք Քեզ քաղցած, ծարաւ, օտար, մերկ, հիւանդ, բանտի մէջ եւ չժառայեցինք Քեզ»: Եւ Թագաւորը կ'ասէ նրանց. «Որովհետեւ դուք այսպիսի բան չարիք Իմ փոքր եղբայրներից մէկին, ուրեմն Ինձ չարիք»: Եւ նրանք կ'երթան զէպի յաւիտենական տանջանք, իսկ արդարները՝ զէպի յաւիտենական կեանք:

II. Ի՞նչ ասաց Յիսուս մեռածների յարութեան մասին. Ի՞նչ կը լինի յարութիւն առածներին՝ Փրկչի ուսման համաձայն. Ի՞նչ տեսքով Նա կը յայտնուի անեղ դատաստանի ժամանակ. Ի՞նչպէս Նա կը բաժանէ մարդկանց դատաստանի ժամանակ. Ի՞նչ կ'ասէ իր աջ եւ ձախ կողմը կանգնածներին. Ի՞նչպիսի վիճակ կ'ունենան նրանք:

III. Այս պատմութիւնից մենք կարող ենք տեսնել. 1) որ Աստուած միշտ օգնում է մարդկանց եւ նրա միակ ցանկութիւնն է, որ մարդիկ առաջնորդուեն զէպի ճշմարտութեան գիտութիւնը եւ երջանիկ լինին:

Նրա հայրական սէրն է, որ նշանակել է մարդկանց համար դատաստան, որից յետոյ Նրա կամքը կատարողները կըստանան վարձատրութիւն, իսկ չկատարողները պատիժ: Այդ արդար դատաստանի և անաչառ դատաւորի երկիւղն է, որ մարդկանց հեռացնում է չարից և դէպի բարին առաջնորդում: Ամեն մինը մեզանից այդպիսի մի արդար դատաւոր ունի իր մէջ—դա խիղճն է, որ գտնվում է մեր կրծքի տակ և դատում է նոյնպէս անաչառ և խիստ կերպով: 2) Փրկիչը խօսում է աշխարհիս վախճանի մասին և պատկերացնելով նրան՝ խրատում, յորդորում և զգուշացնում է Իր աշակերտներին՝ միշտ պատրաստ լինել ահեղ դատաստանի համար: Թէ երբ կը լինի այդ դատաստանը, մեզ յայտնի չէ, ժամանակամիջոցը անորոշ է. բայց որոշ է, որ պէտք է լինի: Թերևս այն ժամանակ նա տեղի ունենայ, երբ աշխարհիս բոլոր ազգերին կը քարոզուի Աստուծու արքայութիւնը, երբ Աստուած Իրանից հեռացածներին վերստին Իր մօտ կը կանչէ և երբ նրանք՝ որոնք թէ Իրան և թէ Իր Միածին Որդուն չեն ճանաչել, կը խոստովանուեն և կ'ընդունուեն: Աստուծու սէրն աշխարհիս վրայ այնքան ժամանակ կ'տուէ, մինչև ամենքն էլ Աստուծու Որդի կը գառնան և կը կազմեն մի հօտ և մի հովիւ, այնուհետև վերջին դատաստանը տեղի կ'ունենայ: Պատաւորը կը լինի Ինքը Փրկիչը. Նա արդարագատ է, Նա մեզ սուսա օրէնքներ, Ինքը կատարեց գործով և պատուիրեց, որ մենք էլ նոյն օրէնքների համաձայն կեանք վարենք: Նա մեր մարդկային սիրտը և տկարութիւնը լաւ է ճանաչում, ուստի և ներող ու արդարագատ կը լինի: 3) Պատաւորը բաժանում է մարդկանց երկու խմբի—բարի և չար: Առաջին-

ներին խոստանում է յաւիտենական կեանք, իսկ երկրորդներին՝ յաւիտենական տանջանք: Առաջին խմբի մարդիկ նրանք են, որոնք ամեն տեսակ բարի գործեր են կատարել, որի աղբիւրը սէրն է դէպի ընկերը և որ բղխում է այն ժամանակ, երբ մենք սրտով անձատուր ենք լինում Աստուծուն: Այս բարի գործերի զարգարանքը և գործող անձանց յատկանիշ կողմը՝ համեստութիւնն ու հեզութիւնն է: Իսկ նրանք, որոնք առանց կարեկցութեան և օգնութեան անցնում են ընկերի մօտով և սէր ու հաւատ չունին, ծանր կերպով մեղանջում են Աստուծու դէմ, Որ ամենի վրայ սիրոյ հեղեղ է թափել: Այդպիսիները իրանց սրտով, գործով և մտածողութեան եղանակով արհամարհում են Նրա պատուիրանները: Այդպիսիները՝ ի մեծամտութեամբ և անձնազովութեամբ կարծում են, թէ ամեն ինչ կատարել են և թէ Փրկչին՝ Տէր, Տէր անուանելով, կարող են երկնքի արքայութեան ժառանգորդ լինել: Եւ յարութիւն առնողների բաժանումը լինելու է, բայց ոչ թէ այնպէս, ինչպէս մարդկանց մէջ, որ նկատի ունին հարստութիւնը, կոչումը և կըրթութիւնը, այլ թէ ինչ համոզում, մտածողութեան ինչ եղանակ ունին. իսկ համոզման ու մտածողութեան եղանակի ոյժը, զօրութիւնը չէ կայանում դատարկ և գեղեցիկ խօսքերի, կամ բոլորական զգացմունքի մէջ, այլ բարի կամքի և նուիրական գործի, որ անկեղծ համոզման արտաքին միակ նշանն է:

№ 26.

ԽՈՐՀՐԳՍԻՈՐ ԸՆԹՐԻՔԸ

I. Բաղարջակերաց տօնի առաջին օրը (Աւագ-Հինգշաբթի) Յիսուս Իր աշակերտների հետ եկաւ Երուսաղէմ՝ զատկական տօնը կատարելու: Երեկոյեան 12 առաքեալներով մտաւ այն վերնատունը, ուր պատրաստուած էր՝ ուտելու պատէքը: Յիսուս Իր աշակերտներին խոնարհութեան և ընկերսիրութեան օրինակ տալու համար, ընթրիքից առաջ լուաց նրանց ոտները: Յետոյ կրկին նստելով Իր տեղը, ասաց. «Մի օրինակ տուի ձեզ, ինչպէս Ես ձեզ արի. այնպէս էլ դուք արէք միմեանց»: Այն է՝ օգնեցէք, ծառայեցէք միմեանց խոնարհութեամբ, առանց մեծամտութեան»: Դրանից յետոյ Յիսուս հոգով տխրեց և ասաց. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, ձեզանից մէկը պէտք է մատնէ Ինձ»: Աշակերտները սաստիկ տրտմեցին և երկիւղով իրար ետեից սկսեցին հարցնել. «Մի՞թէ ես եմ, Տէր»: Յուզան էլ լրբաբար հարցրեց. «Մի՞թէ ես եմ»: Յիսուս պատասխանեց. «Ռու ես», և

աւելացրեց. «Ինչ որ անելու ես, արն շուտով»: Յուզան իսկոյն հեռացաւ:

Ընթրիքի ժամանակ Յիսուս վեր առաւ հաց, օրհնեց, կտրեց և տալով աշակերտներին, ասաց. «Առէք, կերէք, այս է Իմ մարմինը, որ ձեր և շատերի համար զոհվում է»: Յետոյ վեր առաւ մի բաժակ զինի, զոհացաւ, տուաւ նրանց և ասաց. «Խմեցէք ամենքդ սրանից, այս է Իմ Նոր-Ուխտի արիւնը, որ ձեր և շատերի մեղքերի թողութեան համար թափվում է: Այս արէք Իմ յիշատակի համար»:

Ընթրիքից յետոյ Յիսուս զարձեալ խօսեց Իր աշակերտների հետ և ասաց. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, սիրեցէք միմեանց, ինչպէս Ես ձեզ սիրեցի: Դրանով ամենքը կը ճանաչեն ձեզ, որ Իմ աշակերտներն էք: Ես կ'աղաչեմ Իմ Հօրը, որ ուրիշ մտիթարիչ տայ ձեզ—Ճշմարտութեան Հոգին, որ բղխում է Հօրից. Նա կը սովորեցնէ և կը յիշեցնէ ձեզ այն ամենը, ինչ որ Ես ասել և խօսել եմ ձեզ հետ»:

II. Ո՛ւր տօնեց Յիսուս Ջատիկը: Ի՞նչ արաւ Նա Ջատիկը ուսերուց առաջ և ի՞նչ խօսեց: Ի՞նչպէս ցոյց տուաւ Յիսուս մատնիչին և ի՞նչ արաւ Յուդան: Յիսուս Իր յիշատակը պահելու համար ի՞նչ սահմանեց: Յիսուս սիրոյ ի՞նչ նոր պատուիրան աւանդեց աշակերտներին:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ Բաղարջակերաց տօնին Յիսուս ընթրիք է ուտում Իր աշակերտների հետ: Հին ժամանակ սովորութիւն կար Իսրայելացոց մէջ, որ մեծ տօներին՝ ընթրիքից յետոյ տան մեծը հաց և գինի էր բաժանում կարգով տան միւս անդամներին և Աստծուն փառաբանելով՝ խնդրում, որ անպակաս անէ աշխարհից: Փրկիչը յարգելով եղած սովորութիւնը՝ Բաղարջակերաց տօնի ընթրիքը Խորհրդաւոր ընթրիքի է վերածում: Նա առնելով Իր ձեռքը հաց, օրհնում է և կտրտելով տալիս է աշակերտներին, յայտնելով, որ Ինքն Իր յօժար կամքով պէտք է Իր անձը, մարմինը զօհէ ժողովրդի սիրոյ համար, ուստի և աշակերտները պէտք է յիշեն այս սէրը ամեն անգամ հաց կտրելիս: Յետոյ առնում է մի բաժակ գինի, մտածում է Իր արեան մասին, որ պէտք է թափուի Իր յօժար կամքով ժողովրդի համար, ուրեմն պէտք է յիշեն ամեն անգամ խմելիս: Նրա այն խօսքը, թէ «Այս բաժակը Նոր-Ուխտ է Իմ արեան», նշանակում է՝ Հին-Ուխտը— Հին կտակարանը, որ Աստուած Մովսէսի ձեռքով կապեց Իսրայելացոց հետ, նուիրագործվում է կենդանիների զօհի արիւնով և այնպէս ընդունելի դառնում: Իսկ Նոր-Ուխտը, որ Աստուած Իր միջնորդութեամբ է կապում բոլոր մարդկութեան հետ, կամենում է Իր սեպհական արիւնով նուիրագործել, որպէսզի ընդունելի

լինի: Սրանով Նա Նոր-Ուխտ է կապում և Իր արիւնով նուիրագործում. դա բոլոր հաւատացեալների համար երկնաւոր օրհնութիւն է: Յիսուս կամենում է, որ Իր մահուանից յետոյ էլ կատարուի և աշակերտները հացը կտրելիս մտածեն Նրա մահուան և սիրոյ վրայ, այն սիրոյ, որ Նրան զէպի մահ տարաւ: 2) Հրեաները պատէքը տօնում էին Եգիպտոսից դուրս գալու յիշատակի համար և կատարում էին Նիսան (մարտ) ամսի լուսնի աւազ լրման ժամանակ և այդ կատարվում էր Գառը մորթելով և բաղարջ հաց ուտելով: Թէև տօնը 14-ին էր, բայց որովհետև ընդհանուր սովորութիւն էր դարձած նախընթաց երեկոյին տօնել, այդ պատճառով էլ Յիսուս կամեցաւ երեկոյեան վերջին անգամ Իր աշակերտների հետ կատարել այդ տօնը: Այն ժամանակուայ սովորութեամբ այդ երեկոյին՝ հացի նստելուց առաջ պէտք է ոտքերը լուանային: Վերնատան մէջ լուսցման համար ամեն ինչ պատրաստ էր, բայց ծառայ չկար, որ լուանար: Աշակերտները փոխանակ փոխադարձապէս միմեանց ոտները լուանայու, վիճում էին իրար հետ, թէ ով է նրանցից մեծը: Յիսուս՝ խոնարհութեան օրինակ տալու համար նրանց, վերկացաւ սեղանից, հանեց վերնազգեստը, կապեց ղենջակ, կոնքի մէջ ջուր ածեց և հերթով սկսեց լուանալ աշակերտների ոտքերը: Այս յիշատակը ևս աւանդեց Նա պահել միշտ ոչ միայն Իր առաքեալներին, այլ բոլոր քրիստոնեաներին, որոնք յիշում են Նրան և մտածում Նրա մահուան և սիրոյ վրայ: Նա Իր կեանքի ամբողջ ընթացքում գործով ցոյց տուաւ, որ ընդհանրապէս ուրիշների և մասնաւորապէս կարօտեալների վրայ էր մտածում, ապրում և նրանց համար գործում: Նրա պատուէրն էր, որ Իր աշակերտ-

ները ևս նոյնպիսի կեանք վարեն: Նա նրանց ուրիշ սիրով սիրեց, անուանելով եղբայր, բարեկամ, ընկեր և երկնից արքայութիւնը իր սրտից նրանց սիրտը փոխադրեց, որպէսզի ապագայում իր աշակերտները նոյն սէրը գործ դնեն: Յիսուսի յիշատակը՝ իր աշակերտերի մօտ ահա այդ սէրը պէտք է լինէր: Նա կամենում էր, որ այդ սէրը նրանց սրտի մէջ շարունակուի, երբ ինքն այլևս երկրի վրայ չի լինիլ: Եւ այս յիշատակը կենդանի պահելու համար՝ սահմանեց հաղորդութեան Ս. Խորհուրդը, որ Փրկչի անսահման սէրն աւելի վառ պահելու միջոց է նրանց մէջ: 3) Մենք էլ՝ եթէ կամենում ենք Յիսուսի հարողատ աշակերտներ լինել, պէտք է ունենանք Նրա հեղութիւնը, ընկերսիրութիւնը և առանց մեծամտութեան ծառայենք նրանց, որոնք կարօտ են մեզ: Յիսուս մեզ սիրեց. այդ սէրը մենք չպէտք է երբէք մոռանանք, եթէ կամենում ենք, որ Նա էլ մեզ չմոռանայ: Ուստի յաճախ ցոյց տալու համար Նրա սէրը՝ պէտք է ընդունենք սիրոյ կերակուրը—Նրա Մարմինը և Արիւնը՝ հացի ու գինու տեսակով և այսպէս զօրացնենք Փրկչական սէրը դէպի մեր նմանները, դէպի նոյնիսկ Փրկիչը և Նրա երկնաւոր Հայրը:

№ 27.

ՅԻՍՈՒՍԻ ԱՂՕԹԻՔԸ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԵՂՈՒՄ

I. Խորհրդաւոր ընթրիքից յետոյ Փրկչին իր աշակերտներով գնաց Գեթսեմանի

պարտէզը, որ գտնվում էր Զիթենեաց սարի ստորոտում: Նա այգու մուտքի մօտ թողեց իր աշակերտներին, ասելով. «Նստեցէք այստեղ, մինչև ևս գնամ, աղօթք անեմ»: Իսկ ինքը վեր առաւ միայն Պետրոսին, Յակովբոսին և Յովհաննէսին ու մտաւ պարտէզ:

Այստեղ նրանցից էլ փոքր ինչ հեռանալով՝ սկսեց սաստիկ տրտմել և հոգալքրտիւքը արիւնի կաթիլների պէս թափվում էր Նրա ճակատից: Նա ծունկ չօրելով՝ ընկաւ երեսի վրայ գետին և սկսեց աղօթել, որ Աստուած ազատէ իրան այն ծանր տանջանքներից, որ պէտք է կրէր: «Հայր, ասում էր Նա, եթէ հնարաւոր է, թող այս բաժակը անցնէ Ինձանից, բայց ոչ ինչպէս Ես եմ կամենում, այլ ինչպէս Դու»: Աղօթելուց յետոյ եկաւ աշակերտների մօտ, որոնք արդէն քնած էին և ասաց Պետրոսին. «Սիւժն, քնած էք. չկարողացար մի ժամ ինձ հետ արթուն կենալ: Արթուն կացէք և աղօթք արէք, որ փորձութեան մէջ չընկնէք: Հոգիս յօժար է, բայց մարմինս

տկար»։ Դարձեալ վերադարձաւ աղօթելու
և երեք անգամն էլ նոյն խօսքերն ասաց։
Այն ժամանակ Աստու հրեշտակն իջաւ
երկնքից և զօրացրեց Նրան։

Աղօթքը վերջանալուն պէս մատնիչ
Յուդան եկաւ պարտէզ քահանայապետի
ծառաների և հռովմայեցի մի խումբ զին-
ուորների հետ և մօտենալով Յիսուսին, ա-
սաց. «Բարև Գեզ, Վարդապետ», և համ-
բուրեց Նրան։ Այս համբոյրով Յուդան նը-
շան էր տուել ծառաներին, որոնք պէտք է
կալանաւորէին Յիսուսին։ Ծառաները բռն-
եցին և կապեցին Յիսուսին, իսկ Նրա ա-
շակերտները թողին և փախան։

II. Ա՛ւր գնաց Յիսուս խորհրդաւոր ընթրիքից յետոյ։
Ա՛ւր թողեց աշակերտներին և ինչ պատուէր տուաւ Նրանցից
որոնց տարաւ իր հետ պարտէզ և ինչպէս անցկացրեց այն-
տեղ։ Ի՞նչ նշան էր տուել Յուդան ծառաներին՝ Յիսուսին կա-
լանաւորելու համար։ Ի՞նչ եղան աշակերտները, երբ Յիսուսին
բռնեցին։

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք.
1) Յիսուսի վշտերը։ Նա լիշում է այն սոսկալի մահը,
որ մատնիչը պէտք է պատճառէր Նրան փոքր ժամա-

նակից յետոյ։ Թէև Նա մարմնով առողջ և կենդանի էր,
բայց հոգին նախապէս զգում էր այն վիշտը, որ շատ
անգամ աւելի մեծ է և զարհուրելի, քան թէ մարմնա-
կանը։ Նա կարող էր հեշտութեամբ հեռացնել այդ ա-
մենն Իրանից, եթէ կամենար իր կոչման հակառակ
գնալ։ Մենք շատ անգամ լսել ենք Նրա բերանից, որ
Նրա առաքելական կոչումը չէր՝ հիմնել հրէական
իշխանութիւն, այլ երկնային թագաւորութիւն, ուրիշ
խօսքով, Նա չէր կամենում իր ժողովրդին ազատել
Հռովմէական իշխանութիւնից, այլ փրկել ամբողջ մարդ-
կութիւնը մեղքի կապանքներից։ 2) Նա, որպէս մարդ,
արդարև հոգում, տրտմում է, լիշելով մահուան բոստե-
ները և առաջուց գուշակելով այդ ամենը իր հոգու-
մէջ, վախենում է, ծունկ է չոքում, աղօթում, քրտնում
և կարիք է զգում օգնութեան։ Միայն մարմնական վըշ-
տերը և մահու երկիւղը չէր, որ Նրա հոգին վշտերով
լցրել էր, այլև իր ազգի անգթութիւնը, որ պէտք է իր
Բարերարին խաչ հանէր, փոխանակ երախտագէտ լինե-
լու։ Նա ցաւում է և այդ ցաւերը պատճառողը իր ա-
շակերտներից է։ Նրա սրտին ցաւ էր և այն, որ աշա-
կերտները, որոնք պէտք է շարունակէին իր սկսած գործը,
զեռ ևս չէին կարողացել հասկանալ, թէ Ինքն ինչ Մե-
սիա է ցանկանում լինել. նրանք զեռ երազում էին
երկրաւոր փառքեր ստանալ։ Յիսուս այս վշտի և
տրտմութեան ժամանակ դիմում է գէպի երկնաւոր
Հայրը և նախապէս խնդրում հեռացնելու այս բա-
ժակը, եթէ Հայրը զիտէ ուրիշ ճանապարհ, որով կա-
րողանայ երկրի վրայ երկար մնալ իր աշակերտների
հետ և շարունակել իր փրկչական պաշտօնը։ Սակայն
այս ամենից յետոյ իսկոյն աւելացնում է, «Որպէս Գու-

կամիս», որ նշանակում է, ես յօժար կամքով կը զոհեմ
 Իմ կեանքը: 3) Աստուած զօրացնում է Փրկչին փորձու-
 թեան ժամանակ հրեշտակի միջոցով. բայց եթէ Նրա
 աշակերտները ևս սրտով մասնակից լինէին այն մեծ
 վշտին, որ կրում էր Նա, անշուշտ աւելի կը մեղմէին
 Նրա ցաւի աստիճանը, որովհետեւ բաժանուած ցաւը՝
 կէս ցաւ է: Սակայն անկարող եղան նրանք նոյնիսկ
 իրանց քնին յաղթելու. մի ժամ անգամ չկարողացան
 արթուն մնալ, կամ գոնէ խօսքով մխիթարել իրանց
 վշտացած Վարդապետին: Նրանք ընկան փորձութեան
 մէջ և խօսքի փորձութիւնից, պէտք է ասած, յաջող
 դուրս եկան, բայց երբ հասաւ ժամանակը՝ գործով
 ցոյց տալու իրանց սէրը—մի ժամ արթուն մնալով
 իրանց Վարդապետի հետ, չկարողացան և չկամեցան
 կարճ ժամանակ անհանգստութիւն պատճառել իրանց
 մարմնին: Եւ այսպէս այս փոքրիկ փորձութեան մէջ
 ընկնելով՝ անյաջող դուրս եկան: 4) Մենք ևս առա-
 քեալների նման շատ անգամ խոստանում ենք դիմա-
 դրել. փորձութեան սկզբում խիստ հաստատ ենք լի-
 նում մեր խօսքին, բայց հէնց որ փորձութիւնների դէմքը
 տեսնում ենք, որքան էլ նա փոքր է լինում, մոռանում ենք
 մեր խոստումները և թոյլ ենք տալիս չարին յաղթող
 հանդիսանալու մեր խօսքով սիրած՝ բարի և արգար
 բաների դէմ, ասել է, ընկնում ենք փորձութեան մէջ:
 Խօսքով մենք մեր կեանքն անգամ զոհում ենք մեր
 բարեկամների, մերձաւորների համար, բայց երբ հաս-
 նում է ժամը, նոյնը գործով ցոյց տալու, մոռանում
 ենք մեր խօսքը, նոյնիսկ ամենափոքր ձևով էլ չենք
 կամենում անհանգստութիւն պատճառել մեր մար-
 մնին, մեր մտքին ու մեր գրպանին՝ յօգուտ մեր մերձա-

ւորի: Մեր հոգին, արգարեւ, բարի կամք ունի իրա-
 ւացին գործելու և, պէտք է ասած, դրան հարկաւոր
 ոյժն ու զօրութիւնն էլ չէ պակասում, բայց մարմնին
 հաճօյք պատճառող հանգամանքները, ինչպիսիք են՝
 հանգստութիւն, վայելք և ապահովութիւն, աւելի զօ-
 րեղ են, քան թէ բարի կամքը և դրա համար էլ այդ
 բարեկեցութեան հանգամանքները բարոյական թուլու-
 թեան են մատնում մեզ և մեր կամքի հակառակ գոր-
 ծել տալիս: Փորձութիւնների առաջն առնելու համար
 պէտք է աղօթել, որ մարդ զօրանայ դիմադրելու: Ինքն
 Յիսուս սովորեցնում է. «Հսկեցէք ձեր սրտերի, ձեր
 մտքերի և մանաւանդ ձեր բարի խոստումների վրայ և
 երբ փորձութիւնը գայ, աղօթեցէք, մտածեցէք այն
 մասին, ինչ որ խոստացել էք, այն ժամանակ նա էլ
 ձեզ կը զօրացնէ և այնուհետև ո՛չ թէ ձեր մարմինը, այլ
 հոգին յաղթող կը հանդիսանայ: Եթէ Յիսուս փորձութեան
 մէջ կարիք ունեցաւ աղօթելու և հսկելու, որչափ ա-
 ւելի մենք: Եթէ Նրա հոգին մեր մէջ ընդունենք,
 մենք էլ կարող ենք յաղթել մարմնին: Այսպէս
 էլ մենք պէտք է վարուենք, եթէ կամենում ենք ճշ-
 մարիտ քրիստոնեաներ լինել: Եթէ մեզ կամ մեր մեր-
 ձաւորին վտանգ պատահելու լինի, մենք մեր մտքովն
 անգամ չպէտք է անցկացնենք՝ աղօթքով ստիպելու Աս-
 տուծուն, որ մեր ցանկութեանը բաւականութիւն տայ,
 այլ մենք ևս Քրիստոսի նման պէտք է ներկայացնենք
 մեր վիշտն ու նեղութիւնը ջերմեռանդ կերպով և Նրա
 նման ասենք. «բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս
 Գու»: Այնուհետև այդ վշտերն ու փորձութիւնները
 մեզ չեն ներկայանալ սարսափելի կերպարանքով:

№ 28.

ՅԻՍՈՒՍ ԿՍՅԻԱՓՍՅԻ ԵՒ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

I. Յիսուսին բերին Կայիափայ բաճա-
նայապետի տուն, ուր կազմուեց ծերակոյտի
ժողով: Եստ սուտ վկաներ դուրս եկան,
բայց չկարողացան ասել այնպիսի բան, որի
համար կարելի լինէր դատապարտել Նրան:
Այն ժամանակ Կայիափան հարցրեց Նրան.
«Ի՞նչ ես Քրիստոս՝ Աստու Որդին»: Յիսուս
պատասխանեց. «Ի՞նչ ասացիր, թէ ես եմ:
Եւ ասում եմ ձեզ, այսուհետեւ կը տեսնէք
Մարդու Որդուն նստած Աստու զօրու-
թեան աջ կողմը և եկած երկնքի ամպերի
վրայ»: Կայիափան պատառեց իր շորերը և
բացականչեց. «Էլ ի՞նչ վկաներ են մեզ հար-
կաւոր, դուք ինքներդ լսեցիք նրա բերա-
նից հայհոյութիւն Աստու զէմ: Ի՞նչպէս է
թւում ձեզ»: — Եւ մահապարս է, պատասխա-
նեցին ամենքը: Այս վճռից յետոյ ծառա-
ները դուրս բերին Յիսուսին բակը և ըս-
կսեցին նախատել: Ոմանք թրում էին Նրա
երեսին, միւսները շորը գլխին գցելով խը-
փում էին և ասում. «Ապա իմացիր, ո՞վ էր,

որ խփեց բեզ»: Յիսուս այս բոլոր նախա-
տինքը տանում էր համբերութեամբ: Այս
ժամանակ Պետրոսն ուրացաւ Յիսուսին:

Հրեաները Հռոմայեցոց իշխանութեան
տակ էին: Նրանք իրաւունք չունէին ոչ որքի
պատժել մահով առանց Հռոմայեցոց կա-
ռավարչի, որ այդ ժամանակ Պիղատոսն էր:
Այս պատճառով հետեւեալ օրը առաւօ-
տեան ծերակոյտի անդամները տարան Յի-
սուսին Պիղատոսի մօտ: Պիղատոսի հարց-
ման թէ ինչի՞ մէջ են մեղադրում Յիսու-
սին, պատասխանեցին. «Նա խռովում է
ժողովուրդը, Իրան թագաւոր է անուանում
և արգելում է հարկ տալ կայսրին»: Պիղա-
տոսը Յիսուսին առանձնապէս հարցնելուց
յետոյ՝ դուրս եկաւ ժողովրդի մօտ և ասաց.
«Ես ոչինչ յանցանք չեմ գտնում այս մար-
դու մէջ»:

Զատկի ածնին սովորութիւն ունէին
արձակել բանտարկուածներից մէկին, որին
ժողովուրդն ուզում էր, ուստի Պիղատոսը
հարցրեց. «Ո՞ւմն էք կամենում, որ արձակեմ,
Բարաբբայի՞ն թէ Յիսուսին»: Ժողովուրդն

աղաղակեց. «Քարաբբային»:— Իսկ ի՞նչ անենք Յիսուսին: «Խաչիր, խաչիր», աղաղակեց դարձեալ ժողովուրդը՝ դրդուած քահանաներից: Պիղատոսն ասաց. «Ես մահուան արժանի բան չեմ գտնում, կը խրատեմ և կ'արձակեմ»:

Ձինուորները տարան Յիսուսին այն տունը, ուր մեղապարտներին խրատում էին: Այնտեղ դժոխային գործիքներով չարչարելուց յետոյ՝ զինուորները սկսեցին նաև ծաղրել Նրան: Փշէ պսակ դրին գլխին, ծիրանի շորեր հագցրին և եղէզը ձեռքը տալով գալիս երկրպագում էին և ասում. «Ողջ լեր, թագաւոր հրէից»: Յետոյ ապտակ էին տալիս Նրան, թքում էին երեսին և եղէզն առնելով ձեռքից՝ նրանով ծեծում էին: Այս բոլոր անարգանքները Յիսուս համբերու թեամբ տանում էր: Պիղատոսը Յիսուսին այս ցաւալի դրուժեան մէջ դուրս բերել տուաւ ժողովրդի առաջ և ասաց. «Ահա մարդ»: Նա մտածում էր դրանով ժողովրդի գութը շարժել և ազատել, բայց ժողովուրդը նորից սկսեց գոռալ. «խաչիր, խա-

չիր, դրան»: Պիղատոսը պատասխանեց. «Առեք, տարէք սրան և ինքներդ խաչեցէք, ես սրանում ոչինչ յանցանք չեմ գտնում»: Ծերակոյտի անդամները պատասխանեցին. «Մենք օրէնք ունինք և նրա համեմատ դա պէտք է մեռնի, որովհետև իրան Աստու Որդի է համարում»: Իսկ ժողովուրդը գոռում էր. «Եթէ դրան արձակես, բարեկամ չես կայսեր»: Պիղատոսը տեսնելով, որ ոչինչ չէ օգնում և ժողովրդի մէջ խռովութիւնն աւելի է սաստկանում, վերցրեց ջուր և ձեռքերը լուանալով, ասաց. «Քաւուած եմ ես այդ արդար մարդու արիւնից»: Ժողովուրդը բացականչեց. «Թող դրա արիւնը մեր և մեր որդոց վրայ լինի»: Այն ժամանակ Պիղատոսը հաստատեց մահուան վճիռը և հրամայեց խաչել:

II. Ո՛ւր տարան Յիսուսին Գեթսեմանի պարտեզից: Ո՛վքեր հաւաքուեցին այս ժամանակ Կայիափայի տանը: Ի՞նչ էին ասում վկաները: Ի՞նչ հարցրեց քահանայապետը Յիսուսին և Սա ի՞նչ պատասխանեց: Ի՞նչ վճիռ տուաւ ծերակոյտը: Ո՛ւր և ինչպէս անցկացրեց Յիսուս գիշերը: Ի՞նչ բամբասանքներ էին անում Նրա մասին: Պիղատոսը ի՞նչ միջոցներ գործ դրաւ Յիսուսին ազատելու համար: Ի՞նչ բանից վախեցաւ, որ մատնեց Յիսուսին նրանց ձեռքը խաչելու:

Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) Քահանայապետն ամեն կերպ աշխատում է շուտով, հէնց գիշերը, քանի ժողովուրդը քնած է, ծերակոյտի ժողով կազմել և դատապարտել Յիսուսին, իսկ առաւօտեան վաղ Հռոմայեցի դատաւորին յանձնելով՝ մահուան վճիռ նշանակել տալ, որպէսզի, ինչպէս դատապարտուած, Նրան այլևս ոչ ոք չընդունէ ինչպէս Մեսիա: Յիսուսի այն խօսքը՝ թէ կը տեսնէք Մարդու Որդուն Հօր Աստծու աջ կողմը, երկնքի ամպերի վրայ նստած, նըշանակում է՝ դուք Ինձ կ'արհամարհէք և կը սպանէք, բայց Իմ սկսած գործը և Իմ մեսիսական կոչումը չէք կարող անհետ անել: Ամենակարող Աստուած կըտայ այն զօրութիւնը, որով կը տիրապետեմ բոլոր ազգերի սըրտերին, ահա, այսպէս կըլինի Իմ անտեսանելի գալուստը երկրիս վրայ, իսկ աշխարհի վերջում Ես կըգամ տեսանելի կերպով, պատած երկնային փառքով՝ դատելու բոլոր ազգերին: Քահանայապետը Յիսուսի այս խօսքերի մէջ վիրաւորանք է նկատում Աստծու դէմ և մահու վճիռ է կարգում, բայց հաւանական է, որ նա ներքուստ ուրախանում լինէր, որ գտաւ մի ելք արդարութեան և օրէնքի անունով հեռացնելու այդ վտանգաւոր Մարդուն: 2) Բարձրագոյն ատենի անգամները կայսեր տեղակալի մօտ են բերում Յիսուսին, որ դատէ և հաստատէ մահուան վճիռը, որովհետեւ իրանք իրաւունք չունէին: Պիղատոսը նրանց պատճառաբանութիւններն անբաւարար է գտնում Յիսուսին մահուան դատապարտելու համար: Փարիսեցիները շարունակ սկսում են ամբաստանել Յիսուսին՝ թէ Նա կամենում է թագաւոր լինել, ժողովրդին ապստամբեցնել Հռոմայեցոյ դէմ և արգելում է կայսեր հարկ տալ: Պիղա-

տոսը չէ հաւատում այս ամբաստանութեանը, թէև Յիսուսի մասին շատ բաներ էր լսել, բայց ոչ քաղաքական միտումներ: Այս ամբաստանութիւնը օտարոտի թուաց նրան, որովհետեւ մեղադրողները փարիսեցիներն էին, որոնց լաւ էր ճանաչում Պիղատոսը և գիտէր, որ նրանք իսկապէս Հռոմի հակառակ մարդիկ են. ուստի եթէ Յիսուսի մէջ նկատած լինէին այդպիսի բան, այդ նրանց սրտովը կը լինէր և ոչ թէ կը մտնէին Նրան, այլ ամենայն սիրով կը միանային հետը, որովհետեւ դրանք էին կազմում ազգային կոչուած կուսակցութիւնը, որ ճգնում էր Հռոմի լուծը թօթափել: Պիղատոսը հաստատապէս իմանում է, որ Նա յեղափոխական, ապստամբ չէ և փարիսեցիներն առ նախանձու են արել, խոստանում է խրատել և արձակել: Պիղատոսի բռնած գիրքից երևում է, որ այդ դատը դիւր չէ գալիս նրան, դատապարտել մեղադրեալին առանց հիմքի նա չէր կարողանում, միւս կողմից էլ չէր ուզում վիրաւորել երկրի մէջ կշիռ ունեցող քահանայապետներին և բարձրագոյն ատենի անդամներին և նրանց կամքը չկատարել: Այս պատճառով անհետատեսութեամբ միջին ճանապարհ է ընտրում՝ թէ ժողովրդին բաւականութիւն տալ և թէ արդարութիւնը ոտնակոխ արած չլինել: Նա ընտրում է մի ծանր յանցաւոր—մարդասպան և առաջարկում է Յիսուսի հետ՝ ըստ սովորութեան երկուսից մէկին արձակել: Ժողովուրդը՝ թելադրած քահանաներից, խնդրում է արձակել մարդասպանին, իսկ Յիսուսին խաչել: Պիղատոսը գործը վատ է տանում: 3) Մենք տեսնում ենք ժողովրդին փոփոխամիտ, շարժուն եղէգի նման, որին հողմը որ կողմն ուզում՝ ծռում է: Միքանի օր առաջ նա ովաաննա էր գոչում, իսկ այժմ՝ խաչի՛ր է պահան-

ջում: Այս կարճ ժամանակամիջոցում ժողովրդի սառե-
լու և անտարբեր վերաբերուելու պատճառն այն էր,
որ Յիսուս չհաստատեց նրանց սպասած երկրային թա-
գաւորութիւնը, ուրեմն արժանի է այդ պատժին. Նա
անգոր գտնուեց և ընկաւ հեթանոսների ձեռքը: Փա-
րիսեցիներն իմանալով ժողովրդի թույլ կողմը՝ զրգուել
էին նրան մինչև կատաղութեան աստիճան, որ թե-
թեամտութեամբ չէր հասկանում, թէ ինչ էր ասում, կամ
գործում: 4) Յիսուսի վարմունքի մէջ ոչինչ փոփոխու-
թիւն չէ նկատվում: Նա նոյն ձևով էր մտածում, խո-
սում և գործում, ինչպէս միշտ: Նա առանց երկիւ-
ղի գնում, ներկայանում է զատուորին, որից կա-
խումն ունէր Նրա մահն ու կեանքը: Միշտ խաղաղ-
հանգիստ կերպով ստիպում է այդ հեթանոսին ճանա-
չելու Իր անմեղութիւնը և Աստուածային վեհութիւնը:
Ստախոս ու զրպարտիչ հրեաների չարութեան դէմ միշտ
լուծւում էր արհամարհանքով և երկնային համբերութեամբ
ու հեզութեամբ տանում սոսկալի հարուածները,
տանջանքները և ծաղր ու ծանակը: Նրա համեստու-
թիւնն ու հոգու վեհութիւնը այսքան վշտերի մէջ՝
պէտք է վերագրել Նրան, որ Նրա մէջ է Աստուած.
իսկ ուր Աստուած կայ, այնտեղ խաղաղութիւն է տի-
րում: Յիսուս այդ վշտերի ժամանակ միայն մի հոգե-
կան անհանգստութիւն ունէր, այն է՝ Նա ցաւում էր
մարդկանց չարութեան վրայ, որոնք սիրոյ փոխարէն
ատելութիւն էին գործ դնում:

№ 29.

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

I. Զինուորները տարան Յիսուսին Գող-
գոթա սարը և այնտեղ խաչեցին: Նրա աջ
և ձախ կողմը խաչեցին նոյնպէս եր-
կու աւազակի: Յիսուսի խաչափայտի վրայ
գրուած էր՝ Յիսուս Նագովրեցի Թագաւոր Հրէից:
Երրորդ ժամն էր (մեր հաշուով առաւո-
տեան ինը ժամը), երբ խաչեցին Յիսուսին:
Նա ողորմաճաբար աղօթեց Իրան չարչա-
րողների համար. «Հայր, ներիր դրանց, ո-
րովհետեւ չեն իմանում, ինչ են անում»:

Յիսուսի թշնամիները խաչի վրայ էլ
հանգիստ չթողին Նրան: Քահանայապետ-
ները, զպիրները և ծերերը նախատում,
ծաղրում էին Նրան և ասում. «Եթէ դու
Աստուծու Որդի ես, իջիր խաչից և կը հաւա-
տանք բեզ»: Մինչև անգամ Յիսուսի հետ
խաչուած չարագործներից մէկն էլ սկսեց ար-
համարհել Նրան. «Եթէ դու ես Քրիստոս,
ազատիր քո անձը և մեզ»: Բայց միւս չարա-
գործը յանդիմանեց նրան. «Մի՛թէ չես վա-
խենում Աստուծոց, երբ դու էլ նոյն պատժի

մէջ ես. բայց մենք մեր գործերի արժանի
հատուցումն ենք ստանում, իսկ Սա ոչինչ
վատ բան չի գործել»: Այս ասելով՝ դարձաւ
դէպի Փրկիչը և խնդրեց. «Յիշիր ինձ, Տէր,
երբ կը գաս Քո արբայութեամբ»: Փրկիչը պա-
տասխանեց. «Ճշմարիտն եմ ասում բեզ, որ
այսօր իսկ կը լինես Ինձ հետ դրախտում»:

Վեցերորդ ժամին (12-ին ցերեկուայ)
խաւարը պատեց բոլոր երկիրը, արեգակը
դադարեց լոյս տալուց, աստղերը երևացին
երկնքում: Ժողովրդից շատերը երկիւղից հե-
ռացան խաչելութեան տեղից: Խաչի մօտ
կանգնած էր Տիրամայրը՝ Յիսուսի սիրելի
աշակերտ Յովհաննէսի և միքանի Գալի-
լիացի կանանց հետ: Յիսուս խաչից տեսաւ
Իր մօրը և ասաց՝ ակնարկելով Յովհաննէ-
սին. «Ահա բո որդին»: Ապա դառնալով դէ-
պի Յովհաննէսը՝ ասաց. «Ահա բո մայրը»:
Այդ ժամանակից Տիրամայրը Յովհաննէսի
մօտ էր ապրում:

Ինն ժամին (3-ին ճաշից յետոյ) Յիսուս
աղաղակեց. «Աստուած իմ, Աստուած իմ,
ինչո՞ւ թողիր ինձ»: Մահուան տազնապը և

ծարաւը տանջում էին Նրան: Նա ձայն
տուաւ. «Ծարաւ եմ»: Զինուորներից մէկը
թաց արաւ սպունգը քացախի մէջ և ե-
ղէգով ձօտեցրեց Նրա շրթունքներին: Յի-
սուս ճաշակեց քացախը և ասաց. «Ամե-
նայն ինչ կատարեալ է»: Յետոյ կանչեց.
«Հայր, Քո ձեռքն եմ աւանդում Իմ Հոգին»:
Եւ այս ասելով՝ խոնարհեցրեց գլուխը և աւանդեց
Հոգին»:

Այս ժամանակ տաճարի վարագոյրը
երկու մասն եղաւ, երկիրը շարժուեց, քա-
րերը պատառուեցին, գերեզմանները բաց ե-
ղան և շատ ննջեցեալների մարմիններ յա-
րութիւն առան: Հարիւրապետն ու զինուոր-
ները տեսնելով այս մեծ շարժումը՝ ասա-
ցին. «Ճշմարիտ որ Սա Աստծու Որդի էր»:
Իսկ ժողովուրդը կուրծքը ծեծելով վերա-
դարձաւ տուն:

II. Ո՞րը խաչեցին Յիսուսին. Ի՞նչ էր գրուած Յիսուսի
խաչի գլխին: Ո՞ր ժամին Նա խաչուեց, Ի՞նչ աղօթեց Յիսուս
Իրան խաչողների համար: Յիսուսի թշնամիները թողին արդեօք
Նրան հանգիստ խաչի վրայ: Ի՞նչ ծաղրածութիւններ էին ա-
նում: Ի՞նչ էին ասում Նրա հետ խաչուածները: Ի՞նչ պատաս-
խանեց Յիսուս աջակողմեան աւազակին: Ի՞նչ նշաններ եղան

Յիսուսի խաչելութեան ժամանակ, Յիսուսի խաչի մօտ սկզբեր կային կանգնած Նրա բարեկամներից: Ո՛ւմ հոգացողութեանը յանձնեց Յիսուս իր մօրը: Ի՞նչ էին Յիսուսի վերջին խօսքերը և ո՞ր ժամին Նա աւանդեց Հոգին: Ի՞նչ նշաններ եղան Նրա մահուան ժամանակ և ի՞նչ ասացին խաչի մօտ կանգնած հարիւրապետն ու զինուորները:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ Փրկիչը միանգամայն իր յօժար կամքով դիմում է դէպի Գողգոթա և մահ ընդունում, այլապէս եթէ Նա իր քարոզածները լետ էր վերցրել, ինչպէս և մեսիական կոչումը, կարող էր հաշտուել իր թշնամիների հետ և ազատուել: Բայց Նա այդ չարաւ: Իսկ եթէ դիմած լինէր այդ միջոցներին, հարկաւ իրաւունք կը տար՝ այլևս չհաւատալ իր քարոզած ճշմարտութիւններին և չհետևել իրան, այնուհետև ո՛չ քրիստոնէութիւն, ո՛չ եկեղեցի և ո՛չ ազգերի բարոյապէս վերածնումն կարող էր տեղի ունենալ: Միայն կամաւոր մահով կարողացաւ ցոյց տալ աշխարհին, թէ ինչ որ ուսուցանում է և ինչպիսի կեանք որ Ինքը վարում է, այն է միայն կատարեալ ճշմարիտը, ուղիղը և Աստուծոն հաճելին: Նա խաչի վրայ աղօթքով էր պատասխանում այն բոլոր բռնութիւններին, նախատինքներին ու չարչարանքներին, որ հասցնում էին Նրան շրջապատողները: Նա շարունակ լռելեայն տանում էր սոսկալի վշտերը խաչի վրայ: Ո՛չ մի տրտունջ և ո՛չ մի անէծք դուրս չեկաւ Նրա բերանից. Նա մրմնջում էր և այդ մրմունջքը աղօթք էր առ Աստուած՝ կուրացած ամբօխի համար: Նրա ցաւը հետզհետէ սաստկանալով ստիպում է աղաղակել առ Աստուած՝ ինչո՞ւ Նա բարձի

թող է արել Իրան: Այս աղաղակով չպէտք է հասկանալ, որ Աստուած մոռացել է Յիսուսին: Աստուծու Հոգին ամեն տեղ է, նոյնպէս և Նրա կամքը, առանց Նրա կամքի ոչինչ չէ լինում: Այլ այդ գանգատը ցոյց է տալիս Յիսուսի զգացած ցաւի ամենաբարձր աստիճանը, որ աւելի էր, քան թէ Գեթսեմանի պարտէզում: Սա Նրան պատահած ամենամեծ փորձութիւնն էր, բայց Նա այս անգամ էլ յաջող դուրս եկաւ, հոգին դարձեալ զօրեղ հանդիսացաւ մարմնից: Վերջին խօսքը արտասանելուց առաջ Փրկիչն ասում է. «Ամենայն ինչ կատարեալ է»: Այս նշանակում է՝ ինչ որ երկրիս վրայ պէտք է գործել էի, վերջացրել եմ: Հոգեպէս սուրբ, մաքուր կեանք եմ վարել, շատերի մէջ նոյնպիսի հոգի եմ ներշնչել: Ես Աստուածային գործի հիմքը դրել եմ երկրի վրայ, մարդկանց փրկել և երկնային արքայութիւնն եմ հրաւիրել. այժմ հոգեպէս ուրախ՝ գործի յաջողութեան համար, յալթանակով գալիս եմ Քեզ մօտ: 2) Ժամանակի սովորութեան համաձայն յանցաւորների մահուան պատճառը գրում էին տախտակի վրայ և խաչի վերին մասում կպցնում, որ ամենքն իմանան: Յիսուսի խաչի տախտակի վրայ գրած էր երեք լեզուով. ա) Եբրայեցերէն՝ որ ժողովրդի գործածական լեզուն էր և որով Յիսուս քարոզում էր. սրանից պահուած է Աւետարանի մէջ մի քանի խօսք, որ. ելի, ելի, տալի՜թա կու՛մի, եփփաթա և այլն. բ) Յունարէն՝ որ բարձր, կրթուած դասակարգի լեզուն էր և գ) Դաղմասերէն (լատիներէն)՝ որ տիրող ազգի—Հռոմայեցոց լեզուն էր: Սրանից երևում է, որ այն ժամանակ Պաղեստինում երեք տիրապետող լեզու է եղել: 3) Փրկիչը վերջին եօթը խօսքը՝ «Հայր, Քո ձեռքն եմ աւանդում իմ Հո-

գին», արտասանելով, աւանդում է Հոգին հանգիստ և խաղաղ կերպով: Նրա արիւնաներկ մարմինը մնում է կախ ընկած խաչի վրայ՝ փշեայ պսակը գլխին: Նա Իր երկրաւոր մարմինը թողնում է երկրիս վրայ, իսկ Ինքը տեղափոխվում երկրային բնակարանից երկնայինը և տանում Իր հետ փրկութեան երախայրիքը—աւազակի հոգին: Տաճարի վարագոյրի պատառուկը նշանակում է, թէ այժմ ամեն ոք կարող է անձամբ գնալ Աստուծու մօտ, այլևս քահանայապետի և զոհի կարևորութիւն չկայ: Երկրի շարժուելը, ժայռերի պատառուկը և գերեզմանների բացուելը ցոյց են տալիս նախ՝ Նրա Աստուածորդի լինելը և երկրորդ՝ գլորում, հեռացնում է յանցաւոր սրտերից մահուան երկիւղը, որ ծանրանում, մահացնում և անընդունակ էր դարձնում զղջման և ապաշխարութեան համար, և պատառում, դուրս է բերում այդ յանցաւորներին իրանց սրտի գերեզմաններից նոր կեանքի համար: 4) Յիսուս մարդկանց մեղքերի համար մեռաւ: Եթէ Նա չմեռնէր, մենք ամենքս էլ նոյն մեղքի մէջ կը մնայինք և մեր սիրտն էլ նոյն մեղքի մէջ հետզհետէ կը մեռնէր: Նա մեռաւ մեր փոխարէն, որպէսզի մեզ ազատէ հոգեկան մահից: Նա անչափ սիրեց մեզ. այդ երևում է նրանից, որ Իր ամենաթանկագին ունեցածը—Իր կեանքը զոհեց մեր բարեկեցութեան և երջանկութեան համար: Յիսուս ապրեց մեզ համար, մենք էլ պէտք է ապրենք Նրա համար. Նա մեռաւ մեզ համար, մենք էլ պատրաստ պէտք է լինինք՝ մեռնելու Նրա համար:

№ 30.

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

I. Յիսուսի մահուան երեկոյեան (ուրբաթ)՝ որ սկսվում էր մեծ շաբաթը, ծերակոյտի անդամները չկամենալով թողնել խաչերի վրայ խաչուածների մարմինները, խնդրեցին Պիղատոսին՝ թոյլ տալ ջարդելու նրանց սրունգները, որպէսզի շուտ մեռնեն: Պիղատոսի հրամանով զինուորներն եկան Գողգոթա և ջարդեցին աւազակների սրունգները. բայց երբ նրանք մօտեցան Յիսուսին, տեսան, որ Նա արդէն մեռել է, ուստի և չջարդեցին Նրա սրունգները, միայն նրանցից մէկը զեղարդով խոցեց Նրա կողը և խոցուած տեղից արիւն և ջուր դուրս եկաւ:

Շուտով սրանից յետոյ Պիղատոսի մօտ եկաւ ծերակոյտի անդամ Յովսէփ Արեմաթացին և խնդրեց թոյլ տալ իրան՝ իջեցնելու խաչից Յիսուսի մարմինը և թաղելու. Պիղատոսը թոյլ տուաւ: Այս ժամանակ Յովսէփը բերաւ թաղման կտաւը, իսկ Նիկողիմոսը՝ որ Յիսուսի ծածուկ աշակերտն

էր, զմուռ և հալուէ: Նրանք իջեցրին Յիսուսի մարմինը խաչից, օծեցին Նրան անուշահոտ իւղով, պատեցին կտաւով և թաղեցին Գողգոթայից մօտիկ, Յովսէփի պարտիզում՝ մի նոր գերեզմանի մէջ, որ շինել էր իր համար, իսկ գերեզմանի դուռը ծածկեցին մի մեծ քարով: Այն ժամանակ մի քանի Գալիլիացի կանայք, որոնք չկարողացան իրանց կողմից կատարել, սովորութեան համաձայն, ինչ որ հարկաւոր էր, շտապեցին քաղաք, որպէսզի մինչև տօնի սկսուելը գնեն անուշահոտ խունկ և իւղ՝ Յիսուսի մարմինը օծելու համար:

Շաբաթ առաւօտեան Յիսուսի թշնամիները՝ քահանայապետները, կարգացողներն ու ծերերը, եկան Պիղատոսի մօտ և խնդրեցին նրան, որ հրամայէ պահպանել Նրա գերեզմանը մինչև երրորդ օրը, որպէսզի Նրա աշակերտները չգան գիշերը և չգողանան Նրա մարմինն ու տարածեն ժողովրդի մէջ, թէ Նա յարութիւն առաւ: Պիղատոսը թոյլ տուաւ և նրանք կանգնացրին պահապաններ ու գերեզմանն էլ կնքեցին:

II. Նրկա՛ր մնացին խաչուածների մարմինները խաչի վրայ: Ո՛վ իրաւունք տուաւ իջեցնել խաչից նրանց: Ի՞նչ արին, որ շտապեցնեն նրանց մահը: Ինչո՞ւ չջարդեցին Յիսուսի սրունդները: Ինչո՞վ հաւատացին զինուորները, թէ Յիսուս արդարև մեռած է:

Ո՞վքեր իջեցրին Յիսուսի մարմինը խաչից և ս՛ւմ թոյլ տուութեամբ: Ո՛ւր թաղեցին Քրիստոսին: Բացի Յովսէփից և Նիկողիմոսից էլի ո՞վքեր էին ներկայ: Կատարեցին արդեօք իւղաբեր կանայք իրանց կողմից՝ պահանջած սովորութիւնները: Ի՞նչ մտածեցին անել:

Ի՞նչն էր անհանգստացնում Յիսուսի թշնամիներին թաղելուց յետոյ: Ի՞նչ արին նրանք, որ Յիսուսի մարմինը չյափշտակուի:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք.
 1) Յովսէփ Արեմաթացին՝ որ Յիսուսի ծածուկ աշակերտն էր և ինքն արդար ու բարեպաշտ, իրաւունք է խնդրում Պիղատոսից՝ Յիսուսի մարմինը իջեցնելու և թաղելու: Նա հետևող էր Խաչեալի վարդապետութեան, իսկ այսպիսի մի քաջ, կարող էր Բարձրագոյն Ատենի անդամների վրէժխնդրութիւնը շարժել իր դէմ. բայց այն սէրը, որ նա ունէր դէպի Յիսուս, ամեն ինչ մոռացնել էր տուել: Գուցէ նա շատ անհանգիստ էր, որ ոչնչով չէր կարողանում իր Վարժապետի դատի ժամանակ՝ իբրև ծերակոյտի նշանաւոր անդամ, օգնել Նրան. բայց այլևս չէ կարողանում չլսել իր ներքին ձայնին, որ ստիպում է նրան աշխարհի առաջ խոստովանել Փրկչին և իր թոյլ հաւատը զօրացնել: Այս հաւատը դէպի Յիսուս մեծ է, որովհետև Յիսուս՝ Ատենի անդամներից իբրև Աստծուն հայհոյող է դատապարտուել, իսկ այժմ Յով-

սէփը վստահանում է մի այնպիսի անձի ուղղութեան համակիր ներկայանալ: Յովսէփի օրինակին հետևում է և վախկոտ Նիկողիմոսը. սա՛ քանի Յիսուս կենդանի էր, ծածուկ և քաշուած էր պահում իրան, բայց այժմ Նրա մահուան երեկոյին՝ նա էլ կարեկցաբար է վերաբերվում և շտապում է դէպի Խաչեալը՝ կամենալով իր առատաձեռն արքայական ընծայով մասնակցել թաղմանը: Այն հաւատը,—որ երբեմն ծածուկ, գիշեր ժամանակ տանում էր նրան Փրկչի մօտ, այժմ աստիճանաբար մանանելի հատի նման աճել, հասել էր այն հաստատ համոզման, որ առանց երկիւղի,—յայտնի կերպով տանում է Փրկչի մօտ՝ իր ցաւակցութիւնն ու յարգանքը մատուցանելու: Այս երկու հարուստ և գիտուն հաւատացեալները՝ խորին վշտի և ջերմ կարեկցութեան շնորհիւ չարագործի պէս մեռնող Յիսուսին թաղում են փառաւորապէս: Խաչելութեան տեղին մօտիկ՝ Յովսէփ Արեմաթացին ունէր պարտէզ, որի մէջ պտորաստել էր իր համար նոր գերեզման, այնտեղ Աւագ-Ուրբաթ երեկոյեան՝ թաղում է շտապով: Փրկչի սիրողները հետեւեալ օրը—շաբաթ՝ անհանգիստ են անցկացնում, որովհետև նա վշտի և յուսահատութեան օր էր: 2) Յիսուսի սրունքները չեն ջարդում, այլ միայն Նրա կողն են ծակում, որից արիւն և ջուր է դուրս գալիս: Սրանով կատարվում է այն մարգարէութիւնը, թէ «Նրա ոսկրները չեն փշրուել», և թէ «կը նայեն այնտեղ, որ խոցեցին»: Կողից բղիած արիւնը՝ հաղորդութեան, իսկ ջուրը՝ մկրտութեան ս. խորհրդի նշան է ընդունում մեր Հայաստանեայց ս. եկեղեցին: Յիսուսի մահը սարսափելի հարուած էր Եւ սիրելի աշակերտների և հետևողների համար: Ամեն հրեայ ուրախութեամբ տօնում էր գատ-

կական մեծ տօնը, այն ինչ նրանք մնացել էին շուրաօ և տիրած՝ որք մանուկների նման:

№ 31.

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

I. Շաբաթ օրից յետոյ, գիշերը, պահապանները՝ որոնք կանգնած էին Յիսուսի գերեզմանի մօտ, զգացին մեծ շարժ և տեսան հրեշտակին սպիտակ, փայլուն շորերի մէջ, որ դէն գլորելով գերեզմանի քարը, նստեց նրա վրայ: Պահապանները սարսափած այս տեսիլքով՝ դողացին և փախան քահանայապետների մօտ և նրանց պատմեցին եղածների մասին: Քահանայապետները կաշառեցին նրանց և սովորեցրին տարածել, թէ գիշերը՝ իրանց քնած միջոցին աշակերտները եկել, գողացել են Յիսուսի մարմինը:

Այս ժամանակ Գալիլիացի կանայք— Մարիամ Մագթաղինացին, Մարիամ Յակովբեան, Սողոմէ և ուրիշները եկան Քրիստոսի գերեզմանի մօտ, որպէսզի օժեն իւրով Նրա մարմինը: Նրանք ոչինչ չէին իմանում պատահածի մասին, չգիտէին մինչև ան-

գամ, թէ գերեզմանի մօտ պահապաններ
կան կանգնած: Նրանք մտան պարտէզ և
տեսան, որ քարը դէն է գլորուած գերեզ-
մանից: Մարիամ Մագլթաղինացին երկիւ-
ղից վազեց քաղաք և ասաց աշակերտնե-
րին. «Հանել են իմ Տիրոջը գերեզմանից և
չգիտեմ, ուր են դրել Նրան»: Ուրիշ կա-
նայք (իւղաբեր) մօտեցան գերեզմանին և
տեսան հրեշտակներ, որոնք աւետեցին
նրանց, թէ Յիսուս յարութիւն առաւ մե-
ռերներից: Վերադառնալով Երուսաղէմ՝
նրանք ճանապարհին ոչ ոքի ոչինչ չասացին,
այլ պատմեցին միայն աշակերտներին, ինչ
որ տեսել և լսել էին. բայց աշակերտները
ևս չհաւատացին, մինչև իրանք անձամբ
չտեսան Յիսուսին յարութիւն առած:

Շաբաթուայ առաջին օրը՝ որ անուան-
վում է միաշաբաթ (կիրակէ), առաւօտեան
Յիսուս երևաց Մարիամ Մագլթաղինացուն
Յովսէփի պարտէզում: Ճաշից յետոյ ճա-
նապարհորդեց Իր աշակերտների յետ մին-
չև Էմմաուս գիւղը, իսկ երեկոյեան երևաց
Երուսաղէմում բոլոր աշակերտներին՝ բացի

Թովմայից: Մի շաբաթից յետոյ էլ նորից
երևաց աշակերտներին, երբ նրանց հետ էր
նաև Թովմասը: Զատիկի տօնից յետոյ աշա-
կերտները գնացին Երուսաղէմից Գալիլիա
և այնտեղ տեսան իրանց Ուսուցչին Գա-
լիլիայի ծովի ափում: Գալիլիայի մէկ լե-
ռան վրայ դարձեալ երևաց ոչ միայն ա-
ռաքեալներին, այլև ուրիշ հաւատացեալ-
ներին՝ մօտ 5000 հոգու: Բացի սրանից Նա
առանձնապէս երևաց Պետրոսին և Յակով-
բոսին:

Այսպէս Յիսուս Իր յարութիւնից յետոյ
բառատուն օրուան ընթացքում բազմիցս ե-
րևաց Իր աշակերտներին և զրուցեց նրանց
հետ երկնքի արքայութեան մասին: Նա
հաւաստիացնելով նրանց, որ իսկապէս յա-
րութիւն է առել, ցոյց տուաւ Իր վերքերը
և նրանց հետ կերակուր կերաւ: Վերջապէս
Նա պատուիրեց նրանց գնալ ամեն աշխարհ,
բարոգել Աւետարանը բոլոր ազգերին և
մկրտել՝ «Յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ»
և խոստացաւ միշտ նրանց հետ լինել մին-
չև աշխարհի վերջը:

սիրով և հաւատով: Մեր օրերում ևս կան բազմաթիւ թովմայի հաւատ ունեցողներ, որոնք առանց շօշափելու չեն կամենում հաւատալ Յիսուսի յարութեանը, բայց կան և շատերը, որոնց հոգու մէջ անկասկած կայ Նրա յարութիւնը, որ ներգործում է իւրաքանչիւրի հաւատի վրայ և ստիպում կրկնելու՝ «Դու ես Քրիստոս, կենդանի Աստուծու Որդին»: Փրկչի յարութեամբ հաստատվում է անմահութեան գաղափարը և յաւիտենական կեանքի գոյութիւնը, որով և մեզ աւետում, թէ մի օր մենք էլ պէտք է նորոգուենք և յաւիտենական անմահ մնանք: Եւ այդ միայն այն ժամանակ տեղի կ'ունենայ, երբ մենք վարենք այնպիսի կեանք, որ նման լինի Յիսուսի երկրաւոր կեանքին, երբ մեր հին՝ սիրուց գուրկ կեանքը փոխենք և սիրոյ կեանք զգենունք: Ով այսպիսի կեանք է վարում, նա միայն կարող է յուսալ, որ նորոգուած կեանքում էլ սրա նման կեանք կ'ունենայ:

№ 32.

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ ԵՒ ՀՈԳԵԳԱԼՈՒՍԸ

I. Պենտեկոստէի տօնի պատճառով Յիսուսի աշակերտները եկան Երուսաղէմ: Քառասներորդ օրը Զատիկից յետոյ՝ նրանք ժողովեցան մէկ տան մէջ: Այդտեղ վերջին անգամ Յիսուս երևաց նրանց և ասաց. «Ես կ'ուղարկեմ ձեզ այն, ինչ որ խոստացաւ Իմ

Հայրը: Դուք մնացէք Երուսաղէմում, մինչև ասանաք երկնքից զօրութիւն: Դուք կ'ընդունէք այդ զօրութիւնը, երբ կ'իջնի ձեզ վրայ ս. Հոգին և կը լինիք Ինձ համար վրկաներ բոլոր երկրում»:

Սրանից յետոյ Քրիստոս տարաւ նրանց Բեթանիա, ապա Զիթենեաց սարի գլուխը, ուր օրհնելով նրանց՝ համբարձաւ երկինք: Մինչդեռ աշակերտները նայում էին՝ ամպը ծածկեց Նրան: Այս ժամանակ երկու հրեշտակ երևացին և ասացին. «Քալիլիացի մարտակ երևացին և ասացին. «Քալիլիացի մարտակ, ինչո՞ւ էք զարմացած նայում դէպի երկինք, այս Յիսուս, որ վերացաւ դէպի երկինք, նոյն ձեռով կը գայ, ինչպէս զնաց»: Աշակերտներն ուրախ վերադարձան Երուսաղէմ: Նրանք ժողովուած մի տան մէջ անց էին կացնում իրանց ժամանակը ազօթքով և անհամբերութեամբ սպասում էին սուրբ Հոգուն: Եուսով մասնիչ Յուդայի տեղը նորեցին Մաղաթիային առաքեալ:

Հասաւ Պենտեկոստէի տօնը: Բոլոր աշակերտները ժողովուած էին: Այնտեղ էր և Աստուածամայրը: Օրուայ երրորդ ժամին

(Գին առաւօտեան) յանկարծ լուեց մի ձայն՝ սաստիկ հողմի նման և լցրեց այն տունը, ուր նստած էին: Հաւատացեալների սիրտը լցուեց անսովոր ուրախութեամբ: Սուրբ Հոգին հրեղէն լեզուների նման իջաւ իւրաքանչիւրի գլխին և լցուեցան ամենքը ս. Հոգով ու սկսեցին խօսել զանազան լեզուներով:

Ժողովուրդը լսելով այս ձայնը՝ հաւաքուեց այն տան մօտ, ուր Յիսուսի աշակերտներն էին: Պետրոս առաքեալը բացատրելով նրանց այս հրաշքը՝ ասաց. «Հրեաներից խաչուած Յիսուսը Մեսիան էր. Նա յարութիւն առաւ, իսկ զանազան լեզուներով իրանց խօսելը՝ ս. Հոգու շնորհքովն է, որ այսօր իջաւ իրանց վրայ»: Այս քարոզից յետոյ երեք հազար հոգի հաւատացին Յիսուսին և մկրտուեցին:

Այսպէս սկսուեց հաստատուել երկրում Աստուծոյ թագաւորութիւնը, այն է՝ Քրիստոսի եկեղեցին, որի առաջին առաջնորդերն էին առաքեալները, իսկ յետոյ նրանց ընտրած եպիսկոպոսներն ու երէցները:

II. Յիսուս ինչ ասաց իր աշակերտներին, երբ վերջին անգամ երևաց նրանց: Ո՛ւր գնաց նրանց հետ Երուսաղէմից: Ի՞նչ արաւ Նա Ձիթենեաց սարի վրայ, ի՞նչ ասացին հրեշտակները:

Ո՛ւր մնացին Յիսուսի աշակերտները: Ինչո՞վ էին պարապում նրանք և ինչի՞ էին սպասում: Ե՞րբ իջաւ ս. Հոգին և ինչ նշանով: Ո՞վ առաջին անգամ սկսեց քարոզել և ո՞րքան հոգի հաւատացին Յիսուսին ու մկրտուեցին: Ի՞նչ հիմնեցին առաքեալներն իրանց քարոզութեամբ: Ո՞վքեր էին անդրանիկ հովիւները և ո՞վքեր՝ նրանց յաջորդները:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ Յիսուս յարութիւնից յետոյ քառասուն օր մնում է երկրիս վրայ և իր աշակերտներին հարկաւոր հրահանգներ տալով՝ զօրացնում է նրանց հաւատը և երկնային թագաւորութեան վրայ ունեցած թերի հասկացողութիւնները լուսաբանում. իսկ յարութեան քառասներորդ օրը խօսելով վերջին անգամ նրանց հետ՝ պատուիրում է Երուսաղէմից չհեռանալ, այլ սպասել ս. Հոգու գալստեան, որ պէտք է մխիթարէր և հոգով զօրացնէր նրանց ապագայ առաքելական պաշտօնի մէջ: Այն ոյժն ու զօրութիւնը, որով նրանք այդ ծանր պաշտօնը պէտք է կատարէին, Յիսուսի խոստացած ս. Հոգին պէտք է տար, այն Հոգին, որ երկրիս վրայ Յիսուսի մէջ աւելի փառաւոր և աւելի մեծ գործեր կատարեց: Այդ ս. Հոգին Յիսուս տուաւ իր աշակերտներին, իսկ սրանք էլ նոյն Հոգին պէտք է բաշխէին մարդկութեանը. ահա՛ սրա մէջ էր կայանում առաքեալների ապագայ աշխատանքը, ահա՛ թէ ինչ պէտք է լինէր նրանց գործունէութիւնը: Բայց որպէսզի մարդ-

կանց ներքին փոփոխութիւնն էլ արտաքուստ յայտնի լինէր, պէտք է որ նաև մկրտուէին: Ով արտաքուստ մկրտութեան միջնորդութեամբ և ներքուստ հաւատոյ զէնքով՝ Յիսուսին չէ պատկանում, նա անկարող է երանելի և երջանիկ լինել: 2) Մեր և համբարձեալ Փրկչի մէջ, որ նստած է Հօր Աստծու աջ կողմը, մի ամպ կայ և այդ ամպը մինչև օրս էլ կանգնած է, որի միջեց միայն հաւատոյ աչքն է կարողանում անցնել և տեսնել Նրան: Յիսուս մեզանից հեռանալով՝ տուաւ մեզ ս. Հոգու շնորհք, որով կարող ենք Նրան մեր մէջ ունենալ, իսկ մենք էլ աղօթքի միջոցով Նրան մօտիկ լինել: Չպէտք է մոռանանք, որ Նա խոստացել է մինչև աշխարհի վերջը մեզ հետ լինել: Եւ Նա թէև աշխարհումս միայն 33 տարի ապրեց և Աստծու արքայութեան Աւետարանը միայն երեք տարուան ընթացքում քարոզեց, բայց յաւիտեանս. քանի որ դարերի ընթացքը չի վերջանայ, քանի որ երկիրն ու երկինքը գոյութիւն կ'ունենան, Նրա ճշմարիտ և հաւատարիմ որդիքը Նրա անունով կը գտնեն խաղաղութիւն և թողութիւն: 3) Փրկչի անթիւ աշակերտները քարոզեցին Աւետարանը երկրագնդիս ամենանշանաւոր ազգերին և քրիստոնեայ դարձրին՝ մրկրտելով նրանց՝ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Միլիօնաւոր սրտեր հաւատացին Քրիստոսին և ընդունեցին այն ամենը, ինչ որ Նա պատուիրել էր: Եւ այն թագաւորութիւնը, որ Նա կամենում էր, արդէն գոյութիւն ունի և Նրա պաշտպանութեան ներքոյ յաղթական ձևով յառաջ է գնում: Այդ թագաւորութիւնը ոչ արտաքին փայլով և ոչ աշխարհային ձևով, այլ ներքին և հոգեպէս կարելի է նկատել մարդկանց սրտերի մէջ: 4) Յիսուսի Համբարձումն այն նշանակութիւնն ունի,

որ պարզուեց, թէ Նա երկնքիցն էր եկած, հետևապէս և Նր հետևողներին երկինք պէտք է տանի: Միևնոյնը կարելի է ասել և մեզ համար: Մենք էլ մեր մահուանից յետոյ պէտք է երկինք համբառնանք, որովհետև մեր ճշմարիտ և յաւիտենական հայրենիքը երկնքումն է, Հօր Աստծու մօտ, ուր Փրկչին է: Չգիտենք որոշակի տեղը, թէ ո՛ւր է այդ հայրենիքը, որովհետև Աստուած ամեն տեղ է, բայց հաստատ կարող ենք ասել, որ մի այդպիսի հայրենիք ունինք, ուր բազմաթիւ և գեղեցիկ բնակարաններ կան մեզ համար: Առաջ Յիսուս ցիկ բնակարաններ կան մեզ համար: Առաջ Յիսուս գնաց այդ հայրենիքը: Չպէտք է կարծել, որ այդ երջանկութիւնը անպատճառ նրան է պատկանում, ով մկրտուել է Յիսուսի անունով, հաւատում է Նրան և քրիստոնեայ անուն է կրում. ոչ, այլ ով այստեղ Յիսուսի համար է ապրում: 5) Մենք տեսնում ենք որ Փրկչի խոստման համաձայն՝ մխիթարիչ ս. Հոգին իջնում է աշակերտների վրայ, տալիս է նրանց կարողութիւն և շնորհք յիշելու այն, ինչ որ Փրկչին աւանդել էր նրանց: Ծալի է նաև կարողութիւն զանազան լեզուներով խօսելու և բժշկութիւններ անելու: Բացվում են նրանց մտաւոր աչքերը և աներկիւղ քարոզում են կենաց բանը—Աւետարանը: Այդ սուրբ Հոգու շնորհքով էր, որ Յիսուսին մի ժամանակ ուրացող Պետրոսը՝ մի քարոզով 3000 հոգի է որսում—դարձնում դէպի Նա և մկրտում: Եւ այսպէս օրէցօր Աստծու բանն աճում, մկրտում: Եւ այսպէս օրէցօր Աստծու բանն աճում, զօրանում է և հաւասացեալների թիւը շատանում: Այն մարդիկ, որոնք մի ժամանակ երկչոտ էին, թագնվում էին հրեաներից և նզովում մինչև անգամ իրանց ուսուցչին, այժմ կրակոտ լեզուով՝ աներկիւղ քարոզում են Նրա վարդապետութիւնը և եկեղեցիներ հաստա-

տում: Եւ Յիսուսով սկիզբն առած այս մասնաների
 Հատը, Նրա աշակերտների և սրանց յաջորդների եռան-
 դուն աշխատութեամբ ու անձնուիրութեամբ այնքան
 մեծացաւ, որ քրիստոնեայ ամբողջ ազգեր, թագաւորու-
 թիւններ կազմեց, և կը դայ մի ցանկալի ու փրկաւէտ
 ժամանակ, երբ Փրկչի ասածի նման՝ ամբողջ աշխարհս
 կը լինի՝ մի հօտ և մի հովիւ:

Վ Ե Ր Զ




Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

		Տ Վ Ո Ւ Ա Ց Է	Պ Է Տ Ք Է Լ Ի Ն Ի
Երես	14	տող 8	արդրանիկ
"	16	" 20	քաքաքում
"	18	" 9	չզպարտէք
"	25	" 6	Աւետարանին
"	65	" 11 4 20	բոլոր
"	"	" 15	տեսում է
"	66	" 9	յանձնեց
"	67	" 12	տպաւորութիւն
"	"	" 27	անդրուկի
"	68	" 21	արդարութեան
"	79	" "	հարսի
"	82	" 2	երկնային
"	85	" 8	հաղերձեալում
"	87	" 20	յանձրեց
"	89	" 11	մնալու
"	94	" 20	վրանց
"	"	" 4	նախաձում



Հ Ա Ր Պ Ն Ե Գ Ե Գ Ե Գ

Հ Ա Ր Պ Ն Ե Գ Ե Գ Ե Գ	Հ Ա Ր Պ Ն Ե Գ Ե Գ Ե Գ	Հ Ա Ր Պ Ն Ե Գ Ե Գ Ե Գ	Հ Ա Ր Պ Ն Ե Գ Ե Գ Ե Գ
1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12
13	14	15	16
17	18	19	20
21	22	23	24
25	26	27	28
29	30	31	32
33	34	35	36
37	38	39	40
41	42	43	44
45	46	47	48
49	50	51	52
53	54	55	56
57	58	59	60
61	62	63	64
65	66	67	68
69	70	71	72
73	74	75	76
77	78	79	80
81	82	83	84
85	86	87	88
89	90	91	92
93	94	95	96
97	98	99	100



<< Ազգային գրադարան

NL0151357

ВНЕДНОУЧЕНА
ИНСТИТУТ
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

арм-к
2876

ՄԵՐ ԱՇԽԱՏԱՍԻՈՐԻԹԻՒՆՆԵՐԸ

1. Գասազիրք Հայկ. ձայնագրութեան, գ. տպագրութիւն (սպառուած). 60 կ.
 2. Մանկական ձայնագրեալ երգարան, ա. տպագրութիւն 40 կ.
 3. Աղբայրն ձայնագրեալ երգարան, ա. տպագրութիւն (սպառուած). 80 կ.
-
4. Գասազիրք կրօնի, ա. գրքոյկ, գ. տպագրութիւն 20 կ.
 5. Գասազիրք կրօնի, բ. գրքոյկի ա. մասը. . . 30 կ.
 6. Գասազիրք կրօնի, բ. գրքոյկի բ. մասը. . . 30 կ.

Շուտով մամուլի տակ կը մտնի՝ Գասազիրք կրօնի գ. գրքոյկը:

Վաճառվում են Թիֆլիզի «Կենդրոնական գրավաճառանոցում» և աշխատասիրոյի մօտ՝ Тифлисе.

Протоіерею Езнику Ерзинкянцъ.